



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



123

111

2408

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ

2408

Ք Ս Ա Ն Ա Մ Ե Ա Յ

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Բ

Սանատարեան Վարժարանի

14124

1881 - 1901



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ

1903



Երեւանի Գեորգիա-Մարիա Կոնստանտինոպոլսեան
 15 օրաց 1911 թ. Բ. Ա. Կոնստանտինոպոլսեան
 Կոնստանտինոպոլսեան Գեորգիա-Մարիա
 Կոնստանտինոպոլսեան Կոնստանտինոպոլսեան
 Կոնստանտինոպոլսեան Կոնստանտինոպոլսեան

Մ Ա Ղ Ա Կ Ի Ա Ե Ա Ռ Ա Յ Յ Ի Ս Ո Ւ Ս Ի Ք Ի Ր Ս Ո Ս Ի .
 Ո Ղ Ո Ր Մ Ո Ւ Ք Ե Ա Մ Բ Ա Ս Յ Ո Ւ Ե Ո Յ Ե Ի Շ Ն Ո Ր Զ Ի Ի Ս Ո Ւ Բ Զ Ո Ւ Կ Ո Ւ Ն
 Ե Ի Կ Ա Մ Ո Ւ Ա Ձ Գ Ի Լ Ա Բ Ե Կ Ո Ւ Ս Կ Ո Ւ Ո Ս Կ Ո Ս Տ Ա Լ Ե Լ Ո Ւ Կ Ո Ւ Ս Ո Յ
 Ե Ի Պ Ա Տ Բ Ա Մ Բ Զ Ա Յ Ո Յ Ք Ո Ւ Բ Բ Ի Ո Յ . Հ ա մ օ Ր Է Ն ա զ զ ա յ ի Ն Պ ա Տ
 ու ա Ր Ժ ա Ն Ժ յ զ զ ա յ Ն Ե Խ ա Ր Ի զ զ ա յ Ն , Խ Ն ա մ ա կ ա լ ու թ ե ա Ն ց Ե Լ Ո զ ա
 ք ա Ր ճ ու թ ե ա Ն ց ո՞ր ի Մ ա յ Ր ա ֆ ա ղ ա ֆ ի ա Ե Ի թ ա ա ա Ո Ա ա Տ Ի ա Ր ֆ ու
 թ ե ա Ն ա մ ե Ր յ Ե ա Ր Տ ա ֆ Ո յ , յ զ ջ ու Ն ի ս ա ս ի Ր յ Ե մ ա ղ Ր ա մ յ օ ֆ օ Ր ճ Ն ու
 թ ե ա Ն ց յ ա յ Տ ա Ն Ն Բ Բ :

Նուիրական պարտիք են եղեալ ի վերայ երախտաւորելոց Ե
 բարերարելոց, պատուել Ե մեծացուցանել զյիշատակ երախտաւո
 րաց Ե բարերարաց՝ ըստ ամենայն պայմանաց, Ե մանաւանդ ար
 զեամբ գործոց Ե ոչ բանիւ լիով, կամ արտաքնայարդար հանգի
 սից կերպարանօք. խղճամիտ հոգածութեամբ պահել զաւանդ բա
 րերարութեանն, անկեղծաւոր ճշդութեամբ յարգել զկամս բարերա
 րին, իմաստուն մատակարարութեամբ արդիւնաւորել զհասս Ե զար
 ցիւնս, խոհական հնարամտութեամբ առաւելուլ զարդատիս, Ես Ե
 ըստ պայմանեալ ժամանակաց ամել ի գիտութիւն սրոց անկն իցէ
 զընթացս գործոց Ե զեղելութեանցն բովանդակութիւն, որ գեր
 քան զամենայն յերթումոց հիւսուած Ե զհետադանս բանից
 ճառանութիւն բարձրացուցանէ զանուն Ե զպարծանս բարեյիշատակ
 Արանցն :

Ի այն կրթեալ մտաց ուղղութիւն Ե արժանայարգ Խնամա
 կալութիւնն որ ընդ մերոյն նախագահութեամբ հսկէ գործադրու
 թեան ազգօգուտ կտակին Ե վարչութեան վարժարանին հաստա

տեղյ ի քաղաքին Կարնոյ ի մեծանուն եւ բարեաց յիշատակաց ար-
ժանաւոր առնէն, ի հանգուցեալ Ասպետէն Մկրտչէ Մարգսեան Սա-
նասարեանց, թէպէտեւ ընդ ժամանակս ժամանակս մասնաւոր հրա-
տարակութեամբք ածելովք ի լոյս ծանուցեալ էր զհանգամանս
հիմնարկութեան եւ զառաջին եղելութեանց, այլ զի լիագոյն տեղե-
կութեանց բովանդակութիւն լաւագոյն եւս ունէր պարզել զհանգա-
մանս գործոյն, փոյթ յանձին կալաւ այժմիկ զամենայն, որ ի
քսան ամաց հետէ գործեցաւ եւ արդիւնաւորեցաւ՝ համառօտակի
որչափ հնար էր, այլ եւ անթերի ըստ ամենայն մասանց ամփո-
փել ի մի, եւ Մեր սովին պաշտօնական Կոնդակաւս առաջի առնելք
զայն ի ծանօթութիւն ընդհանուր Ազգիս:

Ակն ունիմք եթէ ճշմարտութիւն իրացն եւ պատմութիւն ար-
գասեացն գրեալ անսեթեւեթ, եւ առաւել քան յերկար բացատ-
րութիւնս՝ հիմնեալ յաղիւսակս եւ ի ցուցակս, ցուցցէ ակներեւ թէ
որչափ եւ որպէս գտաւ օգտակար Հաստատութիւնն Սանասարեան,
հիմնեալ ի ներքնագաւառս եւ կալեալ նպատակ տալ կրթութիւն
գործնական եւ յարմարաւոր գաւառացի պատանեաց վարժելով
զնոսս յուսմունս կարեւորս ի զարգացումն մտաց եւ յարհեստս օգ-
տակարս ի հայթաթանս կենաց, եւ կանգաղեալ յուղիղ եւ յանբա-
սիր բարոյականութեան՝ որք եղեալ են կէտ դիտման երջանկայիշա-
տակ Բարերարին, եւ արժանաւոր խորհրդականի նորին Վսեմ Աս-
պետին Կարապետի Յարութիւնեան Եղեանց, եւ է նպատակ ջանից
եւ աշխատութեանց Խնամակալութեան եւ Հոգարարձութեան եւ
Տեսչութեան, որք ըստ իւրաքանչիւր պարունակի եղեալ կան ի կար-
գադրութիւն եւ ի գործադրութիւն այսր ամենայնի:

Յորգորելով զամենայն Խնամակալ եւ Հոգարարձու խորհուրդս
ընդ սոյն գնալ ճանապարհ եւ զգործոց իւրեանց համար եւ տեղե-
կութիւն տալ ի լոյս ըստ պատշաճ ժամանակաց, օրհնելք զյիշա-
տակ հանգուցեալ Սանասարեան բարերարին եւ զաշխատանս Հոգա-
բարձութեան եւ Տեսչութեան եւ Ուսուցչութեան վարժարանին, եւ
զջանս եւ զփոյթ ամենայն սանուշ առհասարակ, եւ գովելք զդի-
տումն եւ զարդիւնս Պատուարժան Խնամակալութեան որոյ՝ ահա
տեղեկագրին բովանդակութիւն:

ՎԱՐՁԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՔ
ՍԱՆՍԱՐԵԱՆ ՎԱՐՑԱՐԱՆԻ
1903

ԿՏԱԿՍԿԱՏԱՐ

Պ. Կարապետ Եղեանց

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆ Կ. ՊՈԼՍՈՅ

ՆԱԽԱԳԱՀ. — Տ. Տ. Մաղաքիա Ս. Արք. Օրմանեան, (Պատրիարք Կ. Պոլսոյ)

| | | |
|----------------|---------|--------------------------|
| Անդամք. — | Արիկ | էֆէնտի Ունճեան |
| | Գարրիէլ | » Երասունկեան (Նախանդաւ) |
| » | Գէորգ | » Աղանեան |
| » | Գրիգոր | » Կիւմիւշկերտան |
| » | Պատրիկ | » Կիւրղէնկեան (Գանձապետ) |
| » | Վահան | » Էսաեան |
| Փոխ. Անդամք. — | Արշակ | » Գարակէօղեան |
| » | Հրանտ | » Ասատուր |

ՏԵՂԱԿԱՆ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ Ի ԿԱՐԻՆ

| | | |
|----------------|------------------|-----------------------------|
| Նախագահ. — | Տ. Զաւէն Ծ. Վրդ. | Տէր-Եղիաեան (Առաջն. Կարճոյ) |
| Անդամք. — | Գանդիէլ | էֆէնտի Խարաճեան (Նախանդաւ) |
| | Կարապետ | » Տէր-Աղարեան (Գանձապետ) |
| » | Մարտիրոս | » Գալաֆեան |
| Փոխ. Անդամք. — | Առաքել | » Աւետիսեան |
| » | Զարար | » Խէրպէկեան |
| » | Սենեքերիմ | » Վասիլեան |

Տ Ե Ս Ո Ւ Չ Ք

| | |
|--------|-----------------|
| Գէորգ | էֆէնտի Աբուլեան |
| Յովսէփ | » Մատթեան |
| Սարգիս | » Սողիկեան |

Որք միանգամայն անդամ են տեղական Հոգաբարձութեան.

ԲՍԱՆԱՄԵԱՅ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Սանասարեան Վարժարանի

1881 - 1901

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Ի Ե Ն

Բարեյիշատակ Մկրտիչ Սանասարեանի Կարնոյ մէջ հիմնած վարժարանին 1891—92ի, 1892—93ի, եւ 1893—94ի դպրոցական տարիներու ուսումնական տեղեկագիրները, եւ 1892—93ի եւ 1893—94ի անտեսական տեղեկագիրները հրատարակուած են արդէն, իսկ 1894էն 1901ի եօթը տարիներուն անտեսական եւ ուսումնական տեղեկագիրները, զորս վարժարանին Կարնոյ Հոգաբարձութիւնը եւ Տեսչութիւնը պատրաստած եւ զրկած էին Կ. Պոլսոյ Խնամակալութեան, հրատարակուած չլլալով ջարդ, յարմար դատուեցաւ մէկ տեղեկագրի մէջ ամփոփել վարժարանին քսան տարուան պատմութիւնը, իրեն վերաբերեալ կարեւոր վաւերագիրներով: Այս նպատակաւ Խնամակալութիւնը պատրաստել տուաւ Տեսչութեան 1881էն 1891ի տարւոյ տարիներուն ուսումնական եւ անտեսական տեղեկագիրներն ալ, թէեւ այդ տարիները դուրս եղած ըլլան Խնամակալութեան պաշտօնավարութեան չըջանէն, որ կը սկսի 1892ին:

Այդ զանազան տեղեկագիրներէն, ինչպէս նաեւ Կտակակաւ տարաց 1895ին հրատարակած տեղեկագրէն եւ Խնամակալութեան


ատենագրութիւններէն քաղուած են ահա այս քսանամեայ տեղեկագրին պարունակած տեղեկութիւնները :

Ինչպէս պիտի երեւայ յետագայ էջերուն մէջ, Սանասարեան վարժարանը 1881էն ի վեր յարատեւ կերպով շարունակած է իր կրթական գործը ընդ հովանեաւ Թուրքիոյ ուսումնասէր Վեհապետին՝ Վեհ.Ս.Ս.Ս. Ա.Պ.Տ-Ի.Ի.Վ.-ՀԱՄԻՏ ԽԱՆԻ, եւ ունեցած է 1881—1901 քսանամեայ շրջանի վերջը 110 ընթացաւարտներ, որոնք Պետութեան հաւատարիմ հպատակներ ու Ազգին օգտակար անդամներ եղած են՝ ամենամեծ մասամբ գաւառներու մէջ մնարով իբր երկրագործ, արհեստաւոր, ուսուցիչ, պաշտօնեայ եւ առուտուրի մարդ :

Խնամակալութիւնը այս տեղեկագրին մէջ պատկերացնելով Սանասարեան վարժարանին քսան տարուան ուսումնական եւ սնտեսական վիճակը, պարտ անձին կը համարի պարզել ինչ արդիւնք որ ունեցած են վարժարանին բարեյիշատակ Հիմնագրին, կտակակատար Վսեմ Պ. Կարապետ Եղեանցի եւ վարիչ մարմիններուն Սանասարեան վարժարանին ուղղութեան եւ զարգացման համար ըրած ջանքերը, այսպէս նոր առիթ մը տայով ամեն բարեսիրաց օրհնելու ազնիւ յիշատակը Մկրտիչ Սանասարեանի, որ իր կենդանութեան իսկ օժտած է Թուրքիոյ Հայերը այս օգտակար հաստատութեամբ եւ իր մահէն ետքն ալ ապահոված է անոր գոյութիւնը՝ թողած կտակին շնորհիւ :



ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ



Մկրտիչ Սանասարեան, որ կրթութիւն ստացած էր Տիխիսի ներսէսեան վարժարանին մէջ, նշանաւոր սատարող մը հանդիսացաւ միջնակարգ եւ բարձրագոյն դաստիարակութեան գործին : Իր ծախքով Եւրոպայի զանազան համալսարանները զրկած է ուշիմ երիտասարդներ մասնագիտական ուսմանց մէջ կատարելագործուելու համար : Այս խումբին կը վերաբերին Պ. Պ. Սեդրաք Մանդինեան Տիխիսցի, Փիլիպպոս Վարդանեան Եկատերինոտարցի, Աղեքսանդր Սիմոնեան Տիլիճանցի, Պօղոս Իերիեան Արաբկիր-Վաղէէնցի, Սարգիս Սողիկեան Խարբերդցի, Յովսէփ Մատթեան Սամոնցի, Գէորգ Աբուլեան Տիխիսցի, Էմմանուէլ Անանեան Վանցցի, եւ այլն : Մկրտիչ Սանասարեան այս երիտասարդները Գերմանիոյ մէջ ուսուցիչ պատրաստել տուած էր այն վարժարանին համար զոր մտադիր էր հիմնել հայաբնակ կեդրոնի մը մէջ :

1880ին Մկրտիչ Սանասարեան որոշեց Կարնոյ մէջ հաստատել իր վարժարանը, գաւառական յարմարագոյն քաղաքը նկատելով զայն, յետ քննութեան եւ ըստ առաջարկութեան Օրմանեան Մարաքիա վարդապետի, որ այդ միջոցին Առաջնորդ էր Կարնոյ :

Սանասարեան սաներէն Պ. Պ. Սեդրաք Մանդինեան եւ Փիլիպպոս Վարդանեան արդէն իրենց ընթացքը լրացուցած ըլլալով, դարձած էին Եւրոպայէն, եւ Սանասարեան վարժարանը դեռ գոյութիւն չունենալուն, ուրիշ պաշտօններ ստանձնած, ամուսնացած եւ հաստատուած էին, իսկ Պ. Պ. Աղեքսանդր Սիմոնեան եւ Էմմանուէլ Անանեան ուսումնին չաւարտած վերադարձած էին իրենց հայրենիքը : ուստի այդ չորսին չառաջարկուեցաւ Կարին փոխադրուիլ : Մնացեալ չորս սաները, Պ. Պ. Աբուլեան, Իերիեան, Մատթեան եւ Սողիկեան, որոնք իրենց մանկավարժական ընթացքը աւարտած էին Իէնայի վարժապետանոցին եւ Յիւրիսի համալսարանին մէջ, հաւատարիմ իրենց խոստման, ստանձնեցին ուսուցչութիւն ընել Կարին հաստատուելիք վարժարանին մէջ :

Պ. Պօղոս Գեղիեան արդէն վերադարձած էր իր ծննդավայրը 1879ին, եւ 1880ին Կարնոյ Արժնեան եւ Ընկերական վարժարաններուն մէջ ուսուցչական պաշտօն կը վարէր, իր թոշակը Մկրտիչ Սանասարեանէ ստանալով: Պ. Յ. Մատաթեան ալ 1881 Օգոստոս 28ին Կարին կ'երթայ իր հետ տանելով Սանասարեան վարժարանին բացման համար Հիմնադրին տուած հրահանգները. յաջորդ ամսուն կ'ուղեւորի դէպ ի վան, Մշոյ եւ վանայ վիճակներէն սաներ ընտրելու եւ բերելու համար: Ի բացակայութեան Պ. Մատաթեանի տեղի կ'ունենան վարժարանին տեղւոյն եւ կարասեաց նախարարատուութիւնները, ձեռագր Պ. Պօղոս Գեղիեանի եւ Օրմանեան վարդապետի, որ գործին գլուխ կանգնած էր բարերարին մասնաւոր յանձնարարութեամբ:

1881 Հոկտ. 1ին իրր վարժարանի շէնք կը վարձուի Կարնոյ Կանայ ճամբայ թաղի, Բիւրքճիպաշեանց (Մակարեանց) դերդաստանին տունը, ուր Հոկտ. 5ին կը հաստատուի Պ. Մատաթեան իր հետ բերած Մշեցի չորս ասնիկներով եւ ուր հետզհետէ կ'ընդունուին նաեւ վանէն, Խնուսէն, Կարինէն, Քղիէն եւ ուրիշ տեղերէ հասած աշակերտներ: Հոկտ. 25ին Պ. Գեղիեան կը սկսի բնակիլ վարժարանին մէջ, ուր հաւաքուած սաներուն թիւը արդէն հասած էր 12ի:

Վարժարանին բացումէն սկսեալ Օրմանեան Մաղաքիա վարդապետ առաջնորդ ու աջակից կը հանդիսանայ Պ. Պ. Գեղիեանի եւ Մատաթեանի, վարժարանին ուսումնական կազմակերպութեան, ներքին կարգադրութեանց եւ տնտեսական մատակարարութեան վերաբերեալ խնդիրներու մէջ:

Տակաւին դասախօսութիւնները կանոնաւորապէս չսկսած, 1881 նոյմ: 18ին Պ. Գեղիեան կը մեռնի ուղեղային կաթուածի հետեւանքով եւ կը թաղուի Կարնոյ գերեզմանատունը (*):

1882 Փետրուար 18ին Կարին կը հասնին Սանասարեանի միւս

(*) Պ. Պօղոս Գեղիեան ծնած էր Արարիկի Վաղշէն գիւղը, եւ նախնական ուսումը ստացած էր Կ. Պոլիս Ղալաթիոյ Ազգ. վարժարանին մէջ: 1872ին Սանասարեան սան ընտրուելով գացած էր Եւրոպա, եւ Ցիւրիխի վարժապետանոցին, ինչպէս Իէնայի եւ Սթրազպուրկի համալսարաններուն մէջ ուսած էր ընդհանուր մանկավարժութիւն: Մասնագիտական ճիւղ ընտրած էր իրեն ուսողական դիտութիւնները:

երկու սաներն ալ, Պ. Պ. Գէորգ Աբուլեան եւ Սարգիս Սողիկեան, եւ ըստ ժամանակացոյցի, կանոնաւորաբար դասախօսութիւնները կը սկսին տեղի ունենալ 1882 Մարտ 8ին:

Սանասարեանի գլխաւոր նպատակն էր դաւառներու համար յարմար ուսուցիչներ եւ տեղական արհեստից զարգացման օգնելու կարող անհատներ պատրաստել, եւ այս ուղղութեան համեմատ յօրինուած կրթական ծրագիր մը սկսաւ գործադրուիլ:

Առաջին տասը տարիները վարժարան կ'ընդունուէին նոյն իսկ այնպիսի տղայք որ նախակրթական ո՛ր եւ է պատրաստութիւն չունէին, այնպէս որ մինչեւ 1891—92ի տարեշրջանը, վարժարանին սւամանց ընթացքն էր ինը տարի եւ աւանդուած առարկաները, որոնց մանրամասնութիւնները նշանակուած են տեղեկագրիս Ծրագիր վարժարանի Գլուխին մէջ:

Վարժարանին հիմնադրութեան առաջին երկու տարիներուն մէջ իսկ, հետզհետէ ձրիավարժ աշակերտներու թիւը աւելնալով եւ դիչերօթիկ թոշակաւորներ ալ ընդունուելով, վարժարանին յատկացուած շէնքը անբաւական դարձաւ, ուստի 1882ին աշակերտները Կարնոյ առաջնորդարանը փոխադրուեցան, իսկ 1883ին ալ Կարնոյ նորակառոյց աղջկանց դպրոցի շէնքը, որ պարապ էր: Թէեւ 1883ին Մկրտիչ Սանասարեան Կարնոյ մէջ գնել տուաւ ինը կտոր արտէ բաղկացեալ ընդարձակ հող մը, ուր պիտի կառուցուէր վարժարանը, սակայն զինուորական իշխանութեանց կողմէ հարկ ցոյց տրուած ըլլալով որ մերձակայ ամրութեանց պատճառաւ շէնքը միայնակ ըլլայ եւ ոչ բարձր, եւ տեսնուելով որ կարելի չպիտի ըլլայ վարժարանը այդ գետնին վրայ կառուցանել ըստ ներկայացուած յատկազօին, վարժարանը ուրիշ տեղ փոխադրելու մասին բանակցութիւններ տեղի ունեցան Ազգ. Պատրիարքարանի եւ վարժարանին Հիմնադրին միջեւ: Ամեն. Վեհապետեան Յարութիւն Պատրիարքի եւ Վսեմ. Պ. Նզդեանցի հաւանութեամբ, սան տեսուչներէն Պ. Պ. Աբուլեան եւ Սողիկեան 1887 Օգոստ. 22ին մեկնեցան Կարինէն՝ տեղափոխութեան համար խնդրոյ տակ եղող Խարբերդի Սօրսօրու վանքը եւ Սերաստիոյ Ս. Նշանի վանքը ուսումնասիրելու, եւ հարկ եղած քննութիւնը կատարելէ յետոյ կարծիք յայտնեցին թէ Խարբերդի Սօրսօրու վանքը Սերաստիոյ Ս. Նշան վանքէն նախընտրելի է: Մկրտիչ Սանասարեան

հաւանած ըլլալով Խարբերդի Սորսօրու վանքը փոխադրել վարժարանը, 1888 Ապրիլ 7ին իբր վարժարանի շինութեան գետին գնուեցաւ վանքին յարակից ֆրնտուզ ըսուած հողը:

Վարժարանին սեփական շէնքին շինութեան հրովարտակին ստացման համար հարկ եղած դիմումը տեղի ունենալով, 1889 Նոյեմբեր 18ին (1307 Րէպիւլ ախըր 18) Կայսերական Ֆէրման մը արտօնեց վարժարանը Սորսօրու վանքի ֆրնտուզ ըսուած կողմը շինել, սակայն կառուցումը չիրագործուեցաւ պարագայից բերմամբ, այնպէս որ Կարնոյ ազգականը դպրոցի շէնքը, նոր յաւելուածներով որոնք կառուցուեցան Սանասարեանի ծախքով, ծառայեց ցարդ իբր վարժարանական շէնք Սանասարեան հաստատութեան:

Վարժարանը իր հաստատութեան առաջին տարիներէն ի վեր քանիցս Կարնոյ Առաջնորդներուն կողմէ Կարնոյ Մէարիֆի Վարչութեան ներկայացուած ցուցակներուն մէջ նշանակուած էր, սակայն 1899—900 տարեշրջանին ստացուեցաւ Կարնոյ Մէարիֆի Վարչութեանէն պաշտօնական արտօնագիր մը, ուր վարժարանին աստիճանը նկատուած է իբր բարձրագոյն նախակրթարան եւ միջնակարգ վարժարան (ռիւշտիե եւ իսսսի): Հանդէպ Կառավարութեան, վարժարանին օրինական պատասխանատու եւ վերատեսուչ ճանչցուած է Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքը, որ կնքած է հաստատութեան ուսուցիչներուն եւ դասագիրքերուն ցուցակը Մէարիֆին ներկայացուելով արտօնագիր առնելու համար:

Վարժարանին վարչութիւնը կարելի է երկու շրջանի բաժնել: Առաջին շրջանին մէջ, որ տեւած է 1881էն 1892, վարժարանին վերին հսկողութիւնը կը վարէր Հիմնադիրը: Այդ միջոցին Կարնոյ մէջ վարժարանին վրայ կը հսկէր Ուսումնական Ժողով մը, որ վարեց վարժարանին ուսումնական գործերը եւ մատակարարութիւնը. այս Ժողովը 1882 Փետրուարին կազմուած էր եւ կը բաղկանար Օրմանեան Մաղաքիա վարդապետէն (Հիմնադրէն՝ Ժողովին նախագահ նշանակուած) եւ Պ. Պ. Գէորգ Աբուլեանէ, Յովսէփ Մատաթեանէ եւ Սարգիս Սողիկեանէ, որոնք կը վարէին միանգամայն ներքին տեսչութեան պաշտօնը հաւաքական պատասխանատուութեամբ: Մասնաւորապէս Պ. Աբուլեան կը կատարէր Կտակակատարին հետ հարկ եղած թղթակցութիւնը, Պ. Մատաթեան կը ներկայացնէր վարժարանը

րատարին յարաբերութեանց մէջ, եւ կը հսկէր Արհեստանոցին եւ Թանգարանին վրայ, եւ Պ. Սողիկեան կը վարէր վարժարանին ներքին հսկողութիւնը եւ օրագրութիւնը, աշակերտաց ծնողքներուն հետ հարկ եղած թղթակցութիւնը ու կը հսկէր Գրագարանին վրայ:

1884ին կազմուեցաւ նաեւ Տնտեսական Խորհուրդ մը, որ կը բաղկանար Կարնեցի պատուաւոր ազգայիններէ եւ յիշեալ երեք տեսուչներէն, նախագահութեամբ Օրմանեան վարդապետի, պաշտօն ունենալով մասնաւորապէս զբաղիլ մատակարարութեան գործով:

1881—82 եւ 1882—83 տարեշրջաններուն Օրմանեան վարդապետ անձամբ վարեց Գանձապետութեան պաշտօնը, 1883—84 ին՝ Պ. Մատաթեան եւ 1884էն 1892՝ Պ. Աբուլեան:

Այս առաջին շրջանին մէջ է որ Մկրտիչ Սանասարեան, փափաքելով մօտէն տեսնել իր հիմնած վարժարանը, 1885ին Կարին այցելեց, 15 օրի չափ հոն մնաց եւ ներկայ գտնուելով տարեկան քըննութեանց, առիթ ունեցաւ մօտէն զնահատելու իր հիմնած հաստատութեան արդիւնքները: Նոյնպէս 1886 Սեպտեմբերին Վսեմ Պ. Կարապետ Եզեանց այցելեց Սանասարեան վարժարանը, եւ 18 օր Կարին մնալով տեղեկացաւ վարժարանին ներքին պայմաններուն եւ ընդհանուր վիճակին: Այս կրկին այցելութիւնները նոր թափ մը տուին վարժարանին, որ 1886—87 տարեշրջանին արդէն հասած էր բարդաւած վիճակի. Ա. էն է. դասարանները կազմուած էին, 35 ձրիավարժ գիշերօթիկներու քով կային 123 գիշերօթիկ թոշակաւորներ, որոնք Փոքր Ասիոյ ամեն կողմերէն եկած էին. մասնաւորապէս Կարին՝ որ ունէր 44 աշակերտ, Տրապիզոն՝ 26, Արարկիւր 14, Երիզա՝ 7, Վան՝ 6, Խարբերդ՝ 5 եւ այլն, կ'օգտուէին հոն աւանդուած խնամեալ կրթութեանէն:

1887 Յուլիան Օրմանեան Սրբազան, թողլով իր առաջնորդական պաշտօնը, կը հեռանար Կարինէն, եւ այս հեռացումը կը զրկէր վարժարանը կարելոր օժանդակութենէ մը:

1888—89 տարեշրջանին, ինչպէս հետեւեալ երկու տարեշրջաններուն, մինչեւ 1891 Սեպտեմբեր, նոր աշակերտներ չեն ընդունուիր տեղոյ անձկութեան պատճառաւ, եւ այս կերպով կարելի կ'ըլլայ կազմել 2. է. Լ. եւ Թ. դասարանները եւ 1890—91 տարեշրջանին վերջը տալ ազգին 21 շրջանաւարտներ:

Դժբազդարար Մկրտիչ Սանասարեան չկրցաւ իր վարժարանին առաջին շրջանաւարտները տեսնել, որովհետեւ 1890 Մայիսին վախճանեցաւ Փարիզի մէջ, թողլով կտակ մը, որ կ'ապահովէր իր վարժարանին գոյութիւնը: Այս կտակով Հիմնադիրը կը թողուր Սանասարեան Հաստատութեան կարեւոր գրամագլուխ մը, ինչպէս նաեւ իր մատենագրանը, ալբոմները, հաւարածոները, եւ այլն: Կտակակատար կարգուած էին Վսեմ Պ. Կարապետ Եղեանցի, Պ. Գէորգ Եւանգուլեանց ու հանգուցելոյն քեռորդին Պ. Լեւոն Տիգրանեանց, որոնք ձեռնարկեցին անմիջապէս կտակին գործադրութեան: Կտակակատարներէն Պ. Լեւոն Տիգրանեանց 1891ին հրատարեցաւ, եւ Պ. Պ. Եղեանց եւ Եւանգուլեանց շարունակեցին կատարել իրենց վրայ դրուած պարտականութիւնները, սամը կանոնաւոր գործունէութեամբ արդիւնաւորեցին կտակեալ գրամագլուխը, ինչպէս մանրամասն կերպով բացատրուած ներկայ Տեղեկագրին Բ. Գլուխին մէջ:

Վսեմ Պ. Կարապետ Եղեանց Սանասարեանի կտակով իր վրայ դրուած պարտականութեան համաձայն պատրաստեց կտակին հիման վրայ՝ կանոնադրութիւն մը, որ 1892 Յուլիս 16ին Ազգ. Կեդրոնական Վարչութեան կողմէ վաւերացուեցաւ. այդ կանոնադրութիւնը, որ յատուկ տեսքով հրատարակուած է արդէն, կը սահմանէ վարժարանին հիմնական կանոնները եւ անոր վարչութեան եղանակները:

Կանոնադրութեան գործադրութեան դրուելու օրէն սկսեալ, այսինքն 1892էն, կտակին համաձայն ընդհանուր գրամագլուխի եւ կամուտին 1/10ին 10էն կազմուեցաւ գրամագլուխ մը որ յատկացած է ուսուցիչներ պատրաստելու Սանասարեան վարժարանի համար:

Նոյնպէս Հիմնադրին մահէն (1890) յետոյ, սկիզբ դրուած է՝ ըստ յիշեալ Կանոնադրութեան՝ պահեստի գրամագլուխի մը, որ կազմուած է վարժարանին տարուէ տարի վճարուած սոխորական եւ արտասոխոր նպաստներու վճարումէն ետքը տարեկան եկամուտներէ աւերցած գրամով:

Սանասարեանի կտակած գումարներէն զատ՝ 1893 Նոյեմբեր 1ին վախճանած Բարեխիշատակ Տիկին Մարիամ Մարտիրոս Կազաչկեանց ալ, մօրաքոյր Վսեմ Պ. Կարապետ Եղեանցի, կտակած է Սանասարեան վարժարանին 10,925 ուսպլի սոկոսաբեր արժեթուղ-

թեր, որոնք 'ի պահ դրուած են նոյնպէս Ռուսոյ Պետական Պանթան յանուն Սանասարեան վարժարանին:

Վարժարանին վարչութեան մասին Պ. Կարապետ Եղեանցի ըստ կտակի վերապահուած իրաւասութենէն զատ, 1892ի կանոնադրութեան համաձայն վարժարանը ունեցաւ հետեւեալ վարիչ մարմինները.

1⁰. Կ. Պոլսոյ Խնամակալութիւնը, որ Սրբազան Պատրիարքի նախագահութեամբ՝ Պոսեդնակ վեց անդամներէ բաղկացած մնայուն մարմին մըն է Ազգ. Կեդրոնական Վարչութեան կողմէ ընտրուած: Ըստ կանոնադրութեան 21^{րդ} յօդուածին, երբ մահուան, հրատարման եւ կամ ուրիշ որ եւ է պատճառաւ Խնամակալութեան մէկ կամ աւելի անդամք պակսին, մնացեալ անդամները յատուկ նստի մը մէջ հարկ եղած թուով երկպատիկ ցանկ մը կը պատրաստեն եւ կը ներկայացնեն Սրբազան Պատրիարքին, որ անոր մէջէն կ'ընտրէ պակասներուն տեղ նոր անդամներ:

Կտակակատար Պ. Եղեանցի հաւանութիւնը առնուելէ յետոյ, Ազգ. Կեդր. Վարչութեան որոշմամբ Կանոնադրութեան 26^{րդ} յօդուածին վրայ հետեւեալ յաւելումն ալ տեղի ունեցած է 1899ին. «Կ. Պոլսոյ Խնամակալութիւնը ունի երկու օժանդակ անդամներ որոնք կ'ընտրուին բուն անդամներու պէս եւ փոխանորդաբար կ'անդամակցին Խնամակալութեան նիստերուն, տեղակալելով անդամոց՝ նոցա բացակայութեան կամ հիւանդութեան կամ հրատարման կամ պաշտօնէ դադարման պարագայից մէջ»:

Խնամակալութեան պաշտօնն է գլխաւորաբար հոգ տանիլ վարժարանին անչարժ ստացումքին եւ արժեթուղթերուն պահպանման եւ արդիւնաւորման, բարեփոխել եւ վաւերացնել Տեղական Հոգաբարձութեան կողմէ ներկայացուած տարեկան ելմուտայոյցը, քննել եւ վաւերացնել հաշիւները, հսկել Տեղական Հոգաբարձութեան գործաւնութեանց վրայ, ընտրել եւ հրատարեցնել վարժարանին վերատեսուչը եւ ընդհանուր պաշտպան հանդիսանալ վարժարանին նիւթական եւ բարոյական շահերուն:

2⁰. Տեղական Հոգաբարձութիւնը, նախագահութեամբ վարժարանին գտնուած տեղոյն Առաջնորդին: Այս Հոգաբարձութեան կանդամակցին ըստ Կանոնադրութեան վերատեսուչէն զատ վարժա-

րանին գանուած տեղոյն եկեղեցեաց ժողովրդեան կողմէ ընտրուած վեց անձեր, երեքը իբր անդամ եւ երեքը իբր փոխանորդ անդամ. Ուսսուցչական Մասնաժողովն ալ իրաւունք ունի իր մէջէն երկու անդամ ընտրել եթէ Տեսչութեան անդամներու թիւը պակսի Հոգաբարձութեան մէջէն. նոյնպէս ընթացաւարտ աշակերտները իրենց մէջէն մէկ անդամ կրնան ընտրել, եթէ առ նուազն եօթը ըլլայ ընտրողաց թիւը: Ասոնցմէ զատ Հոգաբարձութեան ցկեանս անդամ են: 1⁰. Վարժարանին երեք Սան-Տեսուչները. 2⁰. Միանուագ հազար Օսմ. լիբակամ համարժէք կալուած նուիրող անձերը, եւ 3⁰. Վարժարանին Ուսուցչական Մասնաժողովին այն անդամները՝ որոնք 25 տարի վարժարանին մէջ ուսուցչութիւն ընելէ յետոյ պաշտօնէ կը դադրին: Կ. Պոլսոյ Խնամակալութեան 1895 Փետր. 4ի յատուկ Հրահանգին համաձայն Կարնոյ եկեղեցեաց ժողովրդեան կողմէ անուանուելիք անդամաց ընտրութիւնը կը կատարեն Ազգ. Գաւառական Վարչութեան կրօն. եւ Քաղ. ժողովոյ անդամները եւ Գաւառական ժողովոյ ու թաղական Խորհրդոյ Դիւանի անդամները գումարուելով Առաջնորդին նախագահութեան տակ: Ըստ Կանոնադրութեան 39րդ յօդուածին Հոգաբարձութեան տեղացի 3 անդամները եւ 3 փոխանորդ անդամները կը պաշտօնավարեն 3 տարի եւ անոնց $\frac{1}{3}$ մասը կը փոխուի իւրաքանչիւր տարի, առաջին երկու տարիները վիճակաւ եւ յետոյ կարգաւ:

Այս Հոգաբարձութեան պաշտօնն է գլխաւորաբար խնամք տանիլ վարժարանին գոյքերու պահպանութեան, պատրաստել երկրտայցոյցը, որոշել ուսուցիչներու թոշակները, ընտրել ձրիավարժ աշակերտները եւ Եւրոպա զրկուելիք սաները, կատարել ծախքերը ըստ ելմտացոյցին եւ ընդհանրապէս հսկել վարժարանին նիւթական մատակարարութեան վրայ:

3⁰. Վերահսուչը, զոր կ'ընտրէ Կ. Պոլսոյ Խնամակալութիւնը եւ որ կը հաստատուի Պատրիարքական պաշտօնադրով, պետն է վարժարանին ներքին Վարչութեան. իր պաշտօնն է հոգ տանիլ վարժարանին օրէնքներուն եւ կանոններուն անթերի գործադրութեան, ընտրել եւ արձակել ուսուցիչները, հսկել անոնց պաշտօնավարութեան, աշակերտներուն վարժութեանց եւ ընդհանրապէս վարժարանին կարգապահութեան վրայ, եւ այլն:

4⁰. Ուսուցչական Մասնաժողովը, որ կը բաղկանայ վարժարանին բարձրագոյն երեք գասարաններուն գլխութեանց եւ լեզուներու ուսուցիչներէն, Վերատեսչին ատենապետութեամբ: Ուսուցչական Մասնաժողովին պաշտօնն է որոշել վարժարանին մէջ աւանդելի ուսմանց նիւթերն ու արհեստները, կազմել աւանդելի առարկաներու եւ արհեստներու մանրամասն ծրագիրը, ընտրել վարժարանին մէջ կարգացուելիք գասագիրքերը, եւ այլն:

Այսպէս, ըստ այսմ Կանոնադրութեան, նոր կազմակերպութեամբ 1892ին կը սկսի վարիչ մարմիններու նոր շրջանը:

Այս երկրորդ շրջանին եւս Վսեմ. Պ. Կարապետ Եղեանց ընձեռեց իր օժանդակութիւնը վարժարանին վերին հսկողութեան մասին, ըստ կտակի:

1⁰. Կ. Պոլսոյ Խնամակալութիւնը կազմուեցաւ 1892ին հետեւեալ կերպով.

| Տեսարք | Արիկ | Էֆէնտի | Ունձեան |
|--------|-----------|--------|--------------|
| " | Գարրիէլ | " | Նորատունկեան |
| " | Յովհաննէս | " | Էսաեան |
| " | Յովհաննէս | " | Նուրեան |
| " | Պատրիկ | " | Կիւլպէնկեան |
| " | Սիմոն | Պէյ | Մաքսուտ |

Ասոնցմէ Սիմոն Պէյ Մաքսուտի (+1895 Յունուար 10) յաջորդեց Սեպուհ Պէյ Մաքսուտ, որ քիչ ետքը հրաժարեցաւ. իրեն յաջորդեց Տիգրան Էֆ. Գարակէօղեան (+1896 Յունուար 16) որուն անկ Խնամակալութեան անդամ ընտրուեցաւ Գրիգոր Էֆ. Կիւմլէկէտան 1898 Հոկտ. 15ին:

Յովհաննէս Էֆ. Էսաեան ալ 1889ի սկիզբները իր վատաւորութեան պատճառաւ հրաժարելով. անոր անկ Խնամակալութեան անդամ ընտրուեցաւ 1899 Փետրուար 16ին Վահան Էֆ. Էսաեան, որ արդէն օժանդակ անդամ ընտրուած էր քիչ առաջ (*):

Յովհաննէս Էֆ. Նուրեանի (+ 1900 Փետրուար 4) յաջորդ ընտրուեցաւ Գէորգ Էֆ. Ալթանեան 1900 Փետրուար 9ին:

(*) Վահան Էֆ. Էսաեանի հետ օժանդակ անդամ ընտրուած էր նաեւ Մկրտիչ Էֆ. Մանուկեան, որ հրաժարեցաւ:

Խնամակալութեան նախանգամ ընտրուած էր 1892 ին Գար-
րիէլ էֆ. Նորատունկեան, եւ Գանձապետ Յովհաննէս էֆ. Էսաեան՝
որուն յաջորդեց 1895 Օգոստոս 12 ին Պատրիկ էֆ. Կիւլպէնկեան :

2⁰. Կարնոյ Հոգարարձութիւնը 1892 ի վերջերը կազմուեցաւ
Կ. Պոլսոյ Խնամակալութեան կողմէ հետեւեալ կերպով .

- | | |
|--------------------|-----------------------|
| Բուն անդամներ՝ | Գանիէլ էֆ. Խարաճեան |
| | Կարապետ „ Տէր Աղարեան |
| | Յակոբ „ Համամճեան |
| Փոխանորդ անդամներ՝ | Զաքար էֆ. Խէրպէկեան |
| | Մկրտիչ „ Գայթանճեան |
| | Յակոբ „ Տիգրանեան |

Հոգարարձութեան կ'անդամակցէին նաեւ երեք Սան-Տեսուչ-
ները, ըստ Կանոնադրութեան :

1892 էն մինչեւ 1901 Հոգարարձութիւնը կրեց հետեւեալ
փոփոխութիւնները .

- 1894-95 ին՝ Կարապետ էֆ. Տէր Աղարեան փիճակաւ դադրեցաւ եւ
վերընտրուեցաւ ըստ 1895 Փետր. 4 ի Հրահանգին :
Նոյնպէս փոխանորդ անդամ Մկրտիչ էֆ. Գայթան-
ճեանի յաջորդեց Առաքել էֆ. Վարդանեան :
- 1896 ին՝ Յակոբ էֆ. Համամճեան մեկնեցաւ Կարինէն եւ անոր
տեղ անցաւ փոխանորդ անդամ Զաքար էֆ. Խէրպէկեան :
- 1898 ին՝ Զաքար էֆ. Խէրպէկեան փիճակաւ դադրեցաւ եւ ա-
նոր յաջորդեց Առաքել էֆ. Աւետիքեան : Յակոբ էֆ.
Տիգրանեան վախճանած եւ Ա. էֆ. Վարդանեան Կա-
րինէն մեկնած ըլլալով, փոխանորդ անդամ ընտրուեցան
Աստուածատուր Զիլինկիրեան, Զաքար Խէրպէկեան եւ
Մարտիրոս Գալաֆեան էֆէնտիները :
- 1899 ին՝ Վիճակաւ դադրեցաւ Գանիէլ էֆ. Խարաճեան որ վեր-
ընտրուեցաւ . Աստուածատուր Զիլինկիրեանի տեղ փո-
խանորդ անդամ ընտրուեցաւ Գէորգ էֆ. Փամպուղեան :
- 1900 ին՝ Շրջանի լրացմամբ դադարեալ նկատուեցաւ Կարապետ
էֆ. Տէր Աղարեան, որ վերընտրուեցաւ, եւ Զաքար էֆ.
Խէրպէկեան՝ որուն յաջորդեց Սենեքերիմ էֆ. Վասիլեան :

Հոգարարձութեան Գանձապետ ընտրուեցաւ 1892 ին Յակոբ
էֆ. Համամճեան, որուն յաջորդեց Կարապետ էֆ. Տէր Աղարեան
1896 ին :

3⁰. Թէեւ ըստ Կանոնադրութեան վարժարանը պիտի ունենար
մէկ վերատեսուչ, սակայն վարժարանին տեսչութիւնը վարեցին ե-
րեք Սան-Տեսուչները այն կարգադրութեանց համաձայն զորս Կտա-
կակատարը իր 1891 Յունուար 31 թուական պաշտօնագրով ըրած է
անոնց պաշտօնավարութեան եղանակին նկատմամբ : Այդ պաշտօնա-
գրով երեք Տեսուչներուն հաւաքական պատասխանատուութեան ներ-
քեւ կը թողուի վարժարանին տեսչութիւնը .

Ա. — Պ. Գ. Արուլեան. — 1.) Կը ներկայացնէ վերատեսուչը
Հոգարարձութեան խորհուրդին մէջ եւ կը ստանձնէ անոր հետ կա-
պուած բոլոր պարտաւորութիւնները, պաշտօնական գործողութիւն-
ները եւ թուղթերու ստորագրութիւնը, եւ 2.) կը կատարէ վարժա-
րանին դրամական ու հաշուական հսկողութիւնը եւ հաշիւներու ճշ-
դութիւնն ու վաւերացումը : Առանց անոր վաւերացման որ եւ է
վճարում չ'ըլլար. անիկա հարկ եղած դրամը կը ստանայ գանձապե-
տէն եւ կը յանձնէ մատակարարին :

Բ. — Պ. Ս. Սողիկեան. — 1.) Կը ներկայացնէ վերատեսու-
չը Ուսումնական Մասնաժողովին մէջ եւ կը ստանձնէ անոր հետ կա-
պուած պարտաւորութիւնները, 2.) կը վարէ վարժարանին օրագ-
րութիւնը, 3.) կը կատարէ աշակերտաց ծնողքներուն հետ հարկ ե-
ղած թղթակցութիւնը, եւ 4.) կը հսկէ Գրագարանին բարեկարգ
պահպանութեան վրայ :

Գ. — Պ. Յ. Մատաթեան. — 1.) Կը ներկայացնէ վերատե-
սուչը կառավարական, պաշտօնական եւ արտաքին յարաբերութեանց
մէջ. 2.) կը ստանձնէ վարժարանին ընդհանուր գոյքերուն եւ մաս-
նաւորապէս թանգարանին հսկողութիւնն ու բարեկարգ պահպանու-
թիւնը, եւ 3.) հոգ կը տանի վարժարանին Արհեստանոցներու բար-
ւոյք ընթացքին ու արդիւնաւորման :

Երբ երեք Սան-Տեսուչներէն մէկը բացակայ ըլլայ, միւսները
կը ստանձնեն անոր պարտաւորութիւնները :

Բաց ի իրենց մասնաւոր պարտաւորութիւններէն, որոնց հա-
մար երեքն ալ հաւասարապէս պատասխանատու են, երեքին հաւա-

քական պարտաւորութիւնն է հոգ տանիլ վարժարանին ընդհանուր նիւթական, ուսումնական եւ բարոյական բարելաւութեան, հսկել վարժարանին օրինաց անթերի գործադրութեան եւ ուսուցչաց ու այլ պաշտօնէից պաշտօնավարութեան վրայ, եւ այլն:

4⁰. Ուսուցչական Մասնաժողովն ալ կազմուեցաւ 1893 Յունուարին եւ Կանոնադրութեան համաձայն պաշտօնավարեց կանոնաւորապէս:

1891—92 տարեշրջանէն սկսեալ որոշուած էր արդէն վարժարան ընդունիլ այն կարգի աշակերտները միայն՝ որոնք ստացած էին նախակրթութեան տարրական ծանօթութիւնները. այս կերպով կարելի եղած էր եօթը տարուան ամփոփել վարժարանին շրջանը, առանց իջեցնելու անոր կրթական մակարդակը: Առաջին տասնամեակին մէջ աւանդուած բոլոր ուսումները աւանդուեցան վերջին տասնամեակին ալ:

Վարժարանը շրջանաւարտի խումբեր ունեցաւ յաջորդաբար հինգ տարի, այսինքն 1891 էն 1895. Իսկ 1896, 1897, 1898 եւ 1899 տարիներուն չորս տարի շրջանաւարտ չտուաւ. ասիկա հետեւանքն էր այն կարգադրութեան, որով տեղւոյ անձկութեան պատճառաւ՝ 1888—1891 նոր աշակերտներ չէին ընդունուած վարժարան 3 տարի յաջորդաբար, ինչպէս նաեւ 1887—88 տարեշրջանին ալ նոր դասարան չէր կազմուած:

1899—900 տարեշրջանէն սկսեալ, վարժարանը ունեցաւ իր ամբողջ եօթը դասարանները եւ անկէ ի վեր կանոնաւորաբար ամէն տարի շրջանաւարտ կու տայ:

Թոշակաւոր գիշերօթիկներու թիւը՝ 1887—88 տարեշրջանին՝ բարձրացած էր 127 ի որ ամէնէն բարձր թիւը եղած է: Թոշակաւոր գիշերօթիկները պակսեցան հետզհետէ այդ թուականէն ետքը՝ գլխաւորաբար ժողովրդի անտեսական վիճակին պատճառաւ: 1892—93 ի տարեշրջանին աշակերտներու թիւը պակսեցաւ Կարնոյ մէջ տիրող հնատախտին հետեւանքով: 1895—96 տարեշրջանին թոշակաւոր գիշերօթիկներու թիւը 25 ի իջած ըլլալով՝ նոյն տարին պաշտպանեալ թոշակաւորներուն գրութիւնը մտածուեցաւ եւ յաջողութեամբ գործադրուեցաւ: Առաջին տարին 4 աշակերտ զրկուեցան Պոլսէ իբր պաշտպանեալ, հետեւեալ տարին՝ 20 աշակերտ, զանազան քաղաք-

ներէ, որոնց թիւը ի վերջոյ հետզհետէ 72 ի բարձրացաւ շնորհիւ վ.ս. Պ. Կարապետ Եզեանցի ջանքերուն:

Թէեւ 1882 էն մինչեւ 1886 քանի մը Կարնեցի թոշակաւոր ցերեկեայ աշակերտներ ընդունուած էին վարժարան, սակայն ցերեկեայի գրութիւնը մէկ կողմ թողուած էր, նկատելով գիշերօթիկ թոշակաւորներու թիւին յարաճուն յաւելումը: 1894—95 տարեշրջանին, գիշերօթիկներու թիւը զգալապէս պակսած ըլլալուն՝ որոշուեցաւ նորէն ընդունիլ թոշակաւոր ցերեկեայներ որոնց թիւը 1900—901 տարեշրջանին 50 եղաւ: Այսպէս, քսանամեայ շրջանին վերջին երկու տարիներուն մէջ, վարժարանը ունեցաւ աշակերտաց բարձրագոյն թիւը (1899—900 տարեշրջանին 187 եւ 1900—901 տարեշրջանին 183):

Ըստ կտակի, Սանասարեան վարժարանի մէջ պէտք է ունին աւնուազն 30 ձրիավարժներ, այսինքն 30 Սանասարեան սաներու թիւը 1892—93 տարեշրջանին գիշերօթիկ Սանասարեան սաներու թիւը իջաւ 19 ի որովհետեւ շրջանաւարտ ելլողներուն տեղ նոր աշակերտներ չընդունուեցան Կարնոյ մէջ տիրող հնատախտին (choléra) պատճառաւ: 1893—94 տարեշրջանին՝ անոնց թիւը վերածուեցաւ 30 ի եւ յաջորդաբար 6 տարի 30 է աւելի էին: Իսկ 1899—900 ի տարեշրջանին Մարզուանի Ամերիկեան Գօլէճի Եւզոկեացի աշակերտներէն 14 տղաք տարեկան 12 Յամանեան սակոյ՝ այսինքն կիսաթոշակ ընդունուեցան:

Գալով ուսուցչական մարմնոյն, վարժարանին վարչութեան գլխաւոր ջանքը եղած է միշտ բաւազոյն տարրերէ կազմել զայն. այսպէս երեք տեսուչներէն զատ որոնք համալսարանական կրթութիւն առած ըլլալով ստանձնած են վարժարանին կարեւորագոյն դասերուն աւանդումը, ջանացուած է ունենալ մասնագէտ ուսուցիչներ որոնց ձեռնհասութիւնը անվիճելի ըլլայ իրենց աւանդած առարկաներուն մասին: Ի Կարին ուր կառավարական իսթաքի վարժարանէն զատ չկան ուրիշ բարձրագոյն կամ երկրորդական վարժարաններ, դժուար էր կարող այցելու ուսուցիչներ ունենալ (որոնք համեմատաբար նուազ թոշակով կրնան գոհանալ), ուստի հարկ եղած է իւրաքանչիւր աւարկայի համար մնայուն ուսուցիչներ պահել եւ վարիչ մարմինները չեն ընկրկած ո՛ր եւ է զոհոթութեան առջեւ, կարե-

լի եղածին չափ խնամեալ կրթութիւն մը տալու համար Սանասարեան վարժարանին աշակերտաց :

Ուսումնական բաժնէն զատ մասնաւոր խնամք տարուած է նաեւ վարժարանին արհեստական բաժնին :

1883 ին Ուսումնական բաժնի հետեւող աշակերտներէն ու մանք սկսած են սորվիլ կազմարարութիւն եւ ատաղձագործական վարժութիւններ կատարել, որք տեւած են մինչեւ 1886 : Այդ թուականէն ետքն է որ Արհեստանոցը ստացած է յատուկ կազմակերպութիւն մը, նախ կոպղարարութեան եւ 1887 ին ատաղձագործութեան դասերու մասնագէտ ուսուցիչներով : Արհեստանոցին ընթացքը չորս տարի որոշուած էր, եւ արհեստի հետեւող աշակերտները երկու տեսակ էին, այսինքն անոնք որ Ուսումնական բաժնին կը հետեւէին եւ օրական մէկ երկու ժամ կը յատկացնէին արհեստ սորվելու, եւ անոնք որ միայն արհեստ կը սորվէին՝ այս վերջինները գրեթէ ամենքն ալ ցերեկեայ Կարնեցիներ : 1895 էն ետքը նոր ծրագիր պատրաստուեցաւ Արհեստանոցին համար, եւ նկատելով որ օրական մէկ երկու ժամ բաւական չէ արհեստ սորվելու, որոշուեցաւ որ արհեստի յարմարութիւն ունեցող աշակերտները Ուսումնական բաժնին կարգ մը առարկաներուն միայն հետեւին եւ իրենց ժամանակին մեծ մասը յատկացնեն արհեստի : 1900 Յուլիսին, Արհեստանոցին ծրագիրը բարեփոխուեցաւ, որուն համեմատ Ուսումնական բաժնի աշակերտներուն օրական մէկ ժամ իբրեւ կամաւոր առարկայ արհեստ սորվելու դրութիւնը բոլորովին ջնջուեցաւ, որովհետեւ օգտակար արդիւնք չէր ունեցած, եւ Արհեստանոցին մէջ աշխատեցան միայն արհեստի հետեւող աշակերտները, ինչպէս նաեւ անոնք որ իրենց ժամանակին մեծ մասը արհեստի յատկացուցած էին :

1886 էն 1901 Արհեստանոցը ունեցաւ 16 շրջանաւարտներ, որոնցմէ 7ը կոպղարար եւ 9ը կահագործ եւ արտադրեց զանազան կահեր եւ երկաթեայ զանազան տեսակ առարկաներ : Գալով կազմարարութեան, վարժարանին աշակերտներէն ոմանք հետեւեցան այդ ճիւղին եւ զբաղեցան վարժարանին վերաբերեալ գիրքեր կազմելով :

Ընդհանուր աշակերտներու առողջական վիճակը շատ գոհացուցիչ եղած է այս քսանամեայ տարեշրջանին մէջ. հակառակ վար-

ժարանական շէնքին անյարմարութեանց, համեմատաբար քիչ հիւանդութիւններ պատահած են, շնորհիւ Կարնոյ մարտը օգին ու ջուրին, ինչպէս նաեւ ի գործ դրուած առողջապահիկ կարգադրութեանց : Նոյնպէս գոհացուցիչ եղած է աշակերտներու վարքն ու բարքը :


1881 էն 1901 քսանամեայ շրջանին մէջ վարժարանին ընդհանուր ծախքը եղած է 7,131,701 դրուշ, Օտմ. տակին 103 դրուշի հաշուով . այս ծախքին կէսէն քիչ մը աւելին, այսինքն 3,733,537 դրուշը, հոգացուած է Հիմնադրին կողմէ իր կենդանութեան, եւ իր մահէն ետքն ալ իր կտակած դրամագլխին հասոյթով . մնացեալ գումարը (3,398,163 դրուշ) հոգացուած է աշակերտներուն վճարած թուշակներով, Արհեստանոցի արդիւնքներով եւ ուրիշ զանազան հասոյթներով :

Պէտք է դիտել թէ ծախքերուն զգալի մէկ մասը յատկացած է առաջին հաստատութեան պէտքերուն, այսինքն շէնքի նորոգութեան, նոր շէնքերու կառուցման, կահաւորման, թանգարանի, մատենադարանի, եւ այլն : Ասկէ զատ ուսուցչական մարմնոյն համար մնայուն կարեւոր տարրեր ունենալու պէտքը պիտոճէն ծանրաբեռնած է, որով քսան տարուան մէջ երկու միլիոն դրուշի մօտ գումար մը վճարուած է ուսուցիչներու, ինչ որ հետեւանքն է, ինչպէս վերը բացատրուեցաւ, Սանասարեան վարժարանին Կարնոյ պէս գաւառական քաղքի մը մէջ հաստատուած ըլլալուն : Ըսինք նաեւ թէ վարիչ մարմինները ջանացած են որ Սանասարեան սաներուն ուտեստի եւ հագուստի հարկ եղած խնամքը տարուի, եւ իւրաքանչիւր աշակերտի յատկացուած տարեկան ծախքի գումարը, կարելի եղածին չափ խնայողական ըլլալով հանդերձ, զանոնք չզրկէ կարեւորէն :

Ի՞նչ եղած է այդ ծախքին փոխարէն ձեռք բերուած արդիւնքը : Սոյն քսանամեայ շրջանին մէջ վարժարան ընդունուած են ընդ ամէնը 544 հոգի (308 թոշակաւոր դիշերօթիկ կամ ցերեկեայ եւ 336 ձրիտլարօ գիշերօթիկ կամ ցերեկեայ) որոնցմէ 414ը Ուսումնական բաժնի հետեւող, 88ը Ուսումնական բաժնի ինչ ինչ առարկաներուն եւ արհեստի հետեւող, իսկ 42ը միայն արհեստի հետեւող :

Մինչեւ 1900—1901 վարժարանական տարւոյ վերջը իբրեւ կիսաւարտ կամ թերաւարտ վարժարանէն եղած են 259 հոգի, որոնցմէ ոմանք կը հետեւին հիմայ բարձրագոյն վարժարաններու եւ հա-

14124



մարտարաններու այս կամ այն ճիւղի ընթացքին, մանք ուսուցչու-
թեամբ կը զրաղին քաղաքներու եւ գիւղերու մէջ, ուրիշներ արհես-
տով կամ առուտուրով, մէկ քանին զանազան պաշտօններ կը վարեն
եւ առհասարակ իրենց գործունէութեամբ եւ կարեւոր գիւրջով պա-
տիւ կը բերեն Սանասարեան վարժարանին: Թերաւ արտներէն ու-
մանք ալ, հաղիւ գործի սկսած, կնքած են իրենց մահկանացուն:

Վարժարանը մինչեւ նոյն 1900—1901 տարեշրջանին վերջը
ընծայած է նաեւ 110 ընթացաւարտ, որոնցմէ 94ը Ուսումնական
բաժնէն, 16ը Արհեստագիտականէն:

Վարժարանին ընթացաւարտներուն արդի վիճակը կարելի է
գասաւորել հետեւեալ կերպով.

| | |
|--|-----|
| Ուսուցիչ Սանասարեան եւ այլ վարժարաններու մէջ | 22 |
| Համալսարանի կամ բարձրագոյն վարժարանի ուսանող | 12 |
| Առեւտուրով զբաղող, վաճառական, սեղանաւոր, յանձ- նակատար, եւ այլն | 26 |
| Պաշտօնեայ (Կառավարական, Երկաթուղոյ, Ռէժիի, եւն.) | 11 |
| Արհեստաւոր, երկրագործ | 19 |
| Փաստարան, գծագրիչ, եւ այլն | 12 |
| Եկեղեցական | 1 |
| Մեռած | 7 |
| | 110 |

Այս ընդհանուր տեսութեամբ Սանասարեան վարժարանի
սկզբնաւորութեան եւ զարգացման վրայ ամփոփ գաղափար մը տա-
լէ յետոյ, հարկ կը համարինք սեղեկագրիս մէջ յատուկ գլուխնե-
րով մանրամասնօրէն ներկայացնել այն կարեւոր ծանօթութիւնները
որոնք կը վերաբերին Սանասարեանի կեանքին եւ կտակին, վարժա-
րանի ծրագրին, շէնքին, ուսուցիչներուն, աշակերտներուն, Արհես-
տանոցին, վարժարանի ներքին կեանքին, ուսումնական միջոցնե-
րուն, հասոյթի աղբիւրներուն ու ծախքերուն, կարուածներուն, եւ-
այլն: Յուշակներ կցած ենք այս ծանօթութեանց, որոնք մէկ ակ-
նարկով կը պատկերացնեն վարժարանին քսանամեայ վիճակը զա-
նազան տեսակէտներով:

Ա.

ՄԿՐՏԻՉ ՍԱՆԱՍԱՐԵԱՆԻ ԿԵԱՆՔԸ

Կենսագրական տեղեկութիւններ. — Մկրտիչ Սանասարեան
ծնած է Տփլիս 1818ին. իր հայրն է Վանեցի Սարգիս Սանասար-
եան եւ մայրը Մարիամ Հէյրանեան՝ դուստր Վանեցի նշանաւոր
վաճառական Գէորգ աղա Հէյրանեանի, որ 1818ին Վանէն Տփլիս
եւ ապա Բարիզ երթալով վաճառականութեամբ մեծ հարստութեան
տիրացած էր:

Սանասարեան Մկրտիչ Աբամելիք անունով քահանայէ մը
կարգաւ կը սորվի, որովհետեւ իր մանկութեան տարիներուն Տրփ-
ղիսի մէջ տակաւին կանոնաւոր դպրոց չկար: 1824ին կը բացուի Ներ-
սէսեան վարժարանը ուր Մկրտիչ կը ստանայ իր նախնական կրթու-
թիւնը. դեռ դպրոցին ընթացքը չաւարտած իր գասընկերներէն
Ռոստոմեանցի հետ (ապա բժիշկ եւ հիմնադիր Բաքուի Մարգասիբա-
կան ընկերութեան) ճամբայ կ'ելլէ գէսի Կարին, Վենետիկ երթա-
լու եւ հոն բարձրագոյն կրթութիւն ստանալու նպատակաւ. սակայն
1835ին արդէն իր հայրը մեռած ըլլալով անոր Երեմիա քեռին, որ
ինամակալութիւն կ'ընէր, իրենց ետեւէն կը հասնի, կը բռնէ Մկրտ-
տիչն ու անոր Կարապետ եղբայրը եւ ուստական բանակին մէջ զին-
ուոր արձանագրել կու տայ:

1835էն մինչեւ 1845 տասը տարի զինուորական ծառայու-
թեան մէջ կը մնայ եւ զանազան ճակատամարտներու առթիւ երկիցս
ճանրապէս կը վիրաւորուի. կը ստանայ Ս. Գէորգի շքանշանը եւ
վտանգի ենթարկուածներ ազատելուն համար շքադրամ մը: Կրած
ծանր վէրքերուն պատճառաւ 1845ին կը թողու զինուորական աւ-
պարէզը ուր հասած էր մինչեւ ենթասպայի աստիճանին. վիրաւո-
րուած ըլլալուն համար՝ Ռուս Կառավարութիւնը իրեն կը յատկացնէ
հանգստեան թոշակ մը զոր ստացած է մինչեւ իր մահը:

Մկրտիչ Սանասարեանի պապը, Գէորգ Հէյրանեան, առանց
կտակի մեռած ըլլալով անոր մեծ հարստութիւնը կ'անցնի արու որդ-
ւոյն Գենեբալ Երեմիայի: Ասոր վրայ Մկրտիչ Սանասարեան եւ իր

Կարապետ եղբայրը կը դիմեն (1844) Տփղիսի գաւառական դատարանին եւ կը պահանջեն հանդուցեալ Գէորգ Հէյրանեանի ժառանգութեան այն մասը, որ կ'իյնար իրենց մօրը՝ քոյր Գեներալ Նրեմիայի։ Այս դատին կարգադրութիւնը Պետական Խորհրդոյ յանձնուելով 1851 ին կ'որոշուի վերջ տալ անոր՝ Վախթանգի օրէնագրութեամբ, եւ որովհետեւ այդ օրէնքով Վրաստանի մէջ կարելի չէ իրական սեռէ ժառանգորդներուն անշարժ կալուածներ տալ ցորչափ արական սեռէ ժառանգորդներ կան, ուստի եւ Սանասարեան եղբայրներուն դատը ի նպաստ իրենց չի վճռուիր։

Այս դատին պատճառաւ Մկրտիչ Սանասարեան 1849 ին իր բնակութիւնը հաստատած էր Բեթերսպուրկի։ Իր խնայած գրամին մէկ մասը յատկացուցած ըլլալով Կալկազ եւ Մէրկուր շոգենաւային ընկերութեան բաժնետոմսերուն գնման, հետզհետէ յարաբերութիւն կ'ունենայ այդ ընկերութեան բաժնեկիցներուն հետ եւ կ'ընտրուի նոյն ընկերութեան Տնօրէն՝ պաշտօն զոր ուրիշ քանի մը անօրէններու հետ վարեց մինչեւ մահուան օրը։ Այդ ընկերութիւնը, որ հազորդակցութիւն հաստատած էր Ռուսաստանի, Կովկասի եւ Պարսկաստանի միջեւ, իր շոգենաւերը կը բանեցնէր Վոլկայի եւ Կասպից ծովուն մէջ։ 1889 թուականին, այդ ընկերութիւնը հանդիսաւոր կերպով տօնեց Սանասարեանի քսանըջինգամեայ անօրէնութեան յոբելեանը, եւ ի յիշատակ անոր այս ծառայութեան, իր նաւերէն մէկը անուանեց «Մկրտիչ Սանասարեան»։ Պարսից Շահն ալ պատուած էր զինքը Շիր ու Խուրշիս պատուանշանով։

Բեթերսպուրկի հայ հասարակութիւնը 1888 ին արդէն հանդիսաւորութեամբ տօնած էր Մկրտիչ Սանասարեանի եօթանասամեակը։

Ման, յուզարկաւորութիւն եւ հոգեհանգիստներ. — 1889 ին Սանասարեան կը հիւանդանայ եւ նոյն տարուոյ նոյեմբերին կը փոխադրուի Փրանսայի Նիս քաղաքը ընկերակցութեամբ բժիշկ Պ. Թագէտ Զարարեանի. ապա կը փոխադրուի Բարիզ ուր հակառակ բրժիշկներու խնամքին, կը վախճանի 1890 Մայիս 19 ին (Հ. Տ.)։ Մարմինը կը զմուտի եւ կը պահուի Բէռլինի գերեզմանատունը։ Մայիս 30 ին Բարիզաբնակ Հայեր յիշեալ գերեզմանատունը կ'երթան եւ երկու պսակներ գնելով անոր դագաղին վրայ գամբանականներ կ'ար-

տասանեն։ Իագաղը երկաթուղիով Մարտիկա կը տարուի եւ անկէ շոգենաւ կը դրուի Պաթում փոխադրուելու համար։ Երբ մարմինը կը հասնի Կ. Պոլսոյ նաւահանգիստը, արդէն քանի մը օր առաջ Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր հրամանով հոգեհանգստեան պաշտօն կատարուած էր մայրաքաղաքիս բոլոր հայ եկեղեցիներուն մէջ. հոգեհանգստեան արարողութիւն կը կատարուի շոգենաւին մէջ ալ, եւ պսակներ կը դրուին դագաղին վրայ։ Շոգենաւը Կ. Պոլսէն ճամբայ կ'ելլէ իր մէջ ունենալով Գեր. Տ. Խորէն Արքեպիսկոպոս Նար Պէյը, Կեդրոնական Վարչութեան Կրօնական Ժողովոյ Ասենապեան, որ այդ ժողովին կողմէ իբր ներկայացուցիչ կ'ուղեկցի դագաղին մինչեւ Տրփղիս։ Հոգեհանգստեան պաշտօններ կը կատարուին նաեւ Սամսոնի, Կիրասանի եւ Տրապիզոնի մէջ երբ դագաղակիր շոգենաւը կ'սղջունէր այդ նաւահանգիստները։ Մարմինը Պաթում հասնելով կը փոխադրուի եկեղեցի բազմաթիւ յուզարկաւորներով, եւ Յունիս 15 ին կը հասնի Տփղիս, ուր Յունիս 17 ին ամենամեծ հանդիսաւորութեամբ կը կատարուի յուզարկաւորութեան ու թաղման հանդէսը։ Թափորին կը նախագահէր Նար Պէյ Սրբազան, որ խօսեցաւ գամբանականը վանքին Մայր եկեղեցւոյն մէջ. Սանասարեան կը թաղուի այդ եկեղեցւոյ բակին հիւսիսային կողմը. թէեւ ըստ կտակի հանդուցեալին մարմինը պիտի թաղուէր այն տեղ՝ ուր վարժարանը կը գտնուէր, սակայն իր քեռորդին բժիշկ՝ Պ. Աւետն Տիգրանեանց՝ Ամենայն Հայոց Սրբազան Հայրապետէն հրաման ստանալով Սանասարեանի մարմինը վերոյիշեալ տեղը թաղել տուաւ, կտակին այդ տրամադրութեան գործադրութիւնը ապագային վերապահելով (*): Հանդուցեալին դագաղին նուիրուած էին բազմաթիւ պսակներ, որոնք ապա Կարին զրկուեցան իր վարժարանին մէջ պահուելու համար, ի բաց առեալ արձաթեայ երկու շքեղ պսակներ՝ որոնց մէկը նուիրուած էր յանուն Կ. Պոլսոյ Ազգ. Վարչութեան Քաղաքական Ժողովոյ, եւ միւսը յանուն Բեթերսպուրկի հայ հասարակութեան։

Մայիս 26 ին Սանասարեանի մահը գուժուած ըլլալով Կարին վարժարանի Տեսչութեան, նոյն հետայն Կարնոյ Առաջնորդ Տ. Գէորգ

(*) Սանասարեանի մահարձանը կանգնուեցաւ 1894 Յունուար 29 ին իր թաղուած տեղը Տփղիս, ի ներկայութեան Ն. Ս. Օծութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ խուռն բազմութեան։

Ծ. Վարդապետ Իւթիւճեան, ինչան սգոյ, կը դադրեցնէ Քաղաքա-
քական ժողովոյ նիստը, եւ հետեւեալ օրն ալ Ս. Պատարագ մատու-
ցանելով հոգեհանգստեան պաշտօն կը կատարէ. սեւապատ մահաբե-
մին վրայ կը դրուին ի յիշատակ բարերարին նուիրուած բազմաթիւ
պսակներ ու փունջեր, եւ Առաջնորդ Սրբազանը կը խօսի հանգուցեա-
լին դամբանականը, յիշելով անոր բարեգործութիւնները որոնց գլխա-
ւորն է Սանասարեան վարժարանի հիմնադրութիւնը: Հոգեհանգրստ-
եան պաշտօն կը կատարուի նաեւ Մայիս 28, 29, 30, 31, Յունիս 1
եւ 2 օրերուն մէջ, եւ Մայիս 27 ին ալ Կարնոյ Յունաց եկեղեցին:

Սանասարեանի ի յիշատակ հոգեհանգստեան պաշտօն կատա-
րեց Օրմանեան Սրբազան Յունիս 3 ին Արմաշու Չարխափանի եկե-
ղեցւոյն մէջ, ուր Դպրեվանքի վերատեսուչ էր. նոյնպէս հոգեհան-
գրստեան պաշտօններ կատարուեցան Խարբերդի, Ղըղարի, Պանտր-
մայի, Մշոյ, Ս. Երուսաղէմի, Տիարպեքիլի, Արաբկերի, Պիասի-
կորքի, Աստրախանի, Չմիւռնիոյ, Նախիջլեանի Ս. Խաչ վանքին,
Ալեքսանտրօքի, Վանայ, Կարսի եւ ուրիշ քաղաքներու ու վանքե-
րու, ինչպէս նաեւ Ամերիկայի Ռուսոր քաղաքին մէջ:

Բարեգործութիւններ. — 1860 էն ետքը Սանասարեանի Բե-
թերսպուրկի ամն դուռները բաց էին հայ ուսանողներուն առջեւ.
անոնցմէ շատեր, եւ նոյն իսկ Վրացի, նիւթական օգնութիւն
ստացած են իրմէ: Սանասարեան իր բարեգործութիւնները մասնա-
ւորապէս կըթուփեան վրայ կեդրոնացուցած էր. թոշակներ կապած
էր բարձրագոյն վարժարաններու եւ մանկավարժական դպրոցներու
մէջ ուսանող երիտասարդներու. իր պաշտպանեալներուն վրայ միակ
պարտաւորութիւն մը կը դնէր, այն է ընթացաւարտ ըլլալէ յետոյ
կըթական գործին ծառայել:

Սանասարեանի ուշագրութեան գլխաւոր աւարկաներէն մէկը
եղած է նաեւ կանոնաւոր ուսումնարաններ ունենալու գործը. Սա-
նասարեան իր վարժարանը հիմնելէ եւ անոր գոյութիւնը իր կտա-
կով ապահովելէ զատ, Էջմիածնայ Դէորդեան ձեմարանին, ինչպէս
նաեւ ուրիշ դպրոցներու միշտ օգնած է. իր ծախքով վերաշինել
տուած է Վանայ Սանդխտեան աղջկանց վարժարանը զոր Վանեցիք
կը կոչեն Մարիամեան, ի յիշատակ Սանասարեանի մօր. նոյնպէս Ռե-
սէպուց երկրին Նիժ ու Վարդաշէն գիւղերուն մէջ բացած է մէյ-

մէկ վարժարան իր ծախքով, եւ Խարակոնիս գիւղին մէջ բացուած
վարժարանին յորատելութեան համար կանոնաւորաբար տարուէ
տարի վճարած է 1000 ախան ֆրանք:

Սանասարեան զանազան առիթներով ալ գրականութեան օ-
ժանդակած է. անոր ծախքով շատ մը գիւղեր եւ մանաւանդ դա-
սագիւղեր հրատարակուած են: Ինքը տասնեակ օրինակներով բա-
ժանորդ կը դրուէր հաւնած թերթերուն, յանձնարարելով այդ օրի-
նակները զրկել գիւղական վարժարաններու: 1883 թուականին Տրփ-
ղիսի Մեղր լրագրին քսանըհինգ ամեակը կատարուած ատեն Սանա-
սարեան անոր խֆագիր Պ. Պետրոս Սիմէօնեանցը շնորհաւորելով ա-
նոր մշտական թոշակ կը սահմանէ տարեկան 600 լուրլի, որուն կանոն-
աւոր վճարումը կ'ապահովէ իր կտակովն իսկ:




Բ.

ՍԱՆԱՍԱՐԵԱՆԻ ԿՏԱԿԸ

Ն Ի

ԱՆՈՐ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆԸ



1886 Յուլիս 10 թուակիր նօտարական կտակագրով, որ Բեթերսպուրկի մէջ յօրինուած է ի ներկայութեան վկայից եւ որ յատուկ տեսքով հրատարակուած է արդէն, Սանասարեան կտակած է.

1⁰. Իր քեռորդի բժիշկ Լեւոն Տիգրանեանցի երկու կալուած, իր տան կահկարասիքը եւ 100,000 ռուբլի:

2⁰. 600 ռուբլի ցկեանս տարեթոշակ խմբագիր Պ. Պետրոս Սիմէօնեանցի:

3⁰. 10,000 ռուբլի Վանայ Ս. Սանդխտեան աղջկանց վարժարանի, պայմանաւ որ դրամագրուիւր ընդ միշտ անձեռնմխելի մնայ եւ տոկոսները վճարուին:

4⁰. 400 ռուբլի իր երկու ծառաներուն միանուագ վճարելի:

5⁰. Իր մնացեալ բոլոր ստացուածքը, անշարժ կամ շարժուն, ինչպէս նաեւ իր մատենագարանը, այգոմները, հաւաքածոները եւ տպարանական կազմածները Սանասարեան վարժարանին:

Ինչպէս կ'երեւայ, 1895 ին Վսեմ. Պ. Պ. Կարապետ Նզեանցի եւ Գէորգ Եւանդուլեանցի հրատարակած տեղեկագրէն, Սանասարեանի մահէն անմիջապէս յետոյ պէտք եղած օրինական ձեւակերպութիւնները Բեթերսպուրկի մէջ կատարուելով, Հաշտարար Դատաւորին կողմէ հանգուցելոյն բնակարանը կը կնքուի եւ դատարանի պաշտօնեան կը ցուցակագրէ անոր թողած կայքն ու դրամական թուղթերը: Այս գործողութեանց ժամանակ երեւան եկած կտակագիրը, որ կտակահատար կարգած էր Պ. Պ. Կարապետ Նզեանցը եւ Գէորգ Եւանդուլեանցը եւ հանգուցեալին քեռորդին Լեւոն Տիգրանեանցը, 1890 Յունիս 19 ին կը վաւերացուի Բեթերսպուրկի նահանգական դատարանէն ի գործադրութիւն: Յունիսի վերջերը Բեթերսպուրկ կը հասնի նաեւ միւս երկու կտակահատարները, Պ. Պ. Գէորգ Եւանդուլեանց եւ Լեւոն Տիգրանեանց, եւ երեք կտակահատարները անմիջապէս կը ձեռնարկեն Սանասարեանի գործերը կարգի բերելու եւ անոր կտակը գործադրելու:

Եւանց եւ Լեւոն Տիգրանեանց, եւ երեք կտակահատարները անմիջապէս կը ձեռնարկեն Սանասարեանի գործերը կարգի բերելու եւ անոր կտակը գործադրելու:

Կտակահատարները Յուլիս 3, 4 եւ 5 ի նիստերուն մէջ, ինչպէս կ'երեւայ տեղեկագրէն, հետեւեալ տնօրինութիւնները ըրած են.

1⁰. Քննած են Սանասարեանի գրասեղանի արկղերուն եւ պահարանին մէջ գտնուած թուղթերը ուր կային մուրհակներ, պարտատոմսեր (մեծ մասամբ ուսանողներու), քանի մը թանկագին իրեղէններ եւ մասնաւոր թղթակցութիւններ. կտակահատարները կ'որոշեն ցուցակագրել թէ՛ այն մուրհակներն ու պարտատոմսերը որոնց տասնամեակը (*) չէր անցած եւ թէ՛ անոնք որոնց տասնամեակը անցած էր. կ'որոշեն նաեւ թանկագին իրեղէնները, բնակարանին բոլոր կահ կարասիքով, ըստ կտակի յանձնել Պ. Լեւոն Տիգրանեանցի, իսկ մասնաւոր թղթակցութիւններէն եւ ուրիշ թուղթերէն պահել միայն անոնք՝ որոնք որ եւ է կարեւորութիւն ունին:

2⁰. Քննած եւ վաւերացուցած են Սանասարեանի հիւանդութեան եւ թաղման ծախքերը:

3⁰. Քննած եւ վաւերացուցած են Սանասարեանի Բեթերսպուրկէն հեռանալէն առաջ, 1889 ի վերջերը, տուած երկու փոխանորդագիրներուն համաձայն Պ. Կարապետ Նզեանցի իբր փոխանորդ կատարած գործառնութիւնները:

4⁰. Նկատելով որ Սանասարեանի թէ՛ կալուածական եւ թէ՛ դրամական գործերը կեդրոնացած են գլխաւորարար Բեթերսպուրկի մէջ, կտակահատարները լիազօրութիւն կու տան Պ. Կարապետ Նզեանցին որ անիկա կառավարէ իր գործերը. կ'որոշեն միանգամայն փոխանորդագիր տալ անոր որպէս զի իրաւունք ունենայ ստանալ հարկ եղած տեղերէն գումարներու եւ տոկոսաբեր թուղթերու տուկոսները, պէտք եղած ժամանակ փոխանակէ տոկոսաբեր թուղթերը ուրիշ տեսակ տոկոսաբեր թուղթերով, զեղչմամբ հաշիւ վերջացնէ

(*) Ըստ ուսական օրէնքի, ժամանցումի (մխրուրի զեւան). կ'ենթարկուին այն մուրհակները որոնց մասին բողոք եւ պահանջ չէ եղած սուր տարուան ընթացքին մէջ:

պարտապաններու հետ, անոնցմէ մուրհակ եւ գրաւ ստանայ, եւնչ միայն այն պայմանաւ որ վեց ամիսը անգամ մը Պ. Կարապետ Եզեանց կտակակատարներուն տեղեկութիւն տայ գումարներուն վիճակին եւ եղած ծախքերուն մասին:

Կտակակատարները, պաշտօնական ցուցակին համաձայն Սանասարեանի թողած կայքը դատարանի պաշտօնեայէն ստանալէ յետոյ, ձեռնարկեցին կարգի բերելու Սանասարեանի հաշիւները այն բոլոր վարկային հաստատութեանց հետ որոնց պարտական մնացած էր հանդուցեալը. ասոր համար անհրաժեշտ եղաւ Սանասարեանի մնացած տոկոսաբեր թուղթերուն մէկ քանին վաճառել որոնցմէ գոյացած գումարը գործածուեցաւ վերոյիշեալ պէտքերուն:

Սանասարեանի բոլոր հաշիւները վերջացնելէ յետոյ, Պ. Կարապետ Եզեանց, Պ. Լեւոն Տիգրանեանցի ներկայութեամբ, Սանասարեան վարժարանի մնացած տոկոսաբեր թուղթերը՝ իբր վարժարանի սեպհական աւանդ՝ յանձնեց Ռուսիոյ Պետական Իրամատան, իրեն իրաւունք վերապահելով «ետ ստանալ այդ աւանդը կտակի տրամադրութեանց համաձայն». մի եւ նոյն ժամանակ կտակակատար Պ. Եզեանց Բեթերապուրկի Վճարման եւ Փոխատուութեան Իրամատան մէջ ընթացիկ հաշիւ մը բացաւ՝ յանուն Սանասարեանի կտակակատարներուն՝ առձեռն ծախքերու յատկացած գումարներու պահպանման համար:

Կտակակատարներու կանխապէս տուած որոշման համաձայն, կտակակատար Պ. Եւանդուլեանց փոխանորդապիւր մը յանձնեց կտակատար Պ. Եզեանցին հանդուցեալ Սանասարեանի գործերը վարելու համար, իսկ կտակակատար Պ. Տիգրանեանց չուղեց այս փոխանորդապիւրը տալ, եւ ապա 1891 Մարտ 26 ի յայտարարութեամբ, որուն վաւերացեալ մէկ օրինակը կը մնայ Խնամակալութեան քով, հրաժարեցաւ կտակակատարի պաշտօնէն: Միւս երկու կտակակատարները շարունակեցին կատարել իրենց վրայ դրուած պարտականութիւնները:

Ըստ կտակի, Սանասարեանի գրամագլուխէն պէտք է ոչ աւելի քան կէսը կալուածի վերածել եւ միւս կէսը տոկոսաբեր թուղթերու: Այդ թուղթերը՝ Սանասարեան վարժարանի անունով պէտք է պահուին կամ Ռուսաստանի Պետական Իրամատան եւ կամ Եւ-

րոպայի Պետական Իրամատաններէն մէկուն մէջ. անոնք կրնան վաճառուիլ միայն կտակակատարներու ձեռքով եւ այն ալ ցորչափ անոնցմէ երկուքը կենդանի են. իսկ կտակակատարներէն երկուքին մահէն ետքը ոչ զք իրաւունք ունի վաճառել այդ թուղթերը կամ ծանրաբեռնել զանոնք պարտքերով:


Այս պարտականութեանց ճշգիւ կատարման նպատակով Պ. Կարապետ Եզեանց 1891 ին ուղեւորեցաւ Եւրոպա, եւ, ուսումնասիրելով Եւրոպական առաջնակարգ Պետութեանց վարկային հաստատութիւնները, այն եզրակացութեան եկաւ թէ ներկային մէջ Եւրոպա չունի Պետական գրամատուն, որովհետեւ, ինչպէս Գերմանական Իրամատունը, նոյնպէս եւ Ֆրանսական կամ Անգլիական Իրամատունները բաժանորդական հաստատութիւններ են, ուստի կտակակատարները Ռուսիոյ Պետական Իրամատան յանձնեցին Սանասարեան վարժարանի կտակուած տոկոսաբեր թուղթերը՝ իբր աւանդ՝ ի պահպանութիւն, այն պայմաններու հիման վրայ որոնք որոշուած են կտակի տրամադրութեանց համեմատ: Նորին Ս. Օծութիւն Ամենայն Հայոց Հայրապետը 1891 Մարտ 19 ի Կոնդակով կտակակատարներու ձեռնարկութեան հաւանած ըլլալը յայտնելով օրհնեց անոնց գործունէութիւնը:

Կտակակատարները, աչքի առաջ ունենալով կտակին այն տրամադրութիւնը որով թոյլ տրուած է վաճառել տոկոսաբեր թուղթերը միայն կտակակատարներուն երկուքին կենդանութեան ժամանակ եւ որուն համեմատ անոնց մահէն ետքը այդ տոկոսաբեր թուղթերը անվաճառելի սեպհականութիւն մը կը դառնան վարժարանին համար, եւ նկատելով որ Սանասարեանի կտակած տոկոսաբեր թուղթերէն մէկ քանին մասնաւոր հաստատութեանց բաժնետոմսեր են, որոնց արժէքը ժամանակ առ ժամանակ կը տարուբերի եւ որոնք երբեմն աւելի եւ երբեմն պակաս եկամուտ կը բերեն, պարտք համարեցին հետզհետէ այդ մասնաւոր տոկոսաբեր թուղթերը վերածել Պետական կամ Պետութեանէն երաշխաւորուած թուղթերու, որով գոյացաւ բաւական շահ մը:

Սանասարեանի թողած մուրհակներն ու պարտատոմսերը կը հասնէին 257,285 բուպլի 52 կոպէկի, որոնցմէ 51,391 ը տասնամեակը անցած մուրհակներ, իսկ 205,894 բուպլի 52 կոպէկը տասնամեակը

կը չանցած մուրհակներ եւ պարտատոմսեր: Կտակակատարները վերջիջեալ տասնամեակը չանցած պահանջներէն յաջողեցան դանձել 35,628 բուպլի 63 կոպէկ. մնացեալ դումարէն 42,469 բուպլի 7 կոպէկ հաշուէն դուրս ձգուեցաւ գունձումը անյուստի ըլլալուն համար, իսկ 16,025 բուպլի Սանասարեանի կողմէ դանձուած ըլլալը ապացուցուեցաւ վաւերագիրներով, եւ մնաց 112,071 բուպլի 82 կոպէկ:

Պ. Կարապետ Եղեանց կտակին մէջ իրեն յանձնուած պաշտօնին համեմատ պարտական էր պատրաստել վարժարանին Կանոնադրութիւնը. այս նպատակով 1890 ի Օգոստոսին եկաւ Կ. Պոլիս եւ հոս՝ խորհրդակցելէ յետոյ տեղւոյս կարեւոր հայ անձնաւորութեանց հետ՝ պատրաստեց Սանասարեան վարժարանին Կանոնադրութիւնը, որ Կեդրոնական Վարչութեան Խառն Ժողովոյ կողմէ քննուեցաւ եւ վաւերացուեցաւ 1892 Մայիսին եւ որուն գործադրութիւնը հրամայուեցաւ 1892 Յուլիս 16 թուակիր Պատրիարքական հրամանագրով:



Պ.

ԾՐԱԳԻՐ ՎԱՐՎԱՐԱՆԻ



Սանասարեան վարժարանի նպատակն է դաստիարակել հայ մանուկները Հայ Առաքելական Ս. Եկեղեցւոյ ոգւոյն ու կանոնաց համաձայն, աւանդել անոնց ընդհանուր ուսում ու կրթութիւն, եւ կրթութիւն զանոնք արհեստից եւ արուեստագիտութեան մէջ (Տե՛ս Կանոնադրութիւն, Յօդ. 3):

Վարժարանը ունի.

1^o. Ուսումնական բաժին, 2^o. Արհեստագիտական բաժին:

ՈՒՍՈՒՄ ՆԱԿԱՆ ՌԱԺԻՆ

Վարժարանին քանամեայ չըջանը Ուսումնական բաժնի ծրագրին տեսակէտով կարելի է բաժնել երկու տասնամեակի:

Առաջին տասնամեակին Սանասարեան վարժարանը Գերմանացւոց դաստիարակարան (Irrziehungsschule) կոչուած միջնակարգ վարժարաններու համահաւասար աստիճան ունէր անոնց պէս իննամեայ ընթացքով, այսինքն ինը դասարանով (Ա. էն Թ.):

Վարժարանին ծրագիրը կը պարունակէր հետեւեալ ուսումները.

1^o. Կրօն (Սրբագան Պատմութիւն, Քրիստոնէական վարդապետութիւն եւ Պատմութիւն Հայ. Ս. Եկեղեցւոյ).

2^o. Պատմութիւն.

3^o. Աշխարհագրութիւն (քնական, ասեղաքաշխական, քաղաքական եւ վաճառականական).

4^o. Բնական գիտութիւններ (կենդանաբանութիւն, բուսաբանութիւն, հանձնաբանութիւն, երկրաբանութիւն, քնաբանութիւն եւ սարրաբանութիւն).

- 5°. Հայերէն աշխարհաբար եւ գրաբար .
- 6°. Օսմաներէն .
- 7°. Թրակներէն .
- 8°. Անգլիերէն .
- 9°. Գերմաներէն .
- 10°. Ուսողութիւն (քուսաւնութիւն, գրահաշիւ, երկրաշա-
փութիւն, եռանկիւնաշափութիւն եւ տնտեսականութիւն) .
- 11°. Գեղագրութիւն .
- 12°. Գծագրութիւն եւ նկարչութիւն .
- 13°. Զայնական երաժշտութիւն .
- 14°. Գործիական երաժշտութիւն (դաշնակ եւ ջութակ) .
- 15°. Մարմնավարձ եւ յնչկութիւն .

Այս ուսմանց իւրաքանչիւր տարւոյ եւ իւրաքանչիւր դասա-
րանի մէջ քանի՜ ժամ աւանդուիլը մանրամասն կերպով նշանակած
ենք Ա. Յուլիանի մէջ որ կը վերաբերի առաջին տասնամեակին :

Երկրորդ տասնամեակ (1891 էն 1901) . — Առաջին տասնամե-
ակին ուսմանց ընթացքը կը տեւէր ինը տարի եւ նոր ընդունուող
աշակերտ մը առանց ո եւ է նախակրթական պատրաստութիւն ու-
նենալու կրնար մտնել առաջին դասարանը (այսինքն՝ ամէնէն ստու-
րինը), սակայն 1891—92 տարեշրջանէն սկսեալ ուսմանց շրջանը վե-
րածուեցաւ եօթը տարւոյ, եօթը դասարանով, այսինքն՝ Պատրաս-
տական, Ա., Բ., Գ., Դ., Ե. եւ Զ. : Ըստ նոր ծրագրին, վարժարան
մտնել ուղղը նոր աշակերտները պէտք է գիտնան հայերէն վարժ-
կարդալ, ընթերցելի կերպով գրել, Քերականութեան մասունիք բա-
նիկն սորված ըլլալ, շարադրութիւն մը առանց ուղղագրական խո-
շոր սխալներու ի գիր առնել, եւ Թուաքանութեան յորս գործո-
ղութիւնները վարժ կերպով կատարել : Եղած նոր բաժանման հա-
մաձայն, Պատրաստական Դասարանը կը համապատասխանէ առաջին
տասնամեակին Գ. Դասարանին եւ Զ. Դասարանը առաջին տասնամե-
ակին Թ. Դասարանին :

Երկրորդ տասնամեակին մէջ, վարժարանը կը համապատաս-
խանէ Գերմանական «Realschule» կոչուած միջնակարգ վարժարան-
ներուն : Աւանդուած ուսումները նախորդ տասնամեակին ուսում-
ներն են միշտ :

Այդ ուսմանց իւրաքանչիւր տարւոյ եւ իւրաքանչիւր դասա-
րանի մէջ քանի ժամ աւանդուած ըլլալը մանրամասն կերպով նշա-
նակուած է Բ. Յուլիանի մէջ, որ կը վերաբերի երկրորդ տասնամե-
ակին :

Վարժարանին ուսմանց մանրամասն ծրագիրը պատրաստուե-
ցաւ Ուսուցչական Մասնաժողովին կողմէ՝ 1899—1900 տարեշրջա-
նին : Իւրաքանչիւր առարկայի ծրագրի պատրաստութիւնը յանձնուած
էր իր մասնագէտ ուսուցչին, որ աչքի առջեւ ունենալով օսմանեան,
գերմանական, զուիցերիական, ֆրանսական եւ ռուսական համաս-
տիճան վարժարաններու ծրագիրներէն մէկ քանին եւ ինկատի առ-
նելով միանգամայն միջավայրի պահանջները, կը կազմէր ծրագիրը
եւ Մասնաժողովին կը ներկայացնէր ի քննութիւն . Մասնաժողովը ի
հարկին կը բարեփոխէր զայն ձայնի մեծամասնութեամբ :

Տեսչութեան հաղորդուած նոր հրահանգներու համաձայն
1900—901 ի սկիզբը դասերու նոր բաշխում մը տեղի ունեցած է,
ի՛նչ որ կ'երեւայ երկրորդ տասնամեակի Յուլիանի (Տե՛ս Բ. Յուլիանի),
սակայն աւանդուած առարկաները անփոփոխ մնացած են :

Գործիական երաժշտութիւն . — Վարժարանը 1881—82
տարեշրջանին մէջ գործիական երաժշտութեան դաս չունէր : Դաշնա-
կի դասախօսութիւնը 1882—83 տարեշրջանին սկսաւ, իսկ ջութա-
կինը 1884—85 ին : Տեսչութեան որոշմամբ 1885—86 էն սկսեալ
Գործիական երաժշտութեան դասը առաջին երկու դասարաններէն
ջնջուեցաւ եւ Գ. դասարանէն սկսեալ աշակերտները կ'ուսնէին երա-
ժշտութիւն : Դաշնակաժողովները եւ ջութակաժողովները իրենց կարո-
ղութեան աստիճանին համեմատ բաժնուած էին զանազան կար-
գերու : Իրենց յատկացուած դասախօսութեան ժամերը կ'երեւան
Ա. եւ Բ. Յուլիաններուն մէջ . իսկ կրթութեանց համար իւրաքանչիւր
աշակերտի յատուկ ժամանակ որոշուած էր . այս ժամանակը՝
տարիներու համեմատ՝ եղած է կէս ժամէն սկսեալ մինչեւ երկու
ժամ :

ԱՐԿԵՍՅԱԳԻՑԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Գալով Արհեստագիտական բաժնի ծրագրին, այդ մասին պի-
տի խօսինք Արհեստանոց ընդհանուր գլուխին տակ:

ՑՈՒՑԱԿՆԵՐ

Հոս կը դնենք վերոյիշեալ երկու ցուցակները, որոնց Ա.ը կը
վերաբերի Առաջին տասնամեակին եւ Բ.ը երկրորդ տասնամեա-
կին:



Բ. Յ Ո Ւ Յ Ա. Կ

Բ. Տասնամեակի մէջ աւանդուած ուսումներու եւ իւրաքանչիւր դասարանի մէջ անոնց յատկացեալ շաբաթական ժամերու

| ԳՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՁԱՆ | 1891-1892 | | | | 1892-1893 | | | | 1893-1894 | | | | 1894-1895 | | | | 1895-1896 | | | | 1896-1897 | | | | 1897-1898 | | | | 1898-1899 | | | | 1899-1900 | | | | 1900-1901 | | | | | | | | | | | | | | | | |
|---|-----------|----|----|----|-----------|----|----|----|-----------|----|----|----|-----------|----|----|----|-----------|----|----|----|-----------|----|----|----|-----------|----|----|----|-----------|----|----|----|-----------|----|----|----|-----------|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|---|---|---|---|
| | Պ | Պ | Պ | Ն | Ջ | Ս | Պ | Ն | Ջ | Պ | Ռ | Ն | Ջ | Պ | Ս | Պ | Ջ | Պ | Ս | Ռ | Պ | Պ | Ս | Ռ | Պ | Պ | Պ | Ս | Ռ | Պ | Պ | Պ | Ս | Ռ | Պ | Պ | Պ | Ս | Ռ | Պ | Պ | Պ | Ս | Ռ | Պ | Պ | | | | | | | |
| ԿՐՈՑՆԵՐ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| ՊԱՐՏԱԻՈՐԻՑ ԱՌԱՐԿԱՆԵՐ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Կրօնք..... | 3 | 3 | 3 | 3 | 2 | 3 | 3 | 3 | 2 | 3 | 3 | 3 | 2 | 3 | 3 | 3 | 2 | 3 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | | | | |
| Եկեղեցական պատմութիւն..... | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | | | | |
| Հայերէն աշխարհագրութիւն..... | 6 | 3 | 2 | 2 | 2 | 4 | 2 | 2 | 2 | 6 | 3 | 2 | 2 | 8 | 6 | 3 | 2 | 6 | 6 | 3 | 2 | 6 | 6 | 3 | 2 | 7 | 6 | 4 | 4 | 3 | 7 | 6 | 4 | 4 | 3 | 2 | 2 | 7 | 6 | 4 | 4 | 3 | 2 | 2 | 2 | 3 | 2 | 2 | 2 | | | | |
| Հայերէն գրաբար..... | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | | | | |
| Օսմաներէն, Օսմ. Պատմութիւն եւ Օսմ. Քերականութիւն..... | 4 | 5 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 3 | 4 | 5 | 5 | 3 | 4 | 5 | 5 | 3 | 4 | 5 | 5 | 3 | 4 | 5 | 5 | 6 | 6 | 6 | 7 | 7 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 7 | 6 | 6 | 6 | 6 | 5 | 4 | 4 | 4 | | | | |
| Ֆրանսերէն..... | — | 5 | 4 | 5 | 4 | 4 | 4 | 4 | 5 | — | 7 | 6 | 6 | — | 6 | 4 | 5 | — | 6 | 6 | 7 | — | 6 | 6 | 6 | — | 6 | 6 | 6 | — | 6 | 6 | 6 | — | 6 | 6 | 6 | — | 6 | 6 | 6 | — | 6 | 6 | 6 | — | 6 | 6 | 6 | — | 6 | 6 | 6 |
| Պատմութիւն..... | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 1 | 2 | 2 | 2 | 1 | 2 | 2 | 2 | 1 | 2 | 2 | 2 | 1 | 2 | 2 | 2 | | | | |
| Աշխարհագրութիւն..... | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 1 | 2 | 2 | 2 | 1 | 2 | 2 | 2 | 1 | 2 | 2 | 2 | | | | | | | | |
| Բնապատմութիւն..... | 2 | 2 | 2 | 1 | 1 | 2 | 2 | 1 | 1 | 2 | 2 | 1 | 1 | 2 | 2 | 1 | 1 | 2 | 2 | 1 | 1 | 2 | 2 | 1 | 1 | 2 | 2 | 1 | 1 | 2 | 2 | 1 | 1 | 2 | 2 | 1 | 1 | 2 | 2 | 1 | 1 | 2 | 2 | 1 | 1 | 2 | 2 | 1 | 1 | | | | |
| Բնաբանութիւն..... | — | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | | | | |
| Տարրաբանութիւն..... | — | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | | | | |
| Քուրանութիւն..... | 6 | 4 | 2 | 1 | 1 | 4 | 2 | 1 | 1 | 6 | 4 | 1 | 1 | 6 | 5 | 5 | 1 | 5 | 4 | 4 | 2 | 5 | 4 | 4 | 3 | 5 | 4 | 4 | 3 | 2 | 6 | 4 | 3 | 3 | 2 | — | — | 1 | — | — | — | 1 | — | — | — | 1 | — | — | — | | | | |
| Տումարակարութիւն..... | — | — | 2 | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | | | | |
| Գրականութիւն..... | — | — | 2 | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | | | | |
| Երկրագիտութիւն..... | — | — | 2 | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | | | | |
| Երկրագիտութիւն Գրականութիւն..... | 2 | 2 | 1 | 1 | 1 | 2 | 1 | 1 | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | 2 | — | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 1 | 2 | 2 | 2 | 1 | 2 | 2 | 2 | 1 | 2 | 2 | 2 | 1 | 2 | 2 | 2 | | | | | | | | |
| Ֆեդագոգիկական հայերէն..... | 2 | 1 | 1 | — | — | 2 | 1 | — | — | 2 | 2 | — | — | 3 | 2 | — | — | 3 | 3 | 2 | — | 4 | 2 | 2 | — | 3 | 2 | 2 | — | 4 | 1 | 1 | 1 | — | — | — | — | 4 | 1 | 1 | 1 | — | — | — | — | | | | | | | | |
| Ֆեդագոգիկական Ֆրանսերէն..... | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | | | | | | | | |
| Երգ..... | 2 | 2 | 2 | 1 | 1 | 2 | 2 | 1 | 1 | 2 | 2 | 1 | 1 | 2 | 2 | 1 | — | 2 | 2 | 1 | — | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 1 | 2 | 2 | 2 | 1 | 2 | 2 | 2 | 1 | 2 | 2 | 2 | 1 | 2 | 2 | 2 | | | | | | | | |
| Մարմնամարզ..... | 2 | 2 | 1 | 1 | 1 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | | | | | | | | |
| Գումար շաբաթական ժամերու | 33 | 36 | 36 | 36 | 36 | 38 | 35 | 35 | 36 | 32 | 36 | 37 | 38 | 33 | 36 | 36 | 36 | 31 | 34 | 33 | 36 | 30 | 34 | 34 | 34 | 32 | 34 | 34 | 34 | 34 | 32 | 40 | 34 | 36 | 35 | 39 | 36 | 42 | 42 | 35 | 36 | 39 | 40 | 30 | 37 | 36 | 36 | 31 | 31 | | | | |
| ԿԱՄԱԻՈՐ ԱՌԱՐԿԱՆԵՐ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Գրական..... | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | — | — | — | — | 1 | 1 | — | — | 2 | 1 | — | — | — | — | — | — | 2 | — | — | — | — | — | 2 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | | | | |
| Ջութակ..... | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | | | | |
| Գումար կամուր առարկաներու..... | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Գումար պատշաճաբիջ առարկաներու..... | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Ընդհանուր գումար..... | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Միացմամբ պակասած..... | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Մնացորդ..... | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Գումար կամուր առարկաներու..... | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Գումար պատշաճաբիջ առարկաներու..... | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Ընդհանուր գումար..... | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Միացմամբ պակասած..... | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Մնացորդ..... | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

¹ Աշակերտը եւրոպական լեզուներէն միայն մէկին կը հետեւէր : — ² Այս նշանը (~) կը նշանակէ թէ դասերը միասին աւանդուած են տարբեր կարգերու :

Պ.

ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՅԱՏԿԱՑԱԾ ՇԷՆՔԵՐ

1881 Հոկտեմբեր 1ին վարձուած է Կարնոյ Կանայ ճամբայ թաղի Քիւրքճիպաչի փողոցի մէջ դանուող Քիւրքճիպաչեան կամ Մա կարեանց գերգաստանին տունը, որ 1881—82 տարեշրջանին ծառայած է իր վարժարանի շէնք :

1882 Օգոստոս 24ին ուսուցիչներն ու աշակերտները կը փոխադրուին Կարնոյ Առաջնորդարանը, զոր Կարնոյ Քաղաքական Ժողովը երեք տարուան համար յատկացուցած էր Սանասարեան վարժարանին՝ մասնաւոր պայմանադրով : Առաջնորդարանը անձուկ (*) կը դառնայ որովհետեւ թոշակաւոր աշակերտները հետզհետէ կ'աւելնան : Կարնոյ Ազգ. Վարչութիւնը տեղւոյն աղջկանց նորակառոյց դպրոցի շէնքը, յատուկ պայմանադրով, առանց վարձքի, կը յատկացնէ Սանասարեան վարժարանին, եւ 1883 Մայիս 14ին Սանասարեան հաստատութիւնը Առաջնորդարանէն կը փոխադրուի յիշեալ շէնքին մէջ՝ հարկ եղած փոփոխութիւնները տեղի ունենալէ յետոյ :

1884—85 տարւոյ մէջ աղջկանց դպրոցն ալ անբաւական կու գայ վարժարանին, ուստի հարկ կ'ըլլայ Հիմնադրին ծախքով այդ վարժարանին արեւելեան կողմը կառուցանել տալ նոր շէնք մը որոյ ստորնայարկը կը գործածուի իբրեւ խոհանոց ու դասարան, իսկ վերնայարկը իբրեւ տեսուչներու բնակարան, աշակերտաց մէկ մասին ննջարան, հիւանդանոց, եւ այլն :

Կարնոյ Քաղաքական Ժողովը 1886 Դեկտեմբերի մէջ մասնաւոր նամակով կը դիմէ Հիմնադրին, եւ կը խնդրէ որ, իբրեւ փոխարինութիւն վարժարանին եկեղեցապատկան շէնքին կիրառութեան, տարեկան գումար մը վճարելով դիւրացնէ քաղաքին ազգային վարժարաններու մատակարարութիւնը. յետ բանակցու-

(*) Առաջնորդարանի ներքնայարկի սենեակներէն բանկալը վարժարանին պէտքերուն կը յատկացուի, եւ 1882 Սեպտեմբերին Հիմնադրին ծախքով նոր բանկալ մը կը շինուի Եկեղեցւոյ գաւիթին մէջ :

թեան, թէեւ ըստ պայմանագրի 1887—88 տարուան մէջ ալ վարժարանը իրաւունք ունէր յիշեալ եկեղեցապատկան շէնքին մէջ մնալու առանց վարձքի, սակայն վարժարանին Հիմնադիրը կը ստանձնէ տարեկան 100 Օսմ. լիւրայի դումար մը վճարել տեղւոյն Ազգ. Մնասկին իբրեւ նոյն շէնքին գործածութեան փոխարինութիւն, այդ տարեշրջանէ սկսեալ :

1888—89 վարժարանական տարւոյն մէջ, Կարնոյ Թաղական Խորհուրդը եւ Քաղաքական Ժողովը վարժարանին եկեղեցապատկան շէնքին վարձքի խնդիրը նորէն կը յուշեն, եւ երկար բանակցութիւններէ ետքը 7 յոգուածէ բաղկացեալ եւ 1888 Նոյեմբեր 18 թուականով պայմանագիր մը կը կնքուի Կարնոյ Քաղաքական Ժողովին եւ Սանասարեան վարժարանի Տեսչութեան միջեւ : Հակառակ յիշեալ պայմանագրին բացորոշ տրամադրութեանց, Բարերարին մահէն տարի մը ետքը, 1891 ին, գանուեցան Կարնեցիներ որոնք անբաւական համարելով տարեկան 100 Օսմ. լիւրայի դումարն, սկսան նորէն յուշել վարձքի խնդիրը, սակայն Աշքեան Տ. Խորէն Պատրիարքի 1891 Մայիս 21 թուականով Կարնոյ Պատր. Փոխանորդին ուղղած մէկ Պատրիարքական պաշտօնագիրը յանուն Ազգ. Կեդրոնական Վարչութեան Քաղաքական Ժողոյ հրամայած ըլլալով յարգել յիշեալ պայմանագիրը, 1891 Օգոստոս 30 ին Կարնոյ Գաւառական Ժողովը, միաձայնութեամբ կ'որոշէ համակերպիլ Պատրիարքական հրամանին, եւ իրաց վիճակը անփոփոխ պահելով օրինաւոր ճանչնալ վերոգրեալ 1888 Նոյեմբեր 18 թուակիր պայմանագրութիւնը, որ Ազգ. Կեդրոնական Վարչութեան ալ հաւանութեան արժանացած է :

1893—94 տարեշրջանին սկիզբը, Հոգաբարձութիւնը հարկ տեսաւ վարժարանին շէնքերուն մէջ քանի մը ներքին փոփոխութիւններ մտցնել : Հին շէնքին մէջ գտնուած ննջարահը եւ երկու դասարանները միջնորմներու բարձմամբ կամ յարակից սենեակներու միացմամբ խիստ ընդարձակուեցան . իսկ նոր շէնքին մէջ գտնուած ննջարահը աւելորդ դառնալով միջնորմներու միջոցաւ վերածուեցաւ քանի մը սենեակներու, որոնց մէկը կը ծառայէ իբր ընագիտութեան թանգարան ու դասարան, երկուրը իբր հիւանդանոց, մէկը իբրեւ դեղարան եւ մէկը իբրեւ տեսչական սենեակ : Ասկէ զատ ննջարահին եւ դասարաններուն բարեխառնութիւնները աւելի եւս կանո-


նաւորելու համար պատերուն մէջ հիւսուած մեծ վառարաններ շինուեցան Ռուսաստանէն եկած վարպետի մը ձեռամբ :

Վարժարանի շրջափակին մէջ կառուցուած նոր շէնքէն զատ, 1886—87 ին շինուած է Արհեստանոց մը, ինչպէս պիտի տեսնենք Արհեստանոց Գլուխին մէջ . նոյնպէս 1896—97 ին շինուած է փայտանոց մը, Արհեստանոցին յարակից ներկատուն մը եւ փուռ մը :



Ե.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԸ



Վարժարանը, երեք տեսակներէն զատ որոնք 1891 էն մինչեւ 1901 դասախօսած են, ունեցած է գլխաւոր ուսուցիչներ եւ օգնական ուսուցիչներ :

ՏԵՍՈՒՉՆԵՐ

Պ. Գ. Աբուլեան. վերջին տարեշրջանին կը դասախօսէր միայն Պատմութիւն, Աշխարհագրութիւն, Գերմաներէն. քսանամեայ շրջանին մէջ աւանդած է նաեւ Մարմնամարզ, Զութակ, եւ այլն :

Պ. Յ. Մասաթեան. վերջին տարեշրջանին կը դասախօսէր միայն Բնագաւտմութիւն եւ Գերմաներէն. քսանամեայ շրջանին մէջ աւանդած է նաեւ Տարրաբանութիւն, Բնաբանութիւն, Երկրաչափութիւն, Գծագրութիւն, Մարմնամարզ, եւ այլն :

Պ. Ս. Սողիկեան. վերջին տարեշրջանին կը դասախօսէր միայն Կրօնք, Փրանսերէն եւ Գաղղի. դասախօսած է նաեւ Երգ, Գեղագրութիւն, Գերմաներէն, եւ այլն :

ԳԼԵԱԽՈՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

Տ. Համազասպ Բահանայ Փոյեան (1881—1883). դասախօսած է Կրօնք եւ Եկեղեցական Պատմութիւն :

Պ. Գ. Ումիկեան (1884—1901). Սանասարեան սան, Բարերարին ծախքով Բեթերապուրկի Բաղմարուեստեան վարժարանին մէջ պատրաստուած էր Ուսողական Գիտութեանց եւ Ուսուցչութեան. վերջին տարեշրջանին կը դասախօսէր Թուարանութիւն, Գրահայել, Երկրաչափութիւն, Եւանկիւնաչափութիւն, Տոմարակալութիւն :

Պ. Ասուածասուր Խաչատրեան (1885—1892 եւ 1896—1901). Ս. Էջմիածնայ Գէորգեան ճեմարանէն ընթացաւարտ, 1892—93 տարեշրջանին սկիզբը թողուց վարժարանը եւ Գերմանիա դնաց իր բանասիրական ուսումները կատարելագործելու. չորս տարի մնաց

Հոն մասնաւորապէս Սթրազպուրկի Համարարանին հայադէտ ուսուցիչ Հայնրիչ Հիւպանի ձեռքին տակ մշակելով իր մասնագիտութիւնը. վերջին տարեշրջանին կ'աւանդէր Հայերէն (գրաբար եւ աշխարհաբար), նոյնպէս Պատմութիւն եւ Եկեղեցական Պատմութիւն : Հաճրգ Մէհմէտ Է. (1885—1887). օգնական ուսուցիչ Կարնոյ վարժապետանոցի, աւանդեց Օսմաներէն :

Պ. Կորիւն Մկրտիչեան (1886—1892). Գէորգեան ճեմարանի ընթացաւարտ, աւանդած է Պատմութիւն եւ Հայերէն : 1892—93 տարեշրջանի սկիզբը կը ստանձնէ նաեւ Պ. Խաչատրեանի դասերը. կը վախճանի հետախօսէ 1892 Հոկտեմբեր 31 ին (*):

Պ. Ինիաւ Իսաբիա (1886—1889). կ'աւանդէր Փրանսերէն :

Պ. Միհրան Խորոմեան (1887—1890). ընթացաւարտ Կ. Պոլսոյ Կայսերական Լիսէին, կը դասախօսէր Օսմաներէն եւ Փրանսերէն :

Էօմէր Է. (1888—1890). կ'աւանդէր Օսմ. Գեղագրութիւն :

Պ. Ժան Տալիզլ (1889—1890 տարեշրջանին). կ'աւանդէր Փրանսերէն :

Պ. Ռիւալ Վիկուոէօ (1890—1893). կ'աւանդէր Փրանսերէն :

Մէհմէտ Շիւքի Է. (1890—1893). կ'աւանդէր Օսմաներէն, Օսմանեան Պատմութիւն եւ Օսմ. Գեղագրութիւն :

Պ. Նեան Մասաթեան (1890—1891 տարեշրջանին). աւանդած է Բնագաւտմութիւն եւ Տարրաբանութիւն :

Պ. Խ. Պաղտասարեան (1893—1894 տարեշրջանին). աւանդեց Հայերէն (գրաբար եւ աշխարհաբար), Պատմութիւն եւ Եկեղեցական Պատմութիւն :

Պ. Նիկողոս Թոթվայեան (1893—1901). վերջին տարեշրջանին կ'աւանդէր Օսմաներէն եւ Հայերէն. աւանդած է նաեւ Փրանսերէն :

Պ. Ժան Ռընօ (1893—1894 տարեշրջանին). կ'աւանդէր Փրանսերէն :

(*) Պ. Կորիւն Մկրտիչեան Մշոյ Զիարէթ գիւղէն էր. թողած է արձակ եւ ոտանաւոր գրուածներ, որոնցմէ ոմանք հրատարակուած են Արեւելի մէջ : Թաղուեցաւ Կարնոյ գերեզմանատունը Պօղոս Դելփեանի շիրմին քով :

Պ. Յ. Գուրգէն (1894—1896). աւանդած է Հայերէն (գրարար եւ աշխարհագրար) :

Պ. Ա. Լապէրպիս (1896—1898). աւանդեց Ֆրանսերէն :

Պ. Էսմօն Կիլարմօ (1898—1900). աւանդեց Ֆրանսերէն :

Պ. Գ. Ճիլէրնեան (1899—1901). Սանասարեան սան, վերջին տարեշրջանին կ'աւանդէր Բնարանութիւն, Տարրաբանութիւն եւ Աշխարհագրութիւն :

Պ. Ա. Աղապալեան (1899—1901). Սանասարեան սան, վերջին տարեշրջանին կ'աւանդէր Թուարանութիւն եւ Գծագրութիւն :

Պ. Ժ. Քրէսթէյ (1900—1901 տարեշրջանին). կ'աւանդէր Ֆրանսերէն :

ՕԳՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

Վարժարանը ունեցած է նաեւ օգնական ուսուցիչներ որոնց անունները կ'երեւան Գ. Յուլցակին մէջ : Ասոնք մեծ մասամբ վարժարանին շրջանաւարաներն են եւ պաշտօնավարած են ուսուցչութեան պատրաստուելու համար : Իբր օգնական ուսուցիչ երկարատեւ պաշտօնավարութիւն ունեցած են միայն՝ Պ. Տիգրան Բրուտեան (1884 էն 1893 եւ 1898—1900), որ կ'աւանդէր Օսմաներէն եւ Թուարանութիւն, եւ Պ. Գրիգոր Ղոյինեան (1891—1901), որ կ'աւանդէր՝ վերջին տարեշրջանին՝ ջութակ, երգ, կրօնք եւ աշխարհագրութիւն : Յիշեց նաեւ Պ. Միսաք Ֆէթվաճեան, որ 1887 Փետուար 21 ին կրնաքեց իր մահկանացուն, 21 տարեկան. դաշնակի ուսուցիչ էր՝ մասնաւորապէս յաջողակ գեղարուեստի եւ երաժշտութեան մէջ :

ՑՈՒՑԱԿ

Գ. Յուլցակին մէջ նշանակուած է ընդհանուր ուսուցիչներուն վարժարան մտնելու եւ վարժարանէն ելլելու թուականները իրենց շարաթական դասախօսութեանց ժամերով :




Գ Յ Ո Ւ Յ Ա Կ

Քաանամայ ընդհանուր ցուցակ ուսուցիչներու իրենց դասախօսութեանց շարքական ժամերով

| ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ | ՍԿՐԵԱՌՈՐՈՒԹԻՒՆ | ԴԱԴԱՐՈՒՄ | 1881-1882 | 1882-1883 | 1883-1884 | 1884-1885 | 1885-1886 | 1886-1887 | 1887-1888 | 1888-1889 | 1889-1890 | 1890-1891 | 1891-1892 | 1892-1893 | 1893-1894 | 1894-1895 | 1895-1896 | 1896-1897 | 1897-1898 | 1898-1899 | 1899-1900 | 1900-1901 |
|---|------------------|------------------|---------------------|-----------|-----------|-----------|------------|------------|------------|------------|------------|------------|------------|------------|------------|------------|------------|------------|------------|------------|------------|------------|
| | | | Ա. ՏԵՍՈՒՉՆԵՐ | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Գեորգ Աբուլեան | Սկիզբէն | | 10 | (*) | (*) | 26 | 23 | 22 | 24 | 26 | 27 | 21 | 16 | 16 | 16 | 18 | 16 | 16 | 18 | 20 | 20 | 20 |
| Յովսէփ Մասաբեան | Սկիզբէն | | 5 | 10 | 22 | 19 | 23 | 21 | 24 | 23 | 26 | 18 | 16 | 16 | 17 | 19 | 13 | 16 | 19 | 20 | 20 | 21 |
| Մարգիս Սողիկեան | Սկիզբէն | | 7 | 11 | 28 | 29 | 28 | 20 | 24 | 24 | 26 | 20 | 16 | 16 | 16 | 17 | 16 | 14 | 18 | 20 | 20 | 20 |
| Բ. ԳԼԵԱՒՈՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Համազասպ Բննյ. Ֆրոյեան | Սկիզբէն | 82-83ի վերջը | 4 | 4 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| Դաւիթ Ումիկեան | 84 Հոկտեմբերին | | — | — | — | 6 | 16 | 18 | 20 | 23 | 25 | 23 | 20 | 16 | 20 | 21 | 19 | 16 | 22 | 23 | 23 | 24 |
| Աստուածատու Խաչատրեան | 85-86ի սկիզբը | | — | — | — | — | 12 | 17 | 18 | 18 | 16 | 18 | 12 | — | — | — | — | 24 | 23 | 24 | 24 | 25 |
| Համբր Մէնսէ Էժ | 85-86ի սկիզբը | 87 Հոկտ. 27ին | — | — | — | — | 4 | 5 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| Կորիւն Մկրտիչեան | 86-87ի սկիզբը | † 92 Հոկտ. 31ին | — | — | — | — | — | 16 | 19 | 21 | 18 | 21 | 19 | 16 | — | — | — | — | — | — | — | — |
| Ինիաս Իսղբիս | 86-87ի սկիզբը | 88-89ի վերջը | — | — | — | — | — | 4 | 8 | 17 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| Միսրեան Խորոմանեան | 87 Նոյեմ. 20ին | 89-90ի վերջը | — | — | — | — | — | — | 9 | 13 | 24 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| Էօմէր Էժ. | 87-88ի սկիզբը | 89-90ի վերջը | — | — | — | — | — | — | 2 | 4 | 5 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| Ժան Տայիզով | 89-90ի սկիզբը | 89-90ի վերջը | — | — | — | — | — | — | — | — | 15 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| Ռիբան Վիկտոր | 90-91ի սկիզբը | 92-93ի վերջը | — | — | — | — | — | — | — | — | — | 14 | 15 | 13 | — | — | — | — | — | — | — | — |
| Մէնսէ Շիւրի Էժ. | 90-91ի սկիզբը | 92-93ի վերջը | — | — | — | — | — | — | — | — | — | 21 | 15 | — | — | — | — | — | — | — | — | — |
| Նեան Մասաբեան | 90-91ի սկիզբը | 90-91ի վերջը | — | — | — | — | — | — | — | — | — | 8 | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| Խ. Պաղասարեան | 93-94ի սկիզբը | 93-94ի վերջը | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 24 | — | — | — | — | — | — | — |
| Նիկողոս Թորվայեան | 93-94ի սկիզբը | | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 24 | — | — | — | — | — | — | — |
| Ժ Ռբնօ | 93-94ի սկիզբը | 93-94ի վերջը | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 15 | — | — | — | — | — | — | — |
| Յակոբ Գուրգէն | 94-95ի սկիզբը | 95-96ի վերջը | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 20 | 22 | — | — | — | — | — |
| Ա. Լապէապիս | 96-97ի սկիզբը | 97-98ի վերջը | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 2 | 8 | — | — | — |
| Էսմոն Կիլյան | 98-99ի սկիզբը | 99-900ի վերջը | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 16 | 18 | — |
| Գ. Ճիլերեան | 99-900ի սկիզբը | | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 25 | 12 |
| Ա. Աղապալեան | 99-900ի սկիզբը | | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 27 | 10 |
| Ժ. Բրէարէ | 1900-901ի սկիզբը | | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 18 |
| Գ. ՕԳՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Յարութն. Աւետիսեան (Տ. Սրգսեան) | 82-83ի սկիզբը | 83 Փետր. 28 | — | 1 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| Տիգրան Բրուսեան | 83 Մարտ 6ին | 1899-900ի վերջը | — | — | 2 | 4 | 3 | 8 | 4 | 4 | 5 | 6 | 4 | 4 | — | — | — | — | 5 | 18 | 12 | — |
| Յակոբ Տ. Պողոսեան | 87-88ի սկիզբը | 87-88ի վերջը | — | — | — | — | — | — | — | 4 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| Մարտիրոս Քէնսիկեան | 88-89ի սկիզբը | 90-91ի վերջը | — | — | — | — | — | — | — | 9 | 9 | 6 | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| Շրանոս Աւետիսեան | 91-92ի սկիզբը | 91-92ի վերջը | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 7 | — | — | — | — | — | — | — | — |
| Տիգրան Գեորգեան | 91-92ի սկիզբը | 91-92ի վերջը | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 5 | — | — | — | — | — | — | — | — |
| Գրիգոր Դոյինեան | 91-92ի սկիզբը | | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 10 | 9 | 10 | 14 | 13 | 15 | 19 | 22 | 25 |
| Յակոբ Գրիգորեան | 91-92ի սկիզբը | 91-92ի վերջը | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 10 | — | — | — | — | — | — | — | — |
| Գրիգոր Շէյլժմեան | 91-92ի սկիզբը | 92-93ի վերջը | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 2 | 6 | — | — | — | — | — | — | — |
| Գեորգ Ճիլերեան | 91-92ի սկիզբը | 93-94ի վերջը | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 5 | — | 5 | — | — | — | — | — | — |
| Յարութիւն Սարգսեան | 91-92ի սկիզբը | 91-92ի վերջը | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 8 | — | — | — | — | — | — | — | — |
| Գաբրիէլ Տ. Սերոբեան | 91-92ի սկիզբը | 91-92ի վերջը | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 2 | — | — | — | — | — | — | — | — |
| Յարութիւն Տիգրանեան | 91-92ի սկիզբը | 91-92ի վերջը | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 5 | — | — | — | — | — | — | — | — |
| Յարութիւն Թիւրքիւնեան | 92-93ի սկիզբը | 92-93ի վերջը | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 15 | — | — | — | — | — | — | — |
| Սիմոն Աղապալեան | 93-94ի սկիզբը | 93-94ի վերջը | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 8 | — | — | — | — | — | — | — |
| Հրաչեայ Անտեան | 94-95ի սկիզբը | 94-95ի վերջը | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 15 | — | — | — | — | — | — |
| Միսաք Ֆելիանեան | 95-96ի սկիզբը | † 97 Փետր. 27ին | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 15 | 12 | — | — | — | — |
| Սուրիաս Սողոմոնեան | 97-98ի սկիզբը | 900 Սեպտ.ի վերջը | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 19 | 23 | 24 | — |
| Յակոբ Պէղրեան | 1900-901ի սկիզբը | | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 18 |
| Վահան Գույումեան | 1900-901ի սկիզբը | | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 18 |
| Լեւոն Փապանեան | 1900-901ի սկիզբը | | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 9 |
| Գումար | | | 26 | 26 | 52 | 84 | 109 | 131 | 156 | 182 | 196 | 176 | 187 | 148 | 153 | 148 | 138 | 138 | 174 | 218 | 269 | 242 |

(*) Արուսեան էֆ. 1882-83 եւ 1883-84 տարիներու մէջ դասախօսած չէ՝ իր աչքի բժշկութեան համար Կ. Պոլիս մնալուն պատճառաւ:



Զ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ

Հետեւեալ Դ. Ե. Զ. Է. Ը. եւ Թ. Յուցակներուն մէջ կը ներկայացնենք վարժարանին Ուսումնական բաժնի աշակերտներուն վրայ մանրամասն վիճակագրական տեղեկութիւններ :

Դ. Յուցակը կը ներկայացնէ քսանամեայ շրջանին մէջ կանոնաւորապէս դասարան փոխող, կրկնող, վարժարանական տարւոյն սկիզբը եւ ընթացքին մէջ ընդունուած աշակերտաց, ինչպէս նաեւ շրջանաւարտներու եւ շրջանաւարտ չեղած վարժարանէն ելլող աշակերտաց թիւերը :

Ե. Յուցակը կը ներկայացնէ թոշակաւոր եւ ձրիավարժ աշակերտները իրենց ծննդավայրերուն համեմատ : Ինչպէս կ'երեւայ այս ցուցակէն, ամէնէն աւելի թոշակաւոր աշակերտներ զրկած են Կարին, Արարկիր, Տրապիզոն, Եւզոկիա, Կ. Պոլիս, Բաղէշ, Եւայն. Իսկ ձրիավարժներ՝ Կարին, Վան, Ակն, Արարկիր, Մուշ, Եւայն : Այն թոշակաւորները որոնք ի վերջոյ իրրեւ ձրիավարժ ընդունուած են վարժարան, փոխանցուած են ձրիավարժներու շարքին մէջ : Այս կարգի թոշակաւոր-ձրիավարժներու թիւն է 16 :

Զ. Յուցակը կը ներկայացնէ քսանամեայ շրջանի իւրաքանչիւր տարւոյ աշակերտները ձրիավարժներու եւ թոշակաւորներու բաժանմամբ :

Է. Յուցակը կը ներկայացնէ աշակերտները դասարաններու բաժանմամբ : Ինչպէս կ'երեւայ այս Յուցակէն, 1881էն 1891 ուսմանց ընթացքը կը տեսէր ինը տարի, սակայն 1891—92 տարեշրջանէն սկսեալ ուսմանց շրջանը վերածուեցաւ եօթը տարուան, եւ եղած նոր բաժանման համաձայն Պատրաստական դասարանը կը համապատասխանէ նախկին Դ. դասարանին. Ա. ը Դ. ին, Բ ը Ե. ին, Դ. ը Զ. ին, Դ. ն Է. ին, Ե. ը Ը. ին եւ Զ. ն Թ. ին : 1895—96 ի Դ. դասարանէն կարգ մը աշակերտներ եղած ըլլալով, մնացած աշակերտները ձուլուած են նոյն տարուան Բ. դասարանի յաջողակներուն հետ եւ այսպէս կազմուած է 1896—97 ի Դ. դասարանը :

Ը. Յուշակը կը ներկայացնէ պաշտպանեալ աշակերտաց բարե-
րարներու անունները 1895—96 ի տարեշրջանէն սկսեալ : 1887—88
տարեշրջանի սկիզբէն մինչեւ 1894—95 տարեշրջանին վերջը՝ Կիւրին-
ցի Գրիգոր Էֆ. Թօփալեան իր ծախքով զիշերօթիկ սան մը պահած
է վարժարանիս մէջ Կիւրինի Ազգ. դպրոցին իրր ուսուցիչ պատրաս-
տել տարւ համար զայն : Նոյնպէս Արարկիրցի Զարար Էֆ. Խէրպէկ-
եան իր ծախքով 1899—900 ի տարեշրջանին՝ ցերեկեայ աշակերտ մը
պահած է վարժարանիս մէջ :

Թ. Յուշակէն կ'երեւայ թէ իւրաքանչիւր տարի քանի՞ աշա-
կերտ հետեւած են ջութակի եւ դաշնակի դասերուն :



Դ. ՑՈՒՑԱԿ

ՔՍԱՆԱՄԵԱՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ Վ.ԻՃԱԿԱԳԻՐԱԿԱՆ ՅՈՒՅԱԿ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԱԿՆԻ

| Ա Շ Ա Կ Ե Ր Տ Ն Ե Ր | 1881—1882 | 1882—1883 | 1883—1884 | 1884—1885 | 1885—1886 | 1886—1887 | 1887—1888 | 1888—1889 | 1889—1890 | 1890—1891 | 1891—1892 | 1892—1893 | 1893—1894 | 1894—1895 | 1895—1896 | 1896—1897 | 1897—1898 | 1898—1899 | 1899—0061 |
|---|-----------|-----------|-----------|-----------|------------|------------|------------|------------|------------|------------|------------|-----------|-----------|-----------|-----------|-----------|------------|------------|------------|
| Կանոնադրաբէս դասարան փոխող | — | 17 | 29 | 70 | 86 | 111 | 136 | 137 | 123 | 123 | 99 | 77 | 51 | 42 | 56 | 41 | 55 | 84 | 109 |
| Կրկնող | — | — | 3 | 2 | 1 | 2 | — | 2 | — | — | — | 1 | — | 10 | 2 | 17 | 30 | 36 | 40 |
| Նոր ընդունում | 14 | 12 | 36 | 21 | 35 | 44 | 21 | — | 2 | — | 28 | 3 | 25 | 18 | 26 | 29 | 41 | 33 | 23 |
| Վերսին ընդունում | — | — | — | — | — | — | — | — | 1 | — | — | — | 5 | 2 | — | — | 1 | 1 | 3 |
| Վարժարանական սարուան ընթացին մէջ մեկնող | 5 | 6 | 11 | — | — | 1 | 1 | — | — | — | — | — | — | — | 3 | 9 | 5 | 16 | 4 |
| Դումար ընդամուս ասակերաց | 19 | 35 | 79 | 93 | 122 | 158 | 158 | 139 | 131 | 123 | 127 | 81 | 81 | 72 | 84 | 90 | 136 | 159 | 187 |
| Վարժարանական սարուան ընթացին մէջ պակասող | 2 | 3 | 7 | 5 | 8 | 22 | 19 | 11 | 4 | 2 | 3 | — | 3 | — | 10 | 3 | 7 | 5 | 5 |
| Մինչեւ սարուան վերջը մնացող | 17 | 32 | 72 | 88 | 114 | 136 | 139 | 128 | 127 | 121 | 124 | 81 | 78 | 72 | 74 | 87 | 129 | 154 | 182 |
| Շրջանաւարտ | — | — | — | — | — | — | — | — | — | 21 | 23 | 17 | 12 | 11 | — | — | — | — | 10 |
| Տարեշրջանին վերջը Երջանաւարտ չեղած դարձնէ ելլող | — | — | — | 1 | 1 | — | — | — | 4 | 1 | 23 | 13 | 14 | 3 | 16 | 1 | 9 | 16 | 16 |

Ե. ՅՈՒՑԱԿ

ԲՍԱՆԱՄԵԱՅ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՅՈՒՑԱԿ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԹՈՇԱԿԱՌՈՐ ԵՒ ՋՐԻԱՎԱՐԺ ԱՇԱԿԵՐՍԱՅ ԻՐԵՆՅ ԵՆԵԳԱՎԱՅՐԵՐՈՒՆ ՀԱՄԵՄԱՏ

| ԵՆԵԳԱՎԱՅՐ ԱՇԱԿԵՐՍԱՅ | ԹՈՇԱԿԱՌՈՐ | ԵՆԵԳԱՎԱՅՐ ԱՇԱԿԵՐՍԱՅ | ՋՐԻԱՎԱՐԺ |
|----------------------------|------------|-----------------------|------------|
| 1. Կարին | 74 | 1. Կարին | 47 |
| 2. Արաբկիր | 35 | 2. Վան | 15 |
| 3. Տրապիզոն | 32 | 3. Ակն | 12 |
| 4. Ելզովիա | 19 | 4. Աբազկիր | 11 |
| 5. Կ. Պոլիս | 11 | 5. Մալե | 10 |
| 6. Բաղե | 10 | 6. Երիզ | 7 |
| 7. Ակն | 8 | 7. Ելզովիա | 7 |
| 8. Կեսարիա | 7 | 8. Բաբերդ | 6 |
| 9. Սամսոն | 7 | 9. Կիրին | 5 |
| 10. Սեբասիա | 7 | 10. Տիարպեֆիր | 5 |
| 11. Երիզ | 6 | 11. Տրապիզոն | 5 |
| 12. Տիպուի | 6 | 12. Եղեցիա | 4 |
| 13. Խնուս | 5 | 13. Խարբերդ | 4 |
| 14. Կիրին | 5 | 14. Կ. Պոլիս | 4 |
| 15. Բղի | 5 | 15. Մալաթիա | 4 |
| 16. Եօզաս | 4 | 16. Շապին-Գարա-Հիսար | 4 |
| 17. Մալե | 4 | 17. Սեբասիա | 4 |
| 18. Շապին-Գարա-Հիսար | 4 | 18. Բաղե | 3 |
| 19. Պայազիս | 4 | 19. Եօզաս | 3 |
| 20. Վան | 4 | 20. Խնուս | 3 |
| 21. Արուին (Ռուսիա) | 3 | 21. Սղերդ | 3 |
| 22. Բաբերդ | 3 | 22. Բղի | 3 |
| 23. Խարբերդ | 3 | 23. Այնթապ | 2 |
| 24. Տիարպեֆիր | 3 | 24. Ասանա | 2 |
| 25. Տիփրիս | 3 | 25. Բալու | 2 |
| 26. Գաղաթիա | 2 | 26. Հանքն | 2 |
| 27. Կարս | 2 | 27. Մակկ (Պարսկաստան) | 2 |
| 28. Ալեքանդրաբոլ (Ռուսիա) | 1 | 28. Չարսաննազ | 2 |
| 29. Ադրուբայն () | 1 | 29. Չախլաձազ | 2 |
| 30. Ամասիա | 1 | 30. Տիփրիս | 2 |
| 31. Այնթապ | 1 | 31. Ալուկերս | 1 |
| 32. Գերջան | 1 | 32. Ամասիա | 1 |
| 33. Ջիլե | 1 | 33. Արնե | 1 |
| 34. Չմիւռնիա | 1 | 34. Բասեն | 1 |
| 35. Էնկիւրի | 1 | 35. Գոնեա | 1 |
| 36. Կիրասոն | 1 | 36. Գերջան | 1 |
| 37. Հերեֆ (Երզնա) | 1 | 37. Չեյրուն | 1 |
| 38. Հիւսնիսանսուր | 1 | 38. Չմիւռնիա | 1 |
| 39. Մարզաւան | 1 | 39. Էնկիւրի | 1 |
| 40. Նոր-Նախիջեւան (Ռուսիա) | 1 | 40. Թովրաֆ-Բալե | 1 |
| 41. Չարսաննազ | 1 | 41. Կեսարիա | 1 |
| 42. Տիփրիս (Ռուսիա) | 1 | 42. Կիսկիս (Կարին) | 1 |
| 43. Օրսու | 1 | 43. Կիսկիսեւան | 1 |
| | | 44. Հալեպ | 1 |
| | | 45. Հիւսնիսանսուր | 1 |
| | | 46. Մանազկերս | 1 |
| | | 47. Մարզաւան | 1 |
| | | 48. Նարման (Կարին) | 1 |
| | | 49. Պայազիս | 1 |
| | | 50. Պանսրմա | 1 |
| | | 51. Պաւ-Բալե | 1 |
| | | 52. Պրուսա | 1 |
| | | 53. Սասուն | 1 |
| | | 54. Տիփրիս (Ռուսիա) | 1 |
| | | 55. Բիւրմաս (Պրուսա) | 1 |
| Գումար | 292 | Գումար | 210 |

Զ. ՅՈՒՑԱԿ

ԲՍԱՆԱՄԵԱՅ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՅՈՒՑԱԿ ԱՇԱԿԵՐՍԱՅ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՋՐԻԱՎԱՐԺՆԵՐՈՒ ԵՒ ԹՈՇԱԿԱՌՆԵՐՈՒ ԲԱԺԱՆՄԱՍԻ

| ՏԱՐԵՇՐՋԱՆ | Փիեթրոփի օրիակարձ (Սամսարեան սան) | Փիեթրոփի պաշտպան-եալ բնակարան | Փիեթրոփի կիսաբնակարան | Փիեթրոփի բնակարան | Յերեկեայ օրիակարձ (Սամսարեան սան) | Յերեկեայ պաշտպան-եալ բնակարան | Յերեկեայ բնակարան | Գումար |
|-----------|-----------------------------------|-------------------------------|-----------------------|-------------------|-----------------------------------|-------------------------------|-------------------|--------|
| 1881—1882 | 19 | — | — | — | — | — | — | 19 |
| 1882—1883 | 23 | — | — | 11 | — | — | 1 | 35 |
| 1883—1884 | 40 | — | — | 31 | — | — | 8 | 79 |
| 1884—1885 | 36 | — | — | 50 | 1 | — | 6 | 93 |
| 1885—1886 | 36 | — | — | 78 | — | — | 8 | 122 |
| 1886—1887 | 35 | — | — | 123 | — | — | — | 158 |
| 1887—1888 | 30 | 1 | — | 127 | — | — | — | 158 |
| 1888—1889 | 29 | 1 | — | 109 | — | — | — | 139 |
| 1889—1890 | 29 | 1 | 2 | 99 | — | — | — | 131 |
| 1890—1891 | 29 | 1 | 4 | 89 | — | — | — | 123 |
| 1891—1892 | 25 | 1 | — | 101 | — | — | — | 127 |
| 1892—1893 | 19 | 1 | — | 61 | — | — | — | 81 |
| 1893—1894 | 30 | 1 | — | 50 | — | — | — | 81 |
| 1894—1895 | 33 | 1 | — | 26 | — | — | 12 | 72 |
| 1895—1896 | 32 | 4 | — | 25 | — | — | 23 | 84 |
| 1896—1897 | 31 | 24 | — | 11 | — | — | 24 | 90 |
| 1897—1898 | 32 | 52 | — | 11 | 5 | — | 36 | 136 |
| 1898—1899 | 32 | 59 | — | 11 | 12 | — | 45 | 159 |
| 1899—1900 | 24 | 72 | — | 25 | 13 | 1 | 52 | 187 |
| 1900—1901 | 12 | 72 | — | 34 | 15 | — | 50 | 183 |

Է. ՅՈՒՑԱԿ

ՔԱՆՈՒՄԵԱՅ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՅՈՒՑԱԿ ԱՇԱԿԵՐՏԱՅ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ

ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒ ԲԱԺԱՆՄԱՄԲ

| ՏԱՐԵՇՐՁԱՆ | Ա. Դասարան | Բ. Դասարան | Գ. Դասարան | Դ. Դասարան | Ե. Դասարան | Զ. Դասարան | Է. Դասարան | Ը. Դասարան | Թ. Դասարան | Գումար |
|-----------|------------|------------|--------------|------------|------------|------------|------------|------------|------------|--------|
| 1881—1882 | 19 | — | — | — | — | — | — | — | — | 19 |
| 1882—1883 | 35 | — | — | — | — | — | — | — | — | 35 |
| 1883—1884 | 37 | 42 | — | — | — | — | — | — | — | 79 |
| 1884—1885 | 13 | 43 | 37 | — | — | — | — | — | — | 93 |
| 1885—1886 | 14 | 29 | 45 | 34 | — | — | — | — | — | 122 |
| 1886—1887 | 15 | 34 | 37 | 40 | 32 | — | — | — | — | 158 |
| 1887—1888 | — | 33 | 30 | 31 | 37 | 27 | — | — | — | 158 |
| 1888—1889 | — | — | 31 | 25 | 30 | 28 | 25 | — | — | 139 |
| 1889—1890 | — | — | — | 32 | 23 | 29 | 25 | 22 | — | 131 |
| 1890—1891 | — | — | — | — | 29 | 23 | 25 | 25 | 21 | 123 |
| ՏԱՐԵՇՐՁԱՆ | | | Պատ. Դասարան | Ա. Դասարան | Բ. Դասարան | Գ. Դասարան | Դ. Դասարան | Ե. Դասարան | Զ. Դասարան | Գումար |
| 1891—1892 | | | 28 | — | — | 27 | 23 | 25 | 24 | 127 |
| 1892—1893 | | | — | 27 | — | — | 23 | 14 | 17 | 81 |
| 1893—1894 | | | 26 | — | 26 | — | — | 17 | 12 | 81 |
| 1894—1895 | | | 15 | 26 | — | 20 | — | — | 11 | 72 |
| 1895—1896 | | | 10 | 24 | 28 | — | 22 | — | — | 84 |
| 1896—1897 | | | 14 | 21 | 27 | 28 | — | — | — | 90 |
| 1897—1898 | | | 42 | 28 | 22 | 24 | 20 | — | — | 136 |
| 1898—1899 | | | 42 | 38 | 26 | 21 | 21 | 11 | — | 159 |
| 1899—1900 | | | 44 | 42 | 34 | 26 | 20 | 11 | 10 | 187 |
| 1900—1901 | | | 21 | 50 | 41 | 29 | 19 | 16 | 7 | 183 |

Ը. ՅՈՒՑԱԿ

ՅՈՒՑԱԿ ԲԱՐԵՐԱՐՆԵՐՈՒ ՊԱՇՏՊԱՆՆԱԼ, ԳԻՇԵՐՈՒԿ ԱՇԱԿԵՐՏԱՅ

| ՊԱՇՏՊԱՆՆԵՐ | 1895—1896 | 1896—1897 | 1897—1898 | 1898—1899 | 1899—1900 | 1900—1901 |
|------------------------------------|-----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|
| Արհեստանցի Յանձնաժողով | 2 | 3 | 3 | 3 | 3 | 3 |
| Ո. Հրկիզելց Յանձնաժողով | 2 | 3 | 3 | — | — | — |
| Մարգար Պապովեանի կսակին արդիւնով . | — | 10 | 10 | 10 | 10 | 10 |
| Պ. Առաքել Ծասուրեան | — | 6 | 12 | 12 | 12 | 12 |
| Պ. Իսահակ Ժամնարեան | — | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| Պ. Սարգիս Ճանրեան | — | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| Պ. Խ. Թումայեան | — | — | 6 | 6 | 6 | 6 |
| Պ. Բ. Գալուխանեան | — | — | 3 | 3 | 3 | 3 |
| Պ. Յովնանէս Աղամեան | — | — | 3 | 3 | 3 | 3 |
| Պ. Յարութիւն Աղամեան | — | — | 3 | 3 | 3 | 3 |
| Պ. Մ. Միրզաբէկեան | — | — | 2 | 2 | 2 | 2 |
| Պ. Ծ. Մելիքեան | — | — | 2 | 2 | — | — |
| Պ. Գրիգոր Առաքիլեան | — | — | 3 | 3 | 3 | 3 |
| Պ. Պողոս Դուկասեան | — | — | — | 10 | 10 | 10 |
| Պ. Բ. Լալանեան | — | — | — | — | 2 | 2 |
| Պ. Հ. Բունեաթեան | — | — | — | — | 3 | 3 |
| Պ. Գալիք Եւզրաբեան | — | — | — | — | 1 | 1 |
| Պ. Ա. Ասիբէկեան | — | — | — | — | 1 | 1 |
| Պ. Ե. Նարաթեան | — | — | — | — | 5 | 5 |
| Բարեւար ոմն | — | — | — | — | 3 | 3 |
| Գումար | 4 | 24 | 52 | 59 | 72 | 72 |

Բ. ՅՈՒՑԱԿ

ՅՈՒՑԱԿ ԶՈՒԹԱԿԻ ԵՒ ԴԱՇՆԱԿԻ ՀԵՏԵՒՈՂ ԱՇԱԿԵՐՏԱՅ

| ՏԱՐԵՇՐՋԱՆ | Դ Ա Շ Ն Ա Կ | | | | Զ Ո Ւ Թ Ա Կ | | | |
|-----------|-------------|----------|-----------|--------|-------------|----------|-----------|--------|
| | Քնուվար | Զրիավարժ | Պատկանեալ | Գումար | Քնուվար | Զրիավարժ | Պատկանեալ | Գումար |
| 1882—1883 | 7 | — | — | 7 | — | — | — | — |
| 1883—1884 | 21 | 1 | — | 22 | — | — | — | — |
| 1884—1885 | 29 | 1 | — | 30 | 16 | 6 | — | 22 |
| 1885—1886 | 28 | 1 | — | 29 | 15 | 14 | — | 29 |
| 1886—1887 | 11 | — | — | 11 | 14 | 25 | — | 39 |
| 1887—1888 | 20 | — | — | 20 | 31 | 21 | — | 52 |
| 1888—1889 | 19 | — | — | 19 | 26 | 20 | — | 46 |
| 1889—1890 | 11 | 1 | — | 12 | 25 | 18 | — | 43 |
| 1890—1891 | 11 | 1 | — | 12 | 26 | 11 | — | 37 |
| 1891—1892 | 9 | 1 | — | 10 | 30 | 14 | — | 44 |
| 1892—1893 | 7 | — | — | 7 | 16 | 10 | — | 28 |
| 1893—1894 | 7 | — | — | 7 | 10 | 8 | — | 18 |
| 1894—1895 | 6 | — | — | 6 | 8 | 7 | — | 15 |
| 1895—1896 | 1 | — | — | 1 | 4 | 11 | — | 15 |
| 1896—1897 | 1 | — | — | 1 | 2 | 9 | — | 11 |
| 1897—1898 | 4 | — | — | 4 | 2 | 10 | — | 12 |
| 1898—1899 | 2 | 6 | — | 8 | 3 | 25 | — | 28 |
| 1899—1900 | 4 | 4 | 9 | 17 | 7 | 15 | 30 | 52 |
| 1900—1901 | 3 | 10 | — | 13 | 7 | 32 | — | 39 |

Ե.

Ա Ր Հ Ե Ս Ս Ա Ն Ո Ց

(Ա. ՇՐՋԱՆ 1883—1886

Գործատուն. — վարժարանին հաստատութենէն գրեթէ երկու տարի ետքը, 1883 Գեղեցիկների վերջ, առաջին անգամ կը հաստատուի գործատուն մը ուր աշակերտներէն ոմանք կը հետեւէին կազմարարութեան եւ մերթ ընդ մերթ կը պարապէին ստաղձագործի նախնական վարժութեանց (տաշել, սղոցել, հարթել, եւ այլն)։ Գործատունը Պ. Նշան Մատթեանի հսկողութեան ենթարկուած էր. որ կազմարարութեան եւս կ'առաջնորդէր, իսկ դուրսէն վարձուած տեղացի վարպետներ կ'առաջնորդէին աշակերտաց ստաղձագործութեան մէջ։

1883էն 1886 (ստաղձագործական վարժութիւնը այս պայմաններուն մէջ չարունակուեցան առանց մեծ արդիւնքի, որովհետեւ կարելի չէր կանոնաորակէս եւ մեթոտով կահագործութիւն սորվեցընել աշակերտներուն քանի որ տեղացի վարպետները անդիտակ էին աստիճանական ուսուցման։ Գործատունը արտադրեց զմուսեալ կենդանիներու յատուկ ներկուած պատուանդաններ, նկատողական պատկերներու պահարաններ, չրջանակներ, սեղանատան համար նոտարաններ ու սեղաններ. եւ զմնացան կահ կարասիներ նորոգուեցան, նոյնպէս զիւրքեր կազմուեցան։

Բ. ՇՐՋԱՆ 1886—1901

Կապլարաւորեան եւ կահագործութեան արհեստանոցի հաստատութիւնը. — 1886 Սեպտեմբեր 2ին, Կարին հասան Բարեբարէն զրկուած կապլարարութեան վերաբերեալ գործիքները, (եւ Սեպտեմբեր 13ին Շուրափեցի Պ. Յակոբ Տ. Պօղոսեան, զոր Հիմնադիրը յղած էր իբր ուսուցիչ կապլարարութեան. Սեպտեմբեր 30ին վարժարանին չրջափակին արեւմտեան անկիւնը սկսաւ շինուիլ Բարեբարին ծակքով արհեստանոց մը կապլարարութեան բաժնին յատուկ. նոյեմբեր 24ին արհեստանոցին շէնքը բոլորովին պատրաստ

ըլլալով աշակերտները սկսան կանոնաւորապէս հետեւիլ կողմարարութեան :

1887 Սեպտեմբեր 20ին, Կարին հասաւ կահագործութեան համար Սանասարեանի պատրաստել տուած ուսուցիչը՝ Գաղէթցի Պ. Արշակ Խարախանեան . նոյն տարին աշնան վերջերը Արհեստանոցին հարաւային կողմը քանի մը մեթր երկայնութեամբ շէնք մը շինուեցաւ եւ կահագործութեան բաժնին յատկացուեցաւ : Նոյեմբեր 3ին սկսան կահագործութեան դասերը :

Արհեստանոցի ծրագիր եւ պայմաններ (1886էն 1895) . — Վարժարանին աշակերտներէն արհեստի հետեւողներուն համար, 1886ին որոշուած էր որ օրական 1—2 ժամ պարապին կահագործութեան կամ կողմարարութեան վերաբերեալ գործնական վարժութեամբ, որով կարելի պիտի ըլլար իրենց 6 տարուան ընթացքին մէջ տիրանալ արհեստին . որոշուած էր Գ. դասարանի աշակերտներէն սկսելով արհեստի հետեւող աշակերտները ընտրել, նախագահ սերով այն հասակաւոր տղաքը որոնք երաժշտութեան համար մեծ ընդունակութիւն ցոյց չէին տար : Զրիավարժ աշակերտները՝ բազմատմամբ թոշակաւորներուն՝ նուազ ընդունուեցան Արհեստանոցին մէջ, նկատելով որ ձրիավարժները գլխաւորաբար վարժապետական կոչման կը պատրաստուին, եւ եթէ արհեստի տիրանան, դիւրաւ կրնան թողուլ ուսուցչական ասպարէզը :

1892—93 տարեշրջանին՝ վարժարանին Հոգաբարձութիւնը բուն արհեստաւոր ցերեկեայ աշակերտներու համար յատուկ կարգադրութիւն մը ըրած էր, որուն համաձայն աշակերտներուն նուիրել որոշուած էր վաճառելի ապրանքներուն զուտ շահին $\frac{1}{10}$ ին 25ը, գումար որ աշակերտին պէտք էր յանձնուէր իր արհեստագիտական ուսման ընթացքը աւարտած ժամանակ : Բուն արհեստաւոր աշակերտներուն համար արհեստագիտական ուսման ընթացքը 4 տարի սահմանուած էր . ասոնք վարժարանէն կը ստանային նաեւ ամէն օր նախաճաշ եւ ճաշ, իրենց ուսման երկրորդ տարիէն սկսեալ տարեկան զոյգ մը կօշիկ եւ չորրորդ տարին նաեւ ձեռք մը զգեստ : Բուն արհեստաւոր աշակերտները չէին մասնակցեր վարժարանին ուսումնական բաժնի դասերուն եւ ամբողջ օրը կը պարապէին միայն արհեստով :

1895ի ծրագիր . — Արհեստանոցը 1895—96 վարժարանական տարուան սկիզբը ստացաւ նոր կազմակերպութիւն եւ ծրագիր : Ըստ այս նոր ծրագրին, Արհեստանոցը ուներ 4 տարուան ընթացք եւ երեք տեսակ աշակերտ .

1^o. Ուսումնական բաժնին չմասնակցողներ կամ ամբողջ օրը միմիայն արհեստի պարապողներ, ամէնքն ալ առհասարակ Կարնեցի ցերեկեայ ձրիավարժներ :

2^o. Ուսումնական բաժնի աշակերտներ որոնք կը սորուէին արհեստ մը իրրեւ կամաւոր առարկայ նուիրելով միայն օրական 1 ժամ :

3^o. Այնպիսի արհեստաւոր աշակերտներ որոնք կը մասնակցէին ուսումնական բաժնի կարգ մը առարկաներու, մնացեալ ժամանակնին տարով արհեստագիտական պարապմունքի :

Աւանդուած ուսումնական առարկաներն էին հետեւեալները .

Կրօնի եւ եկեղեցական պատմութիւն, հայերէն (աշխարհաբար եւ գրաբար), օսեաներէն, ուսողութիւն (քուսաւնութիւն եւ տնտեսականութիւն), բնական գիտութիւն (բնաբանութիւն եւ սարքաբանութիւն), գծագրութիւն, գեղագրութիւն, երգ, փայտի եւ երկաթի արուեստաբանութիւն :

Արհեստաւոր աշակերտները ուսումնական բաժնի աշակերտներուն հետ միասին կը հետեւէին այն ուսմանց, որոնք ըստ ծրագրի կ'աւանդուին թէ՛ ուսումնական եւ թէ՛ արհեստագիտական բաժնի աշակերտներուն . իսկ էապէս արհեստի վերաբերող ուսումները արհեստաւոր աշակերտներուն աւանձին կ'աւանդուէին : 1895ի ծրագրին կրած վերջնագոյն փոփոխութեան համեմատ՝ արհեստաւոր աշակերտները գործնական աշխատութեան համար ունէին առաջին տարին 17, երկրորդ տարին 30, երրորդին 32 եւ չորրորդին 30 ժամ . իսկ ուսմանց համար ունէին առաջին տարին 31, երկրորդին 18, երրորդին 16 եւ չորրորդին 16 ժամ շարժական դաս :

1900ի ծրագիր եւ կազմակերպութիւն . — 1899—1900 տարւոյ մէջ Պ. Սիմոն Աղապալեան Արհեստանոցի կահագործութեան եւ կողմարարութեան ճիւղին, եւ Պ. Գէորգ ձիւթեան ի նորոյ բացուելիք տարրաբանական ճիւղին մէջմէկ ծրագիր պատրաստած

ըլլալով, 1900 ին՝ Արհեստագիտական բաժնի կազմակերպութեան համար յանձնաժողով մը կազմուեցաւ, որուն կ'անդամակցէին վարժարանին տեսուչները եւ յիշեալ երկու արհեստագէտները, եւ ըստ այդ յանձնաժողովոյ պատրաստած ծրագրին, Արհեստանոցի մեքենագիտական ճիւղերը (կահագործութիւն եւ կազդարարութիւն) 4 ական տարւոյ դասընթացքներ պիտի ունենան, իսկ տարրաբանական ճիւղը 3 տարւոյ շրջան մը:

Տարրաբանական ճիւղի Ա. դասարանը պիտի համապատասխանէ Ուսումնական բաժնի Գ. դասարանին, որուն հետ պիտի ունենայ հետեւեալ շարաթական դասերը. կրօնք 2 ժամ, հայերէն աշխարհաբար 1, օսմաներէն 4, գերմաներէն կամ ժրսակերէն 5, քուսքանութիւն 2, գրահաշիւ 2: Իսկ աւանձին պիտի աւանդուի այդ դասարանին անգործարանաւոր սարքաւորութիւն 4 ժամ եւ գործնական աշխատանք 8 ժամ, ընդ ամէնը 30 ժամ:

Մեքենագիտական բաժնի Ա. դասարանը Ուսումնական բաժնի Գ. դասարանին հետ ունի հետեւեալ շարաթական դասերը. կրօնք 2 ժամ, հայերէն աշխարհաբար 3, օսմաներէն 4, աշխարհագրութիւն 2, քուսքանութիւն 3. Իսկ աւանձին կ'աւանդուի այդ դասարանին գծագրութիւն 3, երկրաչափութիւն 3 եւ գործնական գրադուր Արհեստանոցի մէջ 18, ընդ ամէնը 38 ժամ:

Արհեստագիտական բաժնի աշակերտները գործնական դրազումներու կը պարագլին կէս օրէն յետոյ 3 ժամ անընդհատ, իսկ կէս օրէն առաջ կը հետեւին Ուսումնական բաժնի իրենց համապատասխանող դասարաններու աշակերտաց հետ վերոյիշեալ դասերուն:

Ուսումնական բաժնի աշակերտներուն օրական 1 ժամ իրրեւ կամուօր առարկայ արհեստ սորվելու դրութիւնը ջնջուած ըլլալով, Արհեստանոցը ունի երկու տեսակ աշակերտ.

1⁰. Ուսումնական բաժնի չմասնակցողներ (ասոնք առհասարակ տեղացի ձրիավարժներ են):

2⁰. Այնպիսի արհեստաւոր աշակերտներ որոնք կը մասնակցին Ուսումնական բաժնի ինչ ինչ առարկաներու եւ մնացեալ ժամանակին մէջ կը զբաղին արհեստով: Այս կարգի աշակերտներ կրնան ըլլալ գիշերօթիկ կամ ցերեկեայ, եւ կը վճարեն միեւնոյն թուշակը որ սահմանուած է Ուսումնական բաժնին վերաբերող գիշերօթիկ կամ ցերեկեայ աշակերտներու համար:

Արհեստանոց ընդունուելիք այն աշակերտները որոնք կ'ուզեն միմիայն արհեստի հետեւիլ, պէտք է ըլլան 14—18 տարեկան եւ աւարտած Ազգ. նախակրթարանի մը ընթացքը. անոնք որ կ'ուզեն Ուսումնական բաժնին մասնակցելով 3—4 տարուան մէջ աւարտել Արհեստագիտական բաժնի ընթացքը, պէտք է ըլլան նոյնպէս 14—18 տարեկան եւ ունենան այնչափ ուսումնական պատրաստութիւն որ կարենան մտնել Ուսումնական բաժնի երրորդ կամ չորրորդ դասարանը. իսկ որոնք որ քառամեայ կամ եռամեայ (մեքենագիտութեան կամ տարրաբանութեան) ընթացքը սկսելու համար պահանջուած տարիքն ու հմտութիւնը չունենան, կրնան ընդունուիլ Ուսումնական բաժնին մէջ իրենց յարմար աւելի ստորին դասարան մը, եւ հոն նախապատրաստուիլ հետզհետէ:

ԱՐՀԵՍՏԱՆՈՑԻ ՎԱՐՊԵՏՆԵՐ

Արհեստանոցը 1886 էն սկսեալ ունեցած է հետեւեալ վարպետները.

Կադրարարութիւն

- Պ. Յակոբ Տ. Պօղոտեան (1886—87 է 1890—91)
- Պ. Յակոբ Ստեփանեան (1891—92 է 1893—94)
- Պ. Յակոբ Մէմէրճեան (*) (1894—95 է 1895—96)
- Պ. Գէորգ Գառնակերեան (1897—98 է 1900—901)

Կանագործութիւն

- Պ. Արշակ Խարախանեան (1887—88 է 1890—91)
- Պ. Սուքիաս Մէլլանեան (1891—92 է 1893—94)
- Պ. Արամ Վահանեան (*) (1894—95 է 1900—901)

(*) Պ. Պ. Ա. Վահանեան եւ Յ. Մէմէրճեան (Մելքոնեան), ընթացաւարտք Սահասարեան վարժարանի Արհեստանոցին, վարժարանին ծախքով նախ Տիգրիսի եւ յետոյ Թեթերապուրկի Արհեստագիտական վարժարաններուն մէջ եռամեայ ընթացք մը լրացնելէ յետոյ վերադարձած էին վարժարան. Պ. Ա. Վահանեան կատարելագործած էր կահագործութեան, կառաչինութեան եւ փայտի ներկարարութեան արհեստները, իսկ Պ. Յ. Մէմէրճեան կողղարարութեան, կառաչինութեան, կալվանակերտութեան եւ երկաթի ներկարարութեան արհեստները:

ԱՐՀԵՍՏԱՊԵՏՆԵՐ

1899 ին Կարին վերադարձան վարժարանին ընթացաւարտներէն եւ նախկին օգնական-ուսուցիչներէն Պ. Պ. Սիմոն Աղապալեան եւ Գ. Ճիլէրճեան, որոնք 1894 ին վարժարանին ծախքով Եւրոպա գացած էին արհեստագիտական ուսում առնելու: Պ. Սիմոն Աղապալեան Աւստրիոյ Ռայխընպէրկ քաղաքի Արհեստագիտական Վարժարանէն ընթացաւարտ եղած ըլլալով, 1899—1900 եւ 1900—901 տարեշրջաններուն մէջ Արհեստանոցի կահագործութեան եւ կոպղարարութեան ճիւղերուն կը հսկէր իբր արհեստագետ, եւ շարաթական 5 ժամ գծագրութիւն կը դասախօսէր մասնաւորապէս կահագործութեան հետեւողներուն: Իսկ Պ. Գէորգ Ճիլէրճեան, Յիւրիխի բաղմարուեստական Վարժարանին բնական գիտութեանց բաժնին ընթացաւարտ եղած ըլլալով, Արհեստանոցի տարբարանական ճիւղին արհեստագետ կարգուեցաւ 1900 ի սկիզբները:

Ա. Ե Ս. Կ Ե Ր Տ Ն Ե Ր

Յետագայ Ժ. Յուլիս կը ներկայացնէ մանրամասնօրէն 1886—87 ի տարեշրջանէն սկսեալ Արհեստանոցի զանազան ճիւղերուն հետեւող աշակերտներու թիւը:

Ինչպէս կ'երեւայ այս Յուլիսէն, կոպղարարութեան հետեւող աշակերտներուն թիւը վերջին տարիները բոլորովին նուազած է, որովհետեւ թէ՛ աշակերտները եւ թէ՛ ծնողքները առհասարակ ապագայ չխոստացող արհեստ մը նկատած են կոպղարարութիւնը, քանի որ Եւրոպայէն եկած երկաթեայ ապրանքները ա՛յնքան աժան են որ անոնց հետ մրցիլ կարելի չէ:

Նոյնպէս ԺԱ. Յուլիս կը ներկայացնէ միմիայն արհեստի հետեւող աշակերտներուն թիւը, իրենց ծննդավայրերուն համեմատ: Արհեստանոցը միմիայն արհեստի հետեւող թաշակաւոր աշակերտ բնաւ ունեցած չէ:

Ե Ր Զ Ա Ն Ս Ի Ա Ր Տ Ն Ե Ր

1886 էն 1901 Արհեստանոցը ունեցած է 16 շրջանաւարտ-ասանցմէ միայն արհեստի հետեւած են 12 աշակերտ, որոնց 10 ը

կահագործութեան օգնական-վարպետի եւ 2 ը կոպղարարութեան օգնական-վարպետի վկայական ստացած են. իսկ մնացեալ 4 ը, որոնք ստացած են կոպղարարութեան օգնական-վարպետի վկայական, հետեւած են նաեւ Ուսումնական բաժնի ինչ ինչ աւարկաներուն, եւ այդ մասին ալ վկայուած է: Այս 16 շրջանաւարտներէն մէկը, որ 1897 ին օգնական-վարպետի վկայական ստանալէ յետոյ, երեք տարի ալ Արհեստանոցը աշխատելով կատարելագործած էր իր արհեստը, կահագործութեան վարպետի վկայական ստացաւ 1899—1900 տարուան մէջ:

ԱՐՀԵՍՏԱՆՈՑԻ ԱՐՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Արհեստանոցի կահագործութեան ճիւղը արտագրեց ընկոյզէ զանազան կահեր (սեղան գրասեղան, դարան, պահարան, աթոռ, եռոտանի, մահճակալ, պատուհանի վարագոյր կախելու գլաններ օղակներով, եւայլն, եւայլն). իսկ կոպղարարութեան ճիւղը արտագրած է զանազան տեսակ կղզանքներ, երկաթեայ մահճակալներ, մամուլներ, երկաթեայ աշտանակներ, պողպատակի ամաններ, սղոցներ, գրակալներ, թիթեղագործի գործիքներ, օրօրոցներ, եւայլն: Մասնաւորապէս յիշատակելի են հետեւեալ աւարկաներու շինութիւնը.

1⁰. 1887—88 ին երկուք ու կէս ամիսէն շինուեցաւ հանրակառք մը (omnibus) արհեստագէտ ուսուցչաց, իրենց աշակերտներուն եւ տեղացի վարպետներուն աշխատութեամբ:

2⁰. 1888—1891 եւամեայ շրջանին մէջ Արհեստանոցը արտագրեց գեղեցիկ կառք մը, որ Կուսակալ Վսեմ: Սամի փաշայի յանձնարարութեամբ շինուեցաւ:

3⁰. 1893—94 տարուան մէջ մեծ ընկոյզէ գրասեղան մը Կարնոյ Վսեմ: Կուսակալին համար:

4⁰. 1900—901 տարեշրջանին մէջ ընկոյզէ քանդակազարդ մահճակալ մը:

Արհեստանոցի գլխաւոր յաճախորդներն են կառավարական Պաշտօնեայներ, Հիւպատոսներ, Կարնեցիք, ինչպէս նաեւ Վարժաւարանը:

Կ Ա Ջ Մ Ս Բ Ս Բ ՈՒ Թ Ի Ի Ն

1885—86 տարւոյ մէջ այդ ճիւղին նոր կազմակերպութիւն մը արուեցաւ. 1885 Գեղեցեակներ 8ին վարժարանը Հիմնադրէն ստացաւ կազմարարութեան վերաբերեալ զանազան գործիքներ. մինչև 1891 Պ. Ն. Մատթեան կ'առաջնորդէր կազմարար աշակերտներուն, որոնք կը կազմէին հին դասագիրքեր, ամսագրեր, տետրակներ, պարբերական թերթեր, եւ այլն. 1891էն մինչև 1901 աշակերտներէն ոմանք երբեմն առաջնորդութեամբ օգնական-ուսուցիչներու եւ երբեմն կազմարարութեան մէջ յաջողակ աշակերտներու, շարունակեցին զբաղիլ այս ճիւղին :

Շատ քիչ անգամ կազմատան վերաբերեալ յանձնարարութիւններ կ'ընդունուէին դուրսէն :

Յ Ո Ւ Յ Ա Կ Ն Ե Ր

Հոս կը գնենք վերոյիշեալ ժ. եւ ժԱ. Յուցակները :

ժ. Յ Ո Ւ Յ Ա Կ

Յ Ո Ւ Յ Ա Կ Ա Ր Հ Ն Ս Ի Հ Ե Տ Ե Ի Ո Ղ Ա Շ Ո Վ Ե Բ Տ Ա Ց

1886 ԷՆ 1901

| Ա Շ Ո Վ Ե Բ Տ Ե Ր | 1886—1887 | 1887—1888 | 1888—1889 | 1890—1891 | 1891—1892 | 1892—1893 | 1893—1894 | 1894—1895 | 1895—1896 | 1896—1897 | 1897—1898 | 1898—1899 | 1899—1900 | 1900—1901 |
|---|-----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|
| Ուսումնական բաժնի օրական 1—3 ժամ արհեստի հետեւող | | | | | | | | | | | | | | |
| Կողարարութիւն | 20 | 17 | 21 | 21 | 15 | 11 | 8 | 4 | — | — | 2 | 4 | 5 | — |
| Կանգործութիւն | — | 9 | 17 | 20 | 17 | 10 | 7 | 4 | — | — | 4 | 4 | 15 | — |
| Միայն արհեստի հետեւող ցերեկեայ ճիւղով | | | | | | | | | | | | | | |
| Կողարարութիւն | — | 1 | 1 | 1 | 1 | 4 | 3 | — | — | — | 2 | 3 | 5 | — |
| Կանգործութիւն | — | — | 1 | 1 | 1 | 4 | 4 | 3 | — | — | 7 | 7 | 9 | — |
| Ուսումնական բաժնի ինչ ինչ աւարկաներու մասնակցող | | | | | | | | | | | | | | |
| Կողարարութիւն | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| Կանգործութիւն | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| Տարբանական ցիւղ | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| Փոստայ | 20 | 27 | 40 | 42 | 43 | 34 | 22 | 11 | 8 | 13 | 20 | 26 | 44 | 22 |

Ժ Ա. Յ Ո Ւ Ց Ա Կ

ՅՈՒՑԱԿ ՄԻՄԻՈՅՆ ԱՐՀԵՍՏԻ ՀԵՏԵՒՈՂ ԱՇԱԿԵՐՏԱՑ
ԻՐԵՆՑ ԾՆՆԴԱՎԱՅՐԵՐՈՒՆ ՀԱՄԵՄԱՑ

1886 ԵՆ 1901

| Թ Ի Ի | Ծ Ն Ն Դ Ա Վ Ա Յ Ր Ա Շ Ա Կ Ե Ր Տ Ա Ց | Ջ Ր Ի Ա Վ Ա Ր Ժ Ք |
|-------|-------------------------------------|-------------------|
| 1. | Կարին | 34 |
| 2. | Մուռ | 2 |
| 3. | Դերչան | 1 |
| 4. | Բարերդ | 1 |
| 5. | Խարբերդ | 1 |
| 6. | Մակու | 1 |
| 7. | Սղերդ | 1 |
| 8. | Քղի | 1 |
| | Գումար | 42 |

Ը.

Վ Ա Ր Ժ Ա Ր Ա Ն Ի Ն Ն Ե Ր Ք Ի Ն Կ Ե Ա Ն Ք Ը

Տնակարգ. — Վարժարանին մէջ օրուան ժամանակի բաշխումը կատարուած է հետեւեալ տնակարգին համաձայն.

«Առաւօտեան զանգակը հնչուածին պէս, աշակերտները իրենց անկողնէն կ'ելլեն, ձմեռը ժամը 6 ին (Ը. Ե.), իսկ ամառը ժամը 5 ին :

«Ելլելու համար տրուած նշանէն կէս ժամ յետոյ աշակերտները արդէն հաղուած, լուացուած եւ սանտրուած ըլլալով, կ'ընեն առաւօտեան աղօթքը՝ որ կը բաղկանայ «Առաւօտ լուսոյ» երգէն, «Հայր մեր»էն եւ «Գոհանամը զքէն Տէր Աստուած մեր» առաւօտեան մաղթանքէն : Աղօթքէն յետոյ կը սկսի առաւօտեան սերտողութիւնը որ կը տեւէ ձմեռը 6⁴⁰ էն մինչեւ 7⁴⁰, իսկ ամառը 5⁴⁰ էն մինչեւ 6⁴⁰ :

«Չմեռը 7⁴⁰ ին, ամառը 6⁴⁰ ին աշակերտները սեղանատան մէջ կը նախաճաշեն՝ ստանալով հաց, թէյ եւ պանիր, իսկ ամառնային օդափոխութեան միջոցին, ի Սրտաձոր, կաթ եւ հաց կը տրուին իրբեւ նախաճաշ :

«Նախաճաշը, ճաշն ու ընթրիքը կը սկսին եւ կը վերջանան աղօթքով :

«Նախաճաշէն յետոյ, մինչեւ դասերուն սկսիլը զբօսակրի ժամանակ է :

«Չմեռը 8 էն մինչեւ 12, իսկ ամառը 7 էն մինչեւ 11 իւրաքանչիւր դասարան կ'առնէ չորս դաս :

«Իւրաքանչիւր դաս կը տեւէ $\frac{3}{4}$ ժամ, իսկ մէն մի դասամիջոց $\frac{1}{4}$ ժամ :

«Չմեռը ժամը 12 ին, իսկ ամառը 11 ին տեղի կ'ունենայ ճաշը որ կը բաղկանայ սոխրաբար ուտիք աւուրց մէջ մէկ տեսակ պարզ կամ բանջարեղէնով խառն մսեղէն կերակուրէ եւ շաքաթը մէկ անգամ պտուղէ, մէկ անգամ խմորեղէնէ եւ մէկ անգամ ապուրէ :

«Ճաշէն յետոյ մինչեւ դասերուն սկսիլը զբօսակրի ժամանակ է : «Չմեռը ժամը 2 ին, իսկ ամառը 1 ին կը սկսին կէս օրէն ետ-

քը եղած դասերը եւ կը տեւեն ձմեռը մինչեւ 4, իսկ ամառը մինչեւ 3: Այն ժամերը, որոնց մէջ այս կամ այն դասարանը դաս չունի, սերտողութեան յատկացեալ են:

«Իսասերէն դուրս, բարձրագոյն դասարաններու ֆրանսերէն խօսակցութեան վարժութիւնները տեղի կ'ունենան կէս օրէն յետոյ մինչեւ ժամը 4 զրօսանքի յատկացած ժամանակներուն մէջ:

«Հրապարակախօսական վարժութիւններու համար աշակերտական համախմբումներ տեղի կ'ունենան շաբաթ օրերը, կէս օրէն յետոյ, ժամը 4 քն 5:

«Ժամը 5 ին ընթրիք՝ որ կը բաղկանայ ուտիք աւուրց մէջ մէկ տեսակ մսեղէն կերակուրէ եւ մերթ մսեղէն կերակուրէ եւ ապուրէ: Անկէ յետոյ, մինչեւ ժամը 6, զրօսանքի ժամանակ է: Վեցէն յետոյ մինչեւ պառկիլը եղած միջոցը յատկացեալ է սերտողութեան:

«Զմեռը 8¹/₂ ին, իսկ ամառը 7¹/₂ ին տեղի կ'ունենայ երեկոյեան աղօթքը՝ որ կը բաղկանայ «Հրեշտակ զուարթուն» երկձայն երգէն, «Տէր Աստուած մեր, դու պահեալ գմեզ» մաղթանքէն եւ «Հայր մեր»էն: Փոքրերը կը պառկին ձմեռը 8¹/₂ ին, ամառը 7¹/₂ ին, իսկ մեծերը ձմեռը 9¹/₂ ին, ամառը 8¹/₂ ին:

Ամէն կիրակի առաւօտ, ինչպէս նաեւ տօն օրեր, աշակերտները Ս. Եկեղեցի կ'երթան:

Այս սնակարգը որ վերջնապէս ճշդուած է վարժարանին հաստատութեան առաջին տարիներուն իսկ, գրեթէ անփոփոխ մնացած է: Կէս օրէն ետքի դասերը իւրաքանչիւր դասարանի համար երբեմն 4 էին, վերջէն 3 ի վերածուած են. ասոր փոխարէն միջոց մը շաբաթ օրերը եւ միջոց մըն ալ հինգշաբթի օրերը կէս օրէն ետքը դասախօսութիւններ տեղի չէին ունենար, մինչդեռ ետքը որոշուեցաւ որ տեղի ունենան:

Հրապարակախօսութեան վարժութիւնը վերջին չորս տարեջրջաններուն մէջ տեղի ունեցան, 1897 քն 1900՝ հինգշաբթի օրերը, իսկ 1900 քն 1901՝ շաբաթ օրերը: Ե. եւ Զ. դասարաններու աշակերտները իրենց զարգացման շրջանին համապատասխանող մատենադրական, պատմական, գիտական, ազգագրական եւ ուրիշ նիւթերու վրայ կարգով հրապարակախօսութեան փորձեր ըրին, ի ներկայութեան Դ. դասարանի աշակերտաց: Հրապարակախօսը միշտ կ'ունենար կան-

խաւ նիւթը ուսումնասիրող ընդդիմաբան մը: Կարծիքներ կը փոխանակուէին եւ քննադատութիւններ տեղի կ'ունենային, հրապարակախօսին, ընդդիմաբանին եւ ներկայ դանուող ուրիշ աշակերտներու միջեւ: Վարժարանին պաշտօնեաները երբեմն ներկայ կ'ըլլային այս հրապարակախօսութեանց: Վիճարանութեանց կ'առաջնորդէր հայերէնի ուսուցիչ Պ. Ա. Խաչատրեան:

Աշակերտական այս համախմբումներու ժամանակ, մերթ ընդմերթ Տեսչութեան կողմէ բարեկրթութեան վերարեբող խրատներ եւ հրահանգներ կը արուէին աշակերտաց:

Աւակերտաց առողջական վիճակը. — Ա. տանտամեակին մէջ աշակերտները ընդհանրապէս թեթեւ եւ վաղանցիկ տկարութիւններ միայն ունեցան. անոնց մէջ հիւանդութեան պատճառաւ վեց մահ միայն պատահեցաւ այդ շրջանին:

1892—93 դպրոցական տարւոյն մէջ աշակերտներուն առողջական վիճակը աւելի մեծ խնամքի եւ հոգածութեան առարկայ դարձաւ, որովհետեւ 1892 Օգոստոսի վերջերէն սկսեալ երեք ամիսի չափ կարնոյ եւ շրջակայից մէջ հնտախտ կը ճարակէր. տեսչութիւնը ամէն կերպ զգուշական միջոցներ ձեռք առաւ աջակցութեամբ Քարանթի-նայի տեսուչ Տորթէօր Գութիի, որ այս շրջանին սկիզբէն այցելութիչ նշանակուեցաւ վարժարանին եւ ամէն օր կ'այցելէր: Կերակուրներու ցանկէն միւրգ ու բանջարեղէն վերցած էին, եւ սենեակները յաճախ կը հականեխուէին: Գուրսի հետ յարաբերութիւնները ըստ կարեւրոյն սահմանափակուեցան եւ սովորական շրջագայութիւնները դադրեցան. վարժարանին շրջապատ գետնին մէկ անկիւնը յատուկ փուռ մը շինուեցաւ ուր կը պատրաստուի ցարդ վարժարանին պէտք եղած հացը: Ծնորհիւ ձեռք առնուած այս միջոցներուն, համաճարակի բոլոր տեսողութեան տակն ալ աշակերտներէն ոչ մէկը հնտախտէ բռնուեցաւ:

Վերջին տանտամեայ շրջանին ալ աշակերտները ընդհանրապէս միայն թեթեւ հիւանդութեանց ենթակայ եղած են, եւ երեք աշակերտ միայն վախճանած են իրենց ծնողաց տան մէջ:

1897 Յունուարին վարժարանին այցելութիւն կարգուեցաւ Կարնոյ Առողջապահական քննիչ Տորթէօր Կրօման, որ ամէն օր ճշգրտութեամբ կը կատարէր իր բժշկական այցելութիւնները. իրեն յա-

Ղորղեց 1899 ին Քաղաքապետական բժիշկ Շէրիֆ պէյ :

Աշակերտներու առողջութեան մեծապէս նպաստած են վարժարանին պարտէզին մէջ կատարուած երկրագործական կրթանքները, որոնք 1882—83 ի տարեշրջանին սկսած են առաջնորդութեամբ Պ. Նշան Մատթեանի . ասկէ զատ, պարբերաբար տրուած մարմնամարզութեան դասերը, շրջագայութիւնները, ձմեռը՝ չմշկութիւն (*) եւ ամառը՝ լողալ, որոնք պարտաւորիչ են, մեծապէս կը նպաստէին աշակերտներուն առողջութեան եւ մարմնական զարգացման : Աշակերտները տարւոյն մէջ քանիցս խմբովին բաղնիք կը մտնեն, իսկ ճերմակեղէններու եւ առհասարակ զգեստներու մաքրութեան մեծ հոգ կը տարուի :

Տկարակազմ՝ աշակերտներ ընդունուած չեն վարժարան, իսկ անոնք՝ որոնց վատառողջութիւնը ետքէն երեւան եկած է, վերադարձուած են իրենց ծնողքին քով :

Աւակերտաց վարճն ու բարճը . — Տեսչութիւնը կարգապահ հութեան մասին մեծ խնամք տարած ըլլալով, աշակերտաց վարճն ու բարճը ընդհանուր կերպով գոհացուցիչ եղած է . վարժարանին ներքին հսկողութիւնը կատարած են փոխն ի փոխ քսանամեայ շրջանին մէջ ուսուցիչներ եւ օգնական-ուսուցիչներ՝ երեք Տեսուչներուն հաւաքական եւ վերին հսկողութեան տակ :

Ամբողջ քսանամեայ շրջանին մէջ 25 ի չափ աշակերտներ արձակուած են վարժարանէն փթամտութեան, ծուլութեան եւ յոռի վարքի պատճառաւ :

Արձակուող եւ Երչագայութիւններ . — Աշակերտները 1882 տարւոյ ամառնային արձակուողը անցուցին ուսուցիչներուն հետ Կարինէն 4—5 ժամ դէպ ի արեւելք գտնուող Կարմիր վանքին մէջ, 1883 տարւոյ ամառնային արձակուողին մէկ մասը վրաններու


րու տակ Քըրք-Տէյրմէն, Հինձք, Կարմիր վանք եւ Ըղտաձոր, 1884 ին Կարմիր վանքի եւ Ըղտաձոր, իսկ 1885 ին Ըղտաձոր :

1885—86 տարեշրջանէն սկսեալ մինչեւ 1900—901 աշակերտները եւ ուսուցիչները գրեթէ ամէն տարի Կարնոյ մօտերը Սրտաձոր կոչուած վայրը գացին վրանի տակ անցընել իրենց ամառնային արձակուողը, բայ ի 1889—90 ի եւ 1893—94 ի տարեշրջաններու արձակուողները՝ զորս Կարին անցուցին :

Աշակերտները տարւոյ շրջանին մէջ գեղեցիկ եղանակին շրջագայութիւններ կատարած են միշտ Կարնոյ մօտակայ վայրերուն մէջ, ինչպէս Ս. Լուսաւորիչ, Խանրմ-Նօրի, Աղղի-Աչքը, Քըրք-Տէյրմէն, Ապտիւրրահման, Կան, Կէզ, եւ այլն :

Այցելութիւններ . — Քսանամեայ ժամանակամիջոցին մէջ, բաց ի Հիմնադիր բարերարէն եւ Կտակակատար Պ. Կ. Նզրեանցէ, վարժարանը պատուած են իրենց այցելութեամբ՝ նաեւ զանազան կարեւոր անձնաւորութիւններ, ինչպէս Կարնոյ Կուսակալները, Վեհ. Սուլթանին թիկնապահներէն Նուսրէթ փաշա, Կայսերական Քննիչ Յանձնաժողովոյ անդամներէն Միրիլիվա Զիյա փաշա եւ այլ Կառավարական կարեւոր Պաշտօնատարներ, Հիւարատոսներ, Եւրոպացի գիտնականներ, եւ այլն : Նոյնպէս այցելած են հայ բարձրատիճան եկեղեցականներ եւ աշխարհականներ :

Վերջին տարեշրջաններուն աշակերտները Սրտաձոր գտնուած ատենին Կարնոյ Կուսակալ Շէրիֆ Մէհմէտ Բէուֆ փաշա եւ զինուորական Հրամանատար Մէհմէտ Ալի փաշա, ինչպէս նաեւ կառավարական բարձրատիճան պաշտօնատարներ այցելած են Սրտաձոր :



(*) Չմշկութիւնը, որ 1884 Նոյեմբեր 27 ին Կարնոյ մէջ առաջին անգամ մուտ գտաւ Սանասարեան վարժարանի միջոցաւ, վարժարանին մէջ տեղի կ'ունենայ ընդարձակ չմշկավայրի մը վրայ : 1891—92 տարեշրջանին՝ ձմեռը Սան-Տեսուչները Գերմանիայէն բերել տրուած սիլններով (չազան կամ ձկնկօշիկ) լազնելու փորձեր կատարեցին, այդ նոր առողջարար մարզանքը սորվեցնելով աշակերտներուն :

Ք.

ՏԱՐԵԿԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՇՐՋԱՆԱԻԱՐՏՆԵՐ

Տարեկան ֆնուրիւններ. — 1882—83 ի տարեշրջանէն սկըսեալ, ի բաց առեալ 1885—86, 1886—87 եւ 1889—90 ի դպրոցական տարիները, ամէն տարի կանոնաւորապէս տեղի ունեցան հրապարակային քննութիւններ, որոնց ներկայ կը գտնուէին ընդհանրապէս Կարնոյ Առաջնորդը, Մէարիֆի ներկայացուցիչներ, քաղաքային եւ զինուորական բարձրաստիճան պաշտօնատարներ, հիւպատոսական մարմնոց ներկայացուցիչներ, Գաւառական ժողովոց անդամներ, աշակերտաց ծնողքներ եւ ուրիշ հայ ու օտար ունկնդիրներ :

1884—85 ի տարեկան քննութեանց ներկայ էր վարժարանին Բարերարը, որ այդ միջոցին Կարին կը գտնուէր. քննութեան մէկ մասին ներկայ գտնուեցաւ նաեւ Կուսակալ Վսեմ: Մուսթաֆա փաշա, որուն առջեւ տեղի ունեցան դործիական երաժշտութեան, օսմաներէնի եւ մարմնամարզի քննութիւններ. զինուորական նուագաժողովներու խումբը նոյն օրը քննութեանց միջոցին քանի մը դեղերիկ եղանակներ նուագեց :

1888—89 տարեշրջանին հրապարակային քննութեանց վերջին օրը ներկայ գտնուեցաւ Կուսակալ Վսեմ: Սամի փաշա, որ այցելեց նաեւ Արհեստանոցը :

Շրջանաւարտներ. — Վարժարանը 1891էն 1901 ազդին նըստիւրած է 110 շրջանաւարտներ, որոնցմէ 94ը միմիայն Ուսումնական բաժնէն, 4ը Ուսումնական բաժնի ինչ ինչ աւարկաներու եւ միանգամայն Արհեստանոցի հետեւողներ, եւ 12ը միմիայն Արհեստական բաժնի հետեւողներ. ասոնց ամէնուն թիւերը կը նշանակենք ի ստուրեւ տարեկան խումբերու բաժնուած :

1891 ին՝ 21 շրջանաւարտ (18ը միայն Ուսումնական բաժնէն, 3ը քանի մը ուսմանց եւ միանգամայն Արհեստանոցի հետեւող) :

1892 ին՝ 25 (23ը Ուսումնական բաժնէն եւ 2ը միմիայն Արհեստանոցէն) :

1893 ին՝ 17 (Ուսումնական բաժնէն) :

1894 ին՝ 14 (12ը Ուսումն. բաժնէն, 2ը Արհեստանոցէն) :

1895 ին՝ 12 (11ը " " 1ը " ") :

1897 ին՝ 2 (1ը " " 1ը " ") :

1899 ին՝ 3 (միայն Արհեստանոցէն) :

1900 ին՝ 12 (9ը Ուսումնական բաժնէն, 2ը Արհեստանոցէն, եւ 1ը ինչ ինչ ուսմանց եւ միանգամայն Արհեստանոցի հետեւող) :

1901 ին՝ 4 (3ը Ուսումն. բաժնէն եւ 1ը Արհեստանոցէն) :

Համագումար 110 շրջանաւարտ :

Ժ.

ՏՕՆԵՐ ԵՒ ՀԱՆԴԷՍՆԵՐ

Տարեգարհի վեճՍ.ՓՍ.Ռ ՍՈՒԼԹՍՆԻ ԾՆՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԱՆՈՒԿԱԼՈՒԹԵԱՆ . — Վարժարանին քոստամուկ շրջանին մէջ ամէն տարի Վեճափառ Սուլթանին Ծննդեան եւ Գահակալութեան տարեգարհները լուսավառութեամբ, հրախաղութեամբ եւ արժանավայել հանդիսավորութեամբ կատարուեցան : Նոյն օրերու մէջ վարժարանին աշակերտաց արձակուրդ տրուեցաւ :

Ներկայացումներ եւ նուագահանդէսներ . — 1881—82 տարեշրջանէն սկսեալ տեղի ունեցած են դպրոցական հանդէսներ ամէն տարի Կաղանդի, Ս. Ծննդեան, Բարեկենդանի եւ Ս. Զատիկի առթիւ : Այս պատճառաւ մերթ արուած են նաեւ նուագահանդէսներ եւ ներկայացումներ . այսպէս 1887 Յունուար 8 ին, ի ներկայութեան ուսուցչաց եւ աշակերտաց, դաշնակահար եւ ջութակահար աշակերտները զանազան կտորներ նուագեցին, թէ՛ խմբովին եւ թէ՛ առանձինն : 1888 Յունուար 7 ին տեղի ունեցաւ մեծ նուագահանդէս մը՝ ի ներկայութեան Առաջնորդական Տեղապահ Տ. Տիմոթէոս Հօր, քահանայից դասուն եւ 200 ի մօտ հրաւիրեալներու . աշակերտները ջութակի եւ դաշնակի վրայ նուագեցին 34 գեղեցիկ կտորներ : 1891—92 ի տարեշրջանին, Զատիկն երեքշաբթի իրիկունը, երկու բարձր դասարաններէն կազմուած խումբ մը, ուսուցիչներու եւ աշակերտներու շրջանակին մէջ, յաջողութեամբ ներկայացուց Մոլիէռի «Երեւակայական հիւանդը» : 1892—93 տարեշրջանին, երկու բարձր դասարաններու աշակերտները՝ նոր տարուոյ իրիկունը՝ ներկայացուցին թուրքերէն զաւեշտ մը, եւ Մոլիէռի Ակամայ բժիշկը : 1898 ին ալ ներկայացումներ տեղի ունեցան : 1899 Յունուար 1 ին Մոլիէռի Ակամայ բժիշկը . Փետրուար 27 ին թուրքերէնի թարգմանուած «Երկունորեակները» (Էֆիզեր) . Ապրիլ 19 ին Յակոբ Պարոնեանի «Մեծապատիւ մուրացիակները» : 1900 ի Կաղանդին դարձեալ «Մեծապատիւ մուրացիակները» : Նոյն տարուոյ Բուն Բարեկենդանին առթիւ, Փետրուար 16 ին, ներկայացուեցան Յակոբ Պա-

րոնեանի Քաղաքավարութեան փաստերէն «Կօշկակարները» . նոյնպէս «Էֆիզեր» եւ Պէշլիթաչեանի թարգմանած «Երեւ Կաղանդը» : Իսկ Փետրուար 19 ին «Էֆիզեր» ներկայացուեցաւ նորէն ի ներկայութեան Վսեմ : Կուսակալին, զինուորական Հրամանատարին, Կարնոյ Առաջնորդական Տեղապահ Տ. Զաւէն Ս. Հօր, կառավարական գլխավոր պաշտօնատարաց, վարժարանին Հոգաբարձութեան եւ պաշտօնէութեան . այս ներկայացման առթիւ Կարնոյ «Էնվարը Ճարքիչէ» պաշտօնաթերթը դահաճատմամբ խօսած էր Սանասարեան վարժարանին վրայ : 1900—901 տարեշրջանին՝ Բարեկենդանին առթիւ ներկայացուեցան «Անրիֆաճիկ» թուրքերէն, «Երաւոս աղբար», «Վեց ու կէս պորսի ժառանգորիս» եւ «Les martins pêcheurs» : 1901 Փետրուար 7 ին նոյն թատերախաղերը ներկայացուեցան ի ներկայութեան վարժարանին պաշտօնէից եւ Կարնոյ քրիստոնեայ հասարակութենէն իրր 200 հոգւոյ, մէկ կամ կէս մէճիա մուտքով : Երկու օր յետոյ ներկայացուեցան «Անրիֆաճիկ» եւ «Les martins pêcheurs», ի ներկայութեան Վսեմ : Կուսակալին, Առաջնորդական Տեղապահ Հօր, կառավարական պաշտօնեաներու, վարժարանին հոգաբարձուներուն եւ թուրք հասարակութեան երեւելիներուն, Հիւսպատաներու, եւսյն, մէկ կամ երկու մէճիա մուտքով : Վերջին երկու օրերուն մէջ գոյացած 50 ոսկւոյ զուտ հասոյթը սահմանուեցաւ Կարնոյ Հոսիֆիմեան վարժարանին զանազան պէտքերը հոգալու : Բուր այս ներկայացումները կ'ընդմիջուէին երաժշտութեամբ :

Հոգեմանգոսեան պատօճներ . — 1891 Մայիս 19 ին վարժարանին հոգեւոյն հիմնադրին մահուան առաջին տարեկիցը ըլլալով Առաջնորդ Սրբազանը հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցելու հոգեհանգստեան պաշտօն կատարեց : Այդ հոգեհանգստեան պաշտօնը ամէն տարի կը տօնուի կանոնաւորապէս : Ս. Պատարագին մատուցումէն յետոյ, վարժարանին գաւթին մէջ, ուր կը կանգնի Բարերարին մարմարեայ կիսանդրին (*), հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի ուսուցիչներու, աշակերտներու եւ ժողովրդեան խումբ թաղմութեան ներկայութեան :

(*) Այս կիսանդրին զետեղուեցաւ վարժարանին հիւրանոցին մէջ 1893 Մայիս 19 ին . անոր պատրաստութեան համար ուսուցիչներն ու աշակերտները ժամանակին իրենց մէջ հաւաքած էին 175 Օսմ. ոսկի :

1894 Նոյեմբեր 1ին հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ Վսեմ. Պ. Կ. Եղեանցի մօրաքոյր եւ Սանասարեան վարժարանին կարեւոր գումար մը կտակող Տիկին Մարիամ Մարտիրոսեան Կաղաչկեանցի մահուան տարեգարձին առթիւ: Այս հոգեհանգստեան պաշտօնը ամէն տարի կը կատարուի կանոնաւորաբար, 1894էն սկըսեալ, Կարնոյ Եկեղեցւոյն մէջ:

Նոյնպէս Ս. Զատիկի երկրորդ օրը կ'օրհնուին դերեզմանները վարժարանին հանգուցեալ ուսուցիչներուն, Պօղոս Գերիբեանի, Կ. Մկրտիչեանի եւ Մ. Ֆէթվաճեանի, որոնց սկոյնները կը հանդիսն Կարնոյ դերեզմանատան մէջ. 1885 Նոյեմբեր 16ին Պ. Գերիբեանի դերեզմանին վրայ Սան-Տեառններուն ծախքով պարզ բայց վայելուչ տապանաքար մը ձգուած է:

Վարժարանին անդրանիկ շրջանաւարտները 1891 Յուլիս 4ին Ս. Պատարագ եւ հոգեհանգստեան պաշտօն կատարել տուին Բարեբարին հոգւոյն համար: Այս հոգեհանգստեան պաշտօնը ամէն շրջանաւարտ խումբ կատարել տուած է անկէ ի վեր՝ Յուլիսի մէջ:

Վկայականներու բաւխում. — 1891 Յուլիս 15ին շատ փառաւոր կերպով կատարուեցաւ վարժարանին 21 անդրանիկ ընթացաւարտներու (Ա. խումբ) վկայականաց բաշխման հանգէսը՝ ներկայութեամբ Կարնոյ Վսեմ. Կուսակալ Հասան Խայրի փաշայի, Մէքթուպճի պէյի, Մէարիֆի Տնօրէնին եւ ուրիշ պաշտօնատարներու, ինչպէս նաեւ Գեր. Առաջնորդին եւ շուրջ 500 հանգիստականներու: Հանգէսը սկսաւ Համիտի քայլերգով զոր վարժարանին ջութակաժողովները եւ դաշնակաժողովները, Պ. Աբուլեանի առաջնորդութեամբ, նուագեցին. հանգիստականք յոսնկայս ունկնդրեցին Կայսերական քայլերգին, որմէ յետոյ ընթացաւարտներէն Բարեբարցի Պ. Գարրիէլ Սերոբեան կարգաց Կուսակալին ուղղեալ թուրքերէն ուղերձ մը: Ապա բոլոր աշակերտները երկու ձայնի վրայ եւ ջութակաց ընկերակցութեամբ երգեցին Տիգրան Զուհաճեանի յօրինած «Շէհիկ Շահր», Կայսերական օրհներգը. աշակերտական ճառախօսութիւններէ եւ նուագածութիւններէ ետքը, Պ. Յ. Մատթեան թուրքերէն ուղերձով մը շնորհակալութիւն յայտնեց Վսեմ. Կուսակալին պատուաբեր այցելութեանն համար. երախտագիտական զգացմամբ լի բարեմաղթութիւններ ըրաւ Օգոստոսիա Վեհապետին թանկագին

կենաց համար, որուն հայրական Բարձր Հովանաւորութեան ներքեւ վարժարանը կարողացաւ ընթացաւարտներ հասցնել եւ ընծայել Ազգին ու Պետութեան: Յետոյ մասնացոյց ընելով ընթացաւարտները, խնդրեց Վսեմ. Կուսակալէն որ բարեհաճի վկայականները անձամբ բաշխել: Կուսակալը ընթացաւարտներուն զատ զատ խրատական խօսքեր ուղղելով անոնց յանձնեց իրենց վկայականները:


Վկայականաց բաշխումէն յետոյ, Տեսչութեան կողմէ Պ. Սուղիկեան բանախօսեց. Պատրիարքական Փոխանորդ Սրբազանն ալ խօսեցաւ դավարաններով Օգոստոսիա Վեհապետին կրթութեան ծաւալման համար տարած յարատեւ ջանքերն ու խնամքները, եւ բարեմաղթութիւններ ըրաւ Նորին Վեհափառութեան արեւշատութեան եւ բարօրութեան համար: Ապա պահպանիչով փակեց հանգէսը:

1891էն 1901 վկայականաց բաշխման յատուկ հանգէս տեղի ունեցած չէ, բայց ի 1899—900ի տարեշրջանէն, ուր վկայականաց բաշխման հանգէսին նախապահեց Կարնոյ նահանգին Կրթական Տնօրէն Մէհմէտ պէյ, որ անձամբ բաշխեց վկայականները շրջանաւարտներուն յարմար խրատական խօսքեր ուղղելով:



ԺԱ.

ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ



Գրադարան. — 1892 էն մինչև 1891 գրադարանապետութեան պաշտօն վարեցին հետզհետէ Պ. Պ. Ս. Սողիկեան, Գրիգոր Շէհէմեան, Յ. Թիւթիւնճեան, Գ. Ճիյէրճեան, Գ. Առլինեան, Մ. Յէթվաճեան եւ Ա. Խաչատրեան. իսկ 1900—901 տարեշրջանին գրադարանապետն էր Պ. Գ. Ճիյէրճեան, որ դասաւորեց զիւրքերը եւ ընդհանուր նոր գրայուցակ կազմեց իւրաքանչիւր դրբի անունը, հեղինակին անունը, տպագրութեան տեղն ու թուականը նշանակեց իւրով :

Եզրած նուիրատուութիւններէն զատ՝ Գրադարանը գնմամբ ստացած է քսանամեայ շրջանին մէջ բազմաթիւ գիրքեր (գասադիրքեր, ընթերցանութեան գիրքեր, մանաւանդ մանկավարժութեան վերաբերեալ գիրքեր, հայերէն, ֆրանսերէն, գերմաներէն, եւ այլն) եւ պարբերական հրատարակութիւններ : 1885—88 եռամեայ շրջանին մէջ Բարերարը ուղարկեց ձեռագիրներ, նոյնպէս Սանասարեան առաջին սաներէն Պ. Պ. Փիլիպպոս Վարդանեան եւ Ս. Մանգինեան ուղարկեցին իրենց քով գանուած 487 կտոր գիրք :

Գրադարանը ունի ըստ ցուցակի զանազան լեզուէ 4806 հատոր գիրք 74269¹/₄ զրուշ արժէքով : Բեթերսպուրկի մէջ ալ պահուած են 4348 հատոր գիրքեր հայերէն, ֆրանսերէն, գերմաներէն եւ ռուսերէն, տպագիր եւ ձեռագիր, որոնք Մկրտիչ Սանասարեանցի անձնական մատենադարանը կը կազմէին, եւ վարժարանին կտակուած են :

Թանգարան. — Թանգարանը ունի այսօր ընտան Գիտութեանց, աշխարհագրական-պատմական, երկրաչափական եւ այլ ուսմանց վերաբերեալ ճոխ ու ընտիր հաւաքածոներ, ինպէս նաեւ 66 կտոր հայերէն ձեռագիր : Թանգարանապետութեան պաշտօնը քսանամեայ շրջանին մէջ վարած է Պ. Մատթեան :

Քսանամեայ շրջանին մէջ նուիրուած աւարկաներէն զատ,

Բարերարին կողմէ զրկուած եւ կամ վարժարանին ծախքով գնուած են բազմաթիւ առարկաներ, որոնք եկած են ճոխայնել Թանգարանին հաւաքածոները :

1882 էն 1885. — Այս եռամեայ շրջանին՝ Թանգարանին կազմակերպութեան համար հետզհետէ պատրաստուեցան պահարաններ, գնուեցան թուչուններ եւ ուրիշ կենդանիներ, շիշեր, եւ այլն : 1883—84 ին Հիմնադրէն զրկուեցան ընտանաւորական հաւաքածոներ, դաճէ մարդկային գանկեր, կենդանիներու կմախքներ : Գնուած կենդանիները եւ թուչունները զմուտեղով զետեղուեցան պահարաններու մէջ : Պատրաստուեցաւ նաեւ կենդանաբանական պարտէզ մը ուր ջրային թուչուններու համար շինուեցաւ անակ մը : Բարերարը Բեթերսպուրկէն 1884—85 ին ուղարկեց նաեւ մէկ սընտուկ շինական ձեռագործներ, խեցեմարմներ, եւ այլն :

1885 էն 1888. — Այս երեք տարիներուն մէջ Թանգարանին ուղարկուեցան վարժարանին Հիմնադրին կողմէ 18 հատ իւզաներկ նկարներ, հին գրամներ, ճարտնական ձեռագործներ, երկրագունտեր, եւ այլն :

Նոյնպէս վարժարանին ընտանաւորական հաւաքածոներուն վրայ աւելցան նաեւ տեղական զանազան թուչուններ եւ կենդանիներ որոնք վարժարանին գործատան մէջ զմուտեղով զետեղուեցան ընտանաւորական ուրիշ հաւաքածոներու շարքին մէջ :

1888 էն 1891. — Գիտութեանց եւ հնութեանց Թանգարանին վրայ՝ գնմամբ աւելցան խաւարարտէ շինուած եւ մարդակազմութեան վերաբերեալ կաղտպարներ, հին ձեռագործներ, գրամներ, եւ այլն :

1891 էն 1894. — Այս երեք տարիներուն մէջ Թանգարանին ընտանաւորական եւ տարրարանութեան հաւաքածոներուն վրայ աւելցան բազմաթիւ մեքենաներ, գործիքներ, որոնց մէջ կը գտնուէր նաեւ մոզական լսարան մը՝ պատկերներու հաւաքածոյով :

1894 էն 1897. — Այս շրջանին մէջ գնմամբ ու եւ է յաւելում տեղի չունեցաւ Թանգարանին հաւաքածոներուն վրայ :

1897 էն 1901. — Այս չորս տարիներուն մէջ, գնուեցան լուսանկարչական գործիք, զանազան լուսանկարչական նիւթեր, եւ սպերու շարք մը սպակիներ, մէկ խոշորացոյց, եւ այլն : Նոյնպէս

աւերջան բաղնաթիւ տարրարանական գործիքներ եւ նիւթեր եւ քանի մը նոր քարտէսներ եւ պատկերներ :

Պարսէզ. — 1884—85 ի տարեշրջանին մէջ Պ. Նշան Մատաթեան վարժարանին Հիմնադրէն ստացած ծառի եւ ծաղիկ հունտերը կը սերմանէ վարժարանին պարտէզին մէջ. Կարնոյ Հայոց գեղականատունէն եւ Զիլինի մծաակայ անտառէն բարտիի եւ մայրիկ տունիկեր բերելով հետզհետէ կը անկէ զանոնք, եւ ածուներ, բանջարանոցներ ու բուրաստան կը կազմակերպէ :

1885—88ին պարտիզպանական ուսման գործնականօրէն նպաստելու համար վարժարանը ունէր բաց ի պարտէզներէ եւ բանջարանոցներէ, ջերանոց մըն ալ, որոնց մէջ աշակերտները, աւաջնորդութեամբ Պ. Ն. Մատաթեանի, կը անկէին եւ կը մշակէին ծաղիկներ, թուփեր, բանջարեղէններ եւ ծառեր : Զերանոցին մէջ յառաջ բերուած վարունգներու եւ ուրիշ կանանչեղէններու երախայրիքը իբր նուէր զրկուեցան Կուսակալ Մուսթաֆա Փոսֆոր բաշայի, զինուորական հրամանատար Մուսա բաշայի եւ ուրիշ պաշտօնեաներու :

1888էն 1891 պարտիզպանական գործնական վարժութեանց կ'առաջնորդէր միշտ Պ. Նշան Մատաթեան. աշակերտները իրենց պարապոյ ժամերուն յաճախ կը զբաղէին ծաղիկեմշակութեամբ եւ պարտիզպանական ուրիշ աշխատութիւններով :

ՅՈՒՑԱԿՆԵՐ

Հոս կը գնենք Թանգարանի ձեռագիրներուն ցուցակը (Յուցակ ժ.Բ.) եւ գոյքերուն մէկ ամիսի ցանկը (Յուցակ ժ.Գ.) :

ՋԻ

ՋԻ

ԺԲ. ՅՈՒՑԱԿ

Թանգարանը ունի մեծ եւ փոքր պանարաններ ապակեայ փեղկերով, որոնք կը պարունակեն զանազան առարկաներ հետեւեալ կերպով .

Ս. պահարան՝ կմախք, խաւարատեայ մարդ գործարաններով, զմասեալ իրական զլուխ, Սեւ, սիրտ, ոտք, արհեստական ականջ, աչք, մորթային հատուած, սիրտ, ուղեղ, բնական եւ զանազան զանկեր, եւ այլն, համազուամար 39 կտոր :

Բ. Գ. Գ. Ե. Զ. Է. պահարան՝ 235 կտոր զմասեալ փոքր եւ մեծ զիշակեր զանազան ծոցոններ :

Ը. պահարան՝ 204 շիշ ալքոլի մէջ այլ եւ այլ կենդանիներ եւ 14 շիշ մանր խեցիներ, եւ այլն :

Թ. պահարան՝ շինական առարկաներ եւ հնուածիւններ, քարէ պտուղներ եւ այլն :

Ժ. պահարան՝ Հնդկաստանի արտադրութիւններ, մամուռի քարացած ոսկորներ, այլ եւ այլ քարեր, հանքերու տեսակներ եւ այլն, բնդ ամէնը 209 կտոր :

ԺԱ. պահարան՝ բուստեր, կաւճային խեցեմորմներու ձեւեր, փափկամարմիններու ապակեայ ձեւեր եւ այլն, 211 հատ :

ԺԲ. պահարան՝ երկրագունտ, երկրաչափական ձեւեր, արեւի եւ լուսնոյ շարժացոյց եւ այլն, բնդ ամէնը 88 կտոր :

ԺԳ. պահարան՝ փղոսկրեայ զանազան արժէքաւոր առարկաներ եւ 412 հատ ոսկի, արծաթ եւ պղինձ հին դրամներ (*):

Պանարաններէ դուրս կան նաեւ ուրիշ առարկաներ : Կան նաեւ նկարներ՝

- 1 հատ Օսմանեան ԹՈՒՂՐԱՅԻ ՀԻՒՄԱՅՈՒՆ .
- 1 » Եսմեր մեծ դիրքով (Լաւի) .
- 1 » Հոլանտացի այր ու կին (Ռիւպեկս) .
- 1 » Կ. Պոլսոյ Սուլթան-Ահմէտ հրապարակը (Այլազովսի) .
- 1 » Կալիւլէ .
- 1 » Պօղոս-Պետրոս մանրանկար .
- 1 » Արեւելուհի .
- 1 » Պտուղներ (Կարաճլի) .
- 1 » Ամերիկայի զիւտը՝ իւզատիպ (Այլազովսի) .
- 1 » Կալիլէի դատաստանը .
- 1 » Տեսարան Թրիմէն (Յուլոֆ) .
- 1 » Ծովանկար (Այլազովսի) .
- 1 » Ծովանկար (Առլովսի) .
- 1 » Տիխիսի կեանքէն (Ներսիսեան) .
- 1 » Գոլոմպոս փոթորիկի բռնուած (Այլազովսի) .
- 1 » Կղէնպատրա (Ռուրեա) .
- 1 » Դղեակ (Վեթեռնազիւն) .
- 1 » Ձէրքէզ՝ իր ձիով .
- 1 » Աքրահամ եւ Սոռա (Քուսեկ) .
- 1 » Վարժարանի Հիմնադիր-բարերարին .
- 1 » Վարժարանի Հիմնադիր-բարերարին սեւ մատիտով նկար .
- 1 » Ս. Մեարոպի մեծադիր լուսանկար .
- 1 » Մակար Կաթողիկոսի լուսանկար .
- 1 » Ներսէս Ե. Աշտարակեցի՝ վիմատիպ .
- 1 » Զկնորս .

Թանգարանը կը պարունակէ նաեւ բնախոսկան գործիքներ :

(*) Ասոնցմէ դուրս կան նաեւ Պոլիս 56 կտոր հին դրամներ ոսկի, արծաթ եւ պղինձ, ինչպէս նաեւ քարէ կիսադէմք մը Շամիրամայ :

| ԿԱՐԳ | ՁԵՌԱԳՐԻ ԱՆՈՒՆ | ՔՈՒԱԿԱՆ | ՔԵՐՔ | Ն Ի Ի Ք |
|------|------------------------------|--------------|------|--------------------|
| 1. | Ա.Լ.Կոտարան | ՆԼԵ=986 | 220 | հաստ գորշ մագաղաթ |
| 2. | Շարակնոց | ԶԼԲ=1323 | 271 | նուրբ գորշ մագաղաթ |
| | Տօնացոյց և Ա.Կոտարանացոյց | 1323 | 63 | նուրբ սպիտակ » |
| 3. | Սաղմոս | ՌԽԵ=1596 | 186 | բամբակեայ թուղթ |
| 4. | Շարական | ՌՃԺԵ=1666 | 366 | սպիտակ մագաղաթ |
| 5. | Շարական | ? | 291 | թուղթ |
| 6. | Յայամառուրք | ՌՀԶ=1627 | 474 | հաստ թուղթ |
| 7. | Մաշտոց | ՌՃԵ=1656 | 285 | թուղթ |
| 8. | Ա.Կոտարան | ? | 232 | հաստ գորշ մագաղաթ |
| 9. | Ժամագիրք | ՊԽԲ=1373 | 230 | հաստ թուղթ |
| 10. | Շարական | ՌՃԼ=1658 | 271 | թուղթ |
| 11. | Ա.Կոտարան | ՊԼԹ=1390 | 220 | » |
| 12. | Շարական | ԶՀԱ=1322 | 329 | » |
| 13. | Մաշտոց | ՌՃԻԲ=1673 | 318 | » |
| | Ժամագիրք | ՌՃԻԱ=1672 | 138 | » |
| 14. | Սաղմոս | ՌՃԻԱ=1672 | 92 | » |
| | Տօնացոյց | ? | 23 | » |
| 15. | Ա.Կոտարան | ՌԽԵ=1596 | 379 | » |
| | Տօնացոյց, ձաշոց | ? | 232 | » |
| 16. | Շարական, Լ.Կայլն | ? | 9 | » |
| | Մաշտոց | ? | 86 | սպիտակ թուղթ |
| 17. | Մաշտոց | ? | 163 | » |
| 18. | Մաշտոց | ՌԻԱ=1572 | 156 | » |
| | Ոսկեփորիկ | ՊԾ=1407 | 146 | թուղթ |
| | Դաւիթ անյաղթ | ? | 24 | » |
| 19. | Վերլուծութիւն Պարփիւրի | ? | 3 | » |
| | Ստորագրութիւն Արիստոտելի | ? | 48 | » |
| | Լուծմունք Պերիարմենիոսի | ՊԼԲ=1383 | 52 | » |
| 20. | Մաշտոց | ? | 71 | բամբակեայ թուղթ |
| 21. | Խորհրդատետր | ՌՃԼԸ=1689 | 25 | թուղթ |
| 22. | Հին Կտկրն. Ծն. Լ. Թուոց ժ.Ա. | ? | 183 | » |
| 23. | Սաղմոս | ? | 202 | » |
| 24. | Քարոզգիրք ձմեռան | ՌՃԶԹ=1740 | 416 | » |
| 25. | Վարք հարանց | Ն. ՌՀԳ=1624 | 176 | » |
| 26. | Եսայի | ՊԼ=1381 | 134 | » |
| | Թուղթք Պօղոսի | ? | 201 | նուրբ մագաղաթ |
| 27. | Սաղմոս | ԶԽԿ=1495 | 238 | չատ հաստ մագաղաթ |
| 28. | Գանձարան | ԶՃԼԳ=1584 | 241 | թուղթ |
| 29. | Գիրք սահմանաց | ? | 103 | » |
| 30. | Ողբ Շնորհաւուց | (1832) | 80 | » |
| 31. | Մեկնութիւն Երզոց երգոյն | 1838 Յոս. 10 | 56 | հասարակ թուղթ |
| 32. | Յովհան Կաթուղիկոս | 1830 | 76 | » |

| Գ Ի Ր | Գ Ր Ի Զ | ՏՆԴԻՆ՝ ՈՅՐ ԳՐՈՒԱԾ Է | Ն Ո Ւ Ի Ր Ա Տ Ո Ւ |
|-----------------|----------------------|---------------------|--------------------|
| միջին երկաթագիր | Աղեակ քահանայ | ? | — |
| տպագիր | Յովսէփ » | ? | Մ. Խ. Պալարեան |
| » | ? | Սլա | — |
| մանր տպագիր | Թոխատցի Պետր. արեղայ | Երզնկա | — |
| տպագիր | ? | Շոռօթ գիւղ (Երնջակ) | Յ.Տ. Յարութիւնեան. |
| » | Վարդան սարկաւազ | ? | — |
| խոշոր տպագիր | ? | ? | — |
| » | Յովսէփ երէց | Սերաստիա (Կովտուն) | Յ. Մ. Պօլոսեան |
| միջին երկաթագիր | ? | ? | — |
| » տպագիր | Գէորդ կրօնաւոր | Մուշ | Ա.Ս. քել Եփրեսեան |
| տպագիր | ? | ? | — |
| խոշոր տպագիր | ? | ? | Լ. Եղ. Մուրառեան |
| միջին » | Յովհաննէս | Մաշկեւոր անապատ | } |
| խոշոր » | Արիստակէս սարկաւազ | Նորուց գիւղ | |
| » | Մարգիւս երէց | ? | |
| » | » | ? | |
| մանր » | Հիզանցի Մարտիրոս | Կ. Պոլիս | } |
| միջին » | ? | ? | |
| » | Յովհաննէս | ? | |
| » | Մարկոս | ? | |
| նոտրագիր | ? | ? | } |
| խոշոր տպագիր | Մելքիսէթ | ? | |
| | Ղրիմցի Մարգիւս | ? | |
| | ? | ? | |
| մանր նոտրագիր | ? | ? | } |
| | ? | ? | |
| | ? | ? | |
| | ? | ? | |
| տպագիր | ? | ? | } |
| խոշոր տպագիր | Գրիգոր երէց | ? | |
| փոքր երկաթագիր | ? | ? | |
| խոշոր տպագիր | Աստուածատուր քհնյ. | ? | |
| մանր նոտրագիր | ? | ? | } |
| | ? | ? | |
| | ? | ? | |
| | ? | ? | |
| միջին տպագիր | Տաւնեք | ? | } |
| | ? | ? | |
| խոշոր տպագիր | Ա.Լ.Կոտարան արեղայ | Ի Վանս Պալատորոյ | |
| » | Մկրտիչ երէց | Մողնի գիւղ | |
| փոքր նոտրագիր | ? | ? | } |
| | ? | ? | |
| նոտրագիր | Ղազր. վարժ. Վահանեան | Կարին | } |
| | » | » | |

| ԿԱՐԳ | ՁԵՌԱԳՐԻ ԱՆՈՒՆ | ԹՈՒՆԿԱՆ | ԹԵՐԹ | Ն Ի Ի Թ |
|------|--|---------------------|-----------|-------------------------------------|
| 33. | Բառգիրք Հարցմունք Միքայելի Եպո. Ստորագրութիւն Արիստոտելի | ? | 269 | հասարակ թուղթ |
| 34. | Դաւթի գիրք էակայ Մեկնութիւն Մատթէի Կիւրղի Աղեքս. թուղթք Մեկնութիւն Հաւատամքի Թէոդոսի Եպո. ի խօսք | ? | 266 | հասարակ թուղթ |
| 35. | Բառարան | ? | 226 | » » |
| 36. | Տաղաչափեալ Նարեկ | ? | 116 | կապոյտ թանձր թղթ. |
| 37. | Լուծմունք Պրովզի | ՌՃ = 1651 | 218 | թուղթ |
| 38. | Ոսկեփորիկ | ՌԾԵ = 1698 | 207 | » |
| 39. | Տօնացոյց, Գանձք, Լեւոյն | ? | 105 | » |
| 40. | Տօնացոյց, քարոզ Լեւոյն | ? | 136 | » |
| 41. | Ներսէս Լամբրոսացի | 1822 | 217 | հասարակ թուղթ |
| 42. | Տօնացոյց | ? | 156 | » » |
| 43. | Տէր Եղիայի պատմութիւն | ՌՄԶԳ = 1845 | 11 | » » |
| 44. | Շարական | ՌՂԳ = 1644 | 323 | մազաղաթ |
| 45. | Ժամագիրք և Խորհրդատար | ? | 99 + 24 | մգթ. (99 թ) ամ. (24 թ.) |
| 46. | Տօնացոյց և տոմարն աղլուսակ | ՌՃԳ = 1654 | 221 | ողորկ ճերմակ թուղթ |
| 47. | Խորհրդատարի մեկնիչ | ՊԹ = 1361 | 112 | ողորկ թուղթ |
| 48. | Թութունի գիրք | ? | 147 | կակուղ » |
| 49. | Ներքող Տիրուհւոյն | Փեար. 1846 | 100 | ճերմակ » |
| 50. | Գարոզ գիրք | Փեար. 1846 | 217 | ողորկ » |
| 51. | Մաշտոց | ՌՃԾԷ = 1718 | 209 | » » |
| 52. | Ծագկաքաղ քարոզի | | 165 | ճերմակ » |
| 53. | Յայտմաւորք | | 207 | ողորկ » |
| 54. | Մաշտոց | ? | 235 | » » |
| 55. | Կանոնագիրք | ? | 133 | » » |
| 56. | Բառգիրք | | 352 | » փայլուն թուղթ |
| 57. | Տաղգիրք | | 60 | հասարակ թուղթ |
| 58. | Ողբ | 1841 | 57 | » ճերմակ թուղթ |
| 59. | Ժամագիրք և Խորհրդատար | ՌՀԳ = 1073 | 169 | » փայլուն » |
| 60. | Սաղմոս | ? | 141 | » թուղթ |
| 61. | Ուստոււլապի արհեստ | ? | 109 | հաստ փայլուն թուղթ |
| 62. | Միքայել Ատորի. Սամ. Անեցի Սանփան Եպիսկոպոս | 1286? | 170 + 45 | ճերմակ թղթ. բամբակեյ. |
| 63. | Վեց հաղարեակ | ? | 15 | հաստ հակ. ճերմակ թղ. |
| 64. | Մէճմուսյի բունանիյէ աղանի | 1810 | | ճերմակ թուղթ |
| 65. | Ս. Այփոնատի Երզր. ըզձականք | 1854 | 49 | » » |
| 66. | Վարդապետութիւն ճշմարտութե. Կերակուր քահանայից | 1722 ՌԲՃԺ = 1761 | 104 60 | բմկ. ողորկ. և փյն. թղ. » » » » » |

| Գ Ի Բ | Գ Ր Ի Զ | ՏԵՂԻՆՆ՝ ՈՒՐ ԳՐՈՒԱՍ Է | Ն Ո Ւ Ի Ր Ա Տ Ո Ւ |
|-----------------------|-------------------------------------|----------------------|-------------------------|
| միջին տպագիր | Ետայի արեղայ | ? | — |
| միջին տպագիր | ? | ? | — |
| նոտրագիր | ? | ? | Տիգրան Գէորգեան |
| » | Ղաղարոս Վահանեան | ? | Ն. քհ. Վ. Տնեւ. և հայրը |
| » | Սիմէօն Գառնայ Եպո. | ? | — |
| հաստ նոտրագիր | Սարգիս Կեոարացի | Հռայտոս քաղաք | Ն. քհ. Վ. Տնեւ. և հայրը |
| տպագիր | ? | ? | Վ. Ս. Չիլինկիրեան |
| նոտրագիր | Գրիգոր | ? | — |
| » | Տիրացու Նաղարէթ | Կ. Պոլիս Բերա | Գ. Աբուլեան |
| տպագիր | ? | ? | — |
| նոտրագիր | Տ. Յարութիւն քնյ. | Մատէն | — |
| տպագիր | ? | Պոլիս | Ս. Տ. Աղարեան |
| բոլորագիր նոտրագր. | Ա. Մարկոս | ? | Վ. Գուլումճեան |
| նոտրագիր | 2. 3. 4րդ Մարկոս արքյ. | Կաֆայ Ս. Նշան | — |
| բոլորագիր պատգիր | Չաքարէ կրօնաւոր | Անապատիկ գիւղ | — |
| նոտրագիր | ? | ? | — |
| չեղագիր | Սաղմեցի Յովսէփ | Սաղմիկ | — |
| նոտրագիր | Գ. Բ. Ո. Ա. Կ. | ? | — |
| բոլորագիր | Գրիգոր քահանայ | Բաղէշ | — |
| նոտրագիր | Աշկրտ. Յով. Պետ. Պօղս. ի Միքայել | ? | Պօղոս Տ. Պօղոսեան |
| տպագիր խոշոր | | ? | — |
| » մանր | ? | ? | — |
| հաստ նոտրագիր | | ? | — |
| նոտրագիր | | ? | — |
| մանր նոտրագիր | Յովնան Պօղոսեան | Կարին | — |
| խոշոր բոլորագիր | Գրիգոր Երէց | Ի դուռն Ս. Թէոդորոսի | Նաղարէթ Գէորգեան. |
| » | ? | ? | — |
| մանր նոտրագիր | ? | ? | Յովսէփ Սվաճեան |
| բոլորգր. խշր. և մանր. | Սանփաննոս Եպո. | ? | Գրի. Թարգուլեան |
| » » » | ? | ? | Մարգար Օրմանեան |
| նոտրագիր | ? | ? | Տիգրան Սաչիկեան |
| » | Գուղու օղլու Մինաս | Իսթամպոլ | և Գ. Ճիյէրճեան |
| » | Պետրոս քնյ. Պօղոսեան | Կարին | — |
| մանր նոտրագիր | Սվանէս Երէց Եւքա- րացի | Վենետիկ ի Լէօպօլիէ | Վահան Գուլում- ճեան |

Թ Ք.

ՀԱՍՈՅԹՆԵՐ ՈՒ ԾԱԽՔԵՐ

Ա. ՀԱՍՈՅԹՆԵՐ

Ինչպէս կ'երեւայ քսանամեայ հասոյթներու եւ ծախքերու ընդհանուր հաշուեյոյցէն վարժարանին նիւթական մատակարարութեան միջոցները եղած են .

- 1⁰. Արժեթղթոց տակոսները .
- 2⁰. Կալուածական հասոյթներ .
- 3⁰. Աշակերտաց թոշակները .
- 4⁰. Երաժշտարանի հասոյթը .
- 5⁰. Կազմաւան հասոյթը .
- 6⁰. Արհեստանոցի հասոյթը .
- 7⁰. Արտակարգ հասոյթներ :

Հարկ կը համարինք իւրաքանչիւր հասոյթի միջոցի վրայ քանի մը ամիսի տեղեկութիւններ ապ .

1⁰. Արժեթղթոց տակոսներ . — Մկրտիչ Սանասարեան, ցորչափ կենդանի էր, իր վարժարանին ծախքերուն յատկացուցած էր տարեկան 123,600 դրուչի (1,200 ծամ սակի) գումար մը իբր սովորական նպաստ, բայց այդ նպաստը երբեք վարժարանի ծախքերուն չէր բաւեր, ուստի եւ ամէն տարի արտասովոր նպաստներ ալ ընել հարկադրուած էր վարժարանին բացը գոցելու համար : Սանասարեանի մահէն ետքը իր կազկած գրամագլուխի հասոյթէն դարձեալ շարունակուած է տարեկան 123,600 դրուչի գումարը իբր սովորական նպաստ, ինչպէս նաեւ արտասովոր նպաստ մը : Այսպէս քսանամեայ շրջանին մէջ վարժարանի գրամագլուխի եկամուտէն տրուած է վարժարանին իբր 2,472,000 դրուչ սովորական նպաստ, եւ 1,100,666 դրուչի արտասովոր նպաստ :

Սանասարեանի կտակը կը արամադրէ որ վարժարանին կտակեալ գրամագլուխը՝ կալուածներու գնման յատկացեալ մասէն զատ՝ սակաւարեւր արժեթղթերու վերածուի եւ յանուն վարժարանին ի

պահ գրուի Ռուսական կամ Եւրոպական Պետական գրամատանց մէկուն մէջ, իբրեւ վարժարանին անձեռնմխելի գրամագլուխ եւ միայն այդ արժեթղթերուն տակոսները յատկացուին վարժարանին մատակարարութեան, ուսուցչայ պատրաստութեան եւայլն : Վսեմ Կոստակատարները ըստ այս արամադրութեան, գրամագլուխը ապահով եւ արդիւնաբեր արժեթղթերու վերածելով յաջողեցան զաննք ի պահ զնել Ռուսիոյ Պետական գրամատան մէջ վերոյիշեալ պայմաններով որոնք արձանադրուած են յիշեալ գրամատան կողմէ կոստակատարաց յանձնուած ապահովագրին մէջ :

1890էն 1899 այդ անձեռնմխելի գրամագլուխին տակոսներուն մատակարարութիւնը կատարած են Վսեմ Կոստակատարները, իսկ 1899 դպրոցական տարեգլուխէն սկսեալ Վսեմ Կոստակատարաց եւ Ռուսիոյ Պետական գրամատան հետ եղած կարգադրութեան համաձայն, այդ մատակարարութիւնը կը կատարէ Կ. Պոլսոյ Խնամակալութիւնը տակոսներն ու հաշիւները ստանալով յիշեալ գրամատանէն :

Ըստ 1892ի վարժարանին հիմնական Կանոնադրութեան՝ երկուսայոյցով նախատեսուած ծախքերը վճարուելէ յետոյ աւելցած գրամով կը կազմուի պահեստի գումար մը, զոր միայն Խնամակալութիւնը կարող է ծախսել վարժարանի արտակարգ պիտոյից համար : Հետըզհետէ գոյացած այդ պահեստի գրամագլուխն ալ արժեթղթերու վերածուած եւ ի պահ գրուած է Ռուսիոյ Պետական գրամատանը Վսեմ Կոստակատարաց ձեռամբ : Այդ գումարէն է որ կը հայթայթուին վարժարանին արտասովոր նպաստները :

Բարեյիշատակ Տիկին Մարիամ Մ. Կաղաչկեանց՝ մօրաքոյր Վսեմ Կ. Եղեանցի՝ 1893ին վարժարանին կտակած է ինչպէս Տեղեկագրիս Ընդհանուր Տեսութեան մէջ յիշած ենք 10,925 ուսպիլի արժեթղթեր, որոնք ի պահ կը մնան Ռուսիոյ Պետական Պանքան եւ տակաւին յատկացած են վարժարանի մատակարարութեան :

2⁰. Կալուածական հասոյթներ . — Ասոնց մասին խօսուած է վարժարանին կալուածները Գլուխին մէջ :

3⁰. Աւակիբեաց քուակներ . — 1882—83ի յայտագրին համաձայն զիշերթիկ թոշակաւորները պարտէին վճարել 18 սակի ստորին շրջանի համար, 20 սակի միջին շրջանի համար, 22 սակի

բարձրագոյն չըջանի համար, իսկ ցերեկեայ թոշակաւորները 10 ժամ: սակի: 1887—88 ի շրջանին որոշուեցաւ առհասարակ ամէն գիշերօթիկ աշակերտէ առնել տարեկան 20 ժամ: սակի, ինչ որ ցարգ կը մնայ անխօփօխ: Յերեկեայ թոշակաւորները 1894—95է սկսելով կը վճարեն տարեկան 6 ժամ: սակի: Աշակերտները թոշակէ զատ կը վճարեն նաեւ մտից տուրք որ նախ 3 ժամ: սակի ըլլալով, 1887—1888ին բարձրացաւ 5 ժամ: սակի եւ 1889—90ին նորէն իջաւ 3 ժամ: սակի որ ցարգ կը մնայ անխօփօխ: 1899—900 տարեշրջանին բացառաբար ընդունուեցան հաւաքօրէն 14 կիսաթոշակներ տարեկան 12 ուկիով (մտից տուրք միասին), աշակերտներուն վրայ թողլով դասագրքի եւ հանդերձեղէնի ծախքերը: Քսանամեայ շրջանին մէջ Աշակերտսի Գլուխէն դոյալած է 2,950,166 զրուչի գումար մը: Ինչպէս կ'երեւայ ընդհանուր հաշուեցոյցէն, այս հասոյթը շատ փոփոխական եղած է: 1881—82ին թոշակաւոր աշակերտ բնաւ չկար, հետեւեալ տարին արդէն 26,541 զրուչ կը գանձուի թոշակներէ, գումար մը որ վեց տարի յաջորդաբար կը բարձրանայ եւ 1887—88 տարեշրջանին կը հասնի մինչեւ 252,453 զրուչի բարձրագոյն թիւին, որ կը ներկայացնէ 128 թոշակաւոր, ապա պարագայից բերմամբ այդ գումարը հետզհետէ կը նուաղի եւ 1894—95 տարեշրջանին կ'իյնայ 66,126 զրուչի, սակայն յետոյ շնորհիւ պաշտպանեալ թոշակաւորներու դրութեան հետզհետէ կը բարձրանայ նորէն եւ 1900—901 տարեշրջանին կը հասնի 239,063 զրուչի:

4°. Երաճարանի հասոյթ. — Գաշնակի դասերը կը սկսին 1883—84 ի տարեշրջանին տարեկան 2 ժամ: սակի թոշակով: 1884—85ին կը սկսին նաեւ ջութակի դասերը եւ գործիական երաժշտութեան թոշակ կ'որոշուի 3 ժամ: սակի, որ 1887—88ին կը բարձրանայ 5 ժամ: սակի եւ 1889—900ին կ'իջնէ նորէն 3 ժամ: սակի, եւ կը մնայ ցարգ անխօփօխ: 1899—900ին պաշտպանեալ թոշակաւոր 40 աշակերտներ գործիական երաժշտութեան հետեւած են, սակայն հետեւեալ տարին այդ աշակերտները Արհեստանոցին սկսած են հետեւիլ փոխանակ երաժշտութեան: Այս գլուխէն դոյալած քսանամեայ հասոյթն է 178,561 զրուչ, որ միշտ փոփոխական եղած է եւ վերջին տասնամեայ շրջանին նուազած:

5°. Կազմասան հասոյթ. — Կազմասուներ գուրտէն յանձնա-

բարութիւններ ստանալով 1899—900 տարեշրջանին ունեցած է 1,546 զրուչի հասոյթ մը եւ 1893—94 տարեշրջանին 44 զրուչի հասոյթ մը, այսինքն բոլոր քսանամեայ շրջանին մէջ, ընդ ամէնը 1,589 զրուչի հասոյթ:

6°. Արհեստանոց. — Արհեստանոցի աշակերտները կը վճարեն 1887—88էն սկսեալ 5 ժամ: սակի թոշակ, որ 1889—90ին զեղջուեցաւ 3 ժամ: սակի եւ այսպէս կը շարունակէ ցարգ: Արհեստանոցի հասոյթներն են աշակերտաց թոշակները եւ շինուած առարկաներու վաճառման արդիւնքը, որոնք քսանամեայ շրջանին մէջ արտադրած են 166,663 զրուչի գումար մը:

7°. Արտակարգ. — Վարժարանին մտուկը ունի նաեւ զանազան արտակարգ հասոյթներ որոնց համագումարը եղած է 111,183 զրուչ, եւ որոնք կը դոյանան. Ա. Ալիանս Ֆրանսէզէ (Ալիանս Ֆրանսէզի Կ. Պոլսոյ մասնաճիւղը Խնամակալութեան կողմէ եղած գիմուսներու վրայ բարհաճած է տարեկան 22 ժամ: սակոյ նպաստ մը սահմանել Սանասարեան վարժարանի մէջ ֆրանսերէն լեզուին զարգացման համար. այդ գումարը կը վճարուի կանոնաորոպէս 1898—99 տարեշրջանէն սկսեալ). Բ. Վաճառեալ ուտեստէ (այն է ծախուած ալիւրի թեփէ, հացի մանրուքէ եւ փուռին մէջ այլոց համար եփուած հացի հասոյթէ), վաճառուած գեղերէ, հնոտիներէ եւ քարիւղի թիթեղներէ եւայլն, եւայլն. Գ. Հին պահանջներէ 6,362 զրուչի գումար մը որուն 6,259 զրուչը գանձուած է 1892—93 տարեշրջանին մէջ (այս պահանջները յետեւեալ թոշակներէ եւ կամ զովորներու յետեւեալ վարձերէ գանձուած են):

Բ. Ծ Ա. Ե Ք Ե Բ

Վարժարանին ծախքերը տեղի ունեցած են տարուէ տարի նախապէս ծրագրուած երմոացոյցներուն համաձայն: Այդ երմոացոյցները մինչեւ 1890 Հիմնադիր բարերարին, իսկ իր մահէն ետքը Վսեմ: Կոսակախտարին եւ Կ. Պոլսոյ Խնամակալութեան վաւերացման ենթարկուած են, երբեմն տարւոյն համեմատ, սղութեան կամ

ածանութեան, եւ կամ անակնկալ պարագայից պատճառաւ նախա-
տեսեալէն պակաս կամ աւելի ծախսուելով :

Այս ծախսոց մատակարարութիւնը եղած է Սանասարեանի
կենդանութեան ատեն վարժարանին Տեսչութեան եւ սպա Կարնոյ
Տնօրէնական Խորհրդոյ ձեռքով, իսկ 1891—92 տարեշրջանէն սկսեալ,
ըստ Կանոնադրութեան, ձեռամբ վարժարանին Հոգարարձութեան,
որ համարատու է Կ. Պոլսոյ Խնամակալութեան եւ ամէն տարի կը
մատուցանէ իր մատակարարութեան հաշիւները :

Ինչպէս կ'երեւայ ընդհանուր հաշուեցոյցէն, վարժարանին
ծախքերը բաժնուած են 21 գլուխներու հետեւեալ կ'երպով .

- 1⁰. Վարժարան .
- 2⁰. Ննչարան .
- 3⁰. Դասարան-մարզարան .
- 4⁰. Ճաշարան-խոհանոց .
- 5⁰. Կրօնական .
- 6⁰. Պաշտօնական .
- 7⁰. Թոշակը ուսուցչաց .
- 8⁰. Վարձք սպասաւորաց .
- 9⁰. Ուտելիք-ըմպելիք .
- 10⁰. Զգեստք-կօշիկք .
- 11⁰. Մաքրութիւն .
- 12⁰. Հիւանդանոց .
- 13⁰. Վառելիք .
- 14⁰. Լոյս .
- 15⁰. Գրագարան .
- 16⁰. Թանգարան .
- 17⁰. Երաժշտարան .
- 18⁰. Կաշմատուն .
- 19⁰. Արհեստանոց .
- 20⁰. Կաբուածք .
- 21⁰. Արտակարգ :

Հարկ կը համարինք այս գլուխներու խրաքանչիւրին վրայ
ամփոփ եւ հակիրճ ծանօթութիւններ առլ :

1⁰. Վարժարան. — Այս Գլուխին մէջ նշանակուած տարե-
կան 10,300 դրուչի գումարը կը ներկայացնէ շէնքին վարձքը որ վճա-
րուած է 1887—88 տարեշրջանէն սկսեալ : Ասոր կը պատկանին նաեւ
«Պահպանութիւն, Կահաւորում, Օգափոխութիւն եւ Պարտէզ»
ստորաբաժանումները, որոնք կը պարունակեն շէնքին ինչ ինչ նորո-
գութեանց (գածելու, ծեփելու եւայլն), կահկարասեաց գնման ու
նորոգման, աշակերտաց եւ ուսուցչաց օգափոխութեան եւ պարտէ-
զի մշակման եւ բուսաստանի վերաբերեալ ծախքերը :

2⁰. Ննչարան. — Այս Գլուխը եւ իր ստորաբաժանումները
կը պարունակեն իրենց մէջ մահճակալներու, անկողիններու, վեր-
մակներու, սաւաններու, եւայլն, գնման ու նորոգման ծախքերը՝
որոնք գիշերօթիկներու թիւին եւ պէտքերուն համեմատութեամբ
երբեմն աւելի եւ երբեմն նուազ եղած են :

3⁰. Դասարան-մարզարան. — Վարժարանին կը վերաբերին
գիշերօթիկ եւ ցերեկեայ աշակերտաց դրական պիտոյից եւ դասա-
գիրքերու ծախքերը :

4⁰. Ճաշարան-խոհանոց. — Ասոնք են խոհանոցի պղնձե-
ղէններու եւայլն, ինչպէս նաեւ սեղանատան, պնակի, պատառա-
քաղի, դրգալի, սփռոցի, սեղանի, աթոռի եւ սրիչ պէտքերու
գնման ու նորոգման ծախքերը :

5⁰. Կրօնական. — Այս Գլուխին կը վերաբերին Հոգեբոյս
Մկրտիչ Սանասարեանի եւ Տիկին Մարիամ Կաղաչկեանցի համար
կատարուած տարեկան հոգեհանգստեան, լուսագնի, նոյնպէս նաեւ
Տէրունական օրերու մէջ անօրհնէքի եւ ուրիշ այդ կարգի պատա-
հական ծախքերը :

6⁰. Պաշտօնական. — Այս Գլուխին մէջն են գիւանական
պէտքերու, թղթակցութեան, հեռագրի, յայտագրի տպագրու-
թեան եւ լրագրական ազգերու ծախքերը, վարժարանին քարտու-
ղար-հաշուակալին թոշակը եւ հիւրատիրութեան ու պաշտօնական
յարաբերութեանց վերաբերեալ ծախքերը :

7⁰. Թոշակի ուսուցչաց. — Ասոնք են վարժարանին երեք
Տեսուչներու եւ բոլոր ուսուցչաց ամսաթոշակները եւ վարժարանէն

դուրս բնակող երկու Տեսուչներու բնակարանի եւ վառելիքի ծախքերու համար սահմանեալ ամսականները: Այս Գլուխին համար առաջին տարիներու մէջ թէեւ նուազ ծախսուած՝ սակայն վարժարանի պահանջմանց եւ ուսանողներու թիւին համեմատութեամբ ուսուցչաց թիւը հետզհետէ աւելնալով այդ ծախքը բարձրացած է տարեկան մինչեւ 1,400 լիրայի:

8⁰. Վարձք սպասաւորաց. — Որոնց քանակութիւնը թէեւ նախապէս նուազ, սակայն սպասաւորաց թուոյն համեմատ հետզհետէ աւելցած է:

9. Ուսելիք-ըմպելիք. — Այս Գլուխը կը պարունակէ վարժարանին մէջ բնակող Տեսուչի եւ պաշտօնէից, սպասաւորներուն, գիշերօթիկ եւ ցերեկեայ աշակերտներուն անունքի ծախքերը, որոնք տարւոյն համեմատութեամբ պարէնի աժանութեան կամ սղութեան պատճառաւ երբեմն նուազ երբեմն աւելի եղած են ելմտացոյցով սահմանեալ գումարներէն:

10⁰. Զգեստ եւ կօշիկ. — Ասանք են գիշերօթիկ աշակերտաց զգեստեղէնները, ճերմակեղէնները, կօշիկներն ու ֆէսերը աշակերտաց թուոյն համեմատութեամբ:

11⁰. Մաքրութիւն. — Այս Գլուխին մէջ են օճառի արժէքը, լուսայարարներու եւ ջրկիրներու վարձքերը եւ աշակերտաց բաղնիքի սափրիչի եւ այլ մարդութեան ծախքերը:

12⁰. Հիւանդանոց. — Վարժարանը իր մէջ ունի յատուկ հիւանդանոց մը, ուր միշտ պատրաստ կը գտնուին թոշակաւոր դեղագործն ու բժիշկը. ի հարկին դրսէն կը բերուին ուրիշ բժիշկներ եւ ատամնաբոյժ:

13⁰. Վառելիք. — Այս Գլուխը կը պարունակէ վառարաններու գնման եւ նորոգութեան ծախքերը եւ փայտի, ածուխի եւ աթարի արժէքը: Խնամակալութիւնն ու Հոգաբարձութիւնը թէեւ այս Գլուխին մէջ ալ խնայողութիւն ընել ուղած են, սակայն Կարնոյ մէջ վառելիքի վերաբերող նիւթերու թանկութեան պատճառաւ չեն յաջողած:

14⁰. Լոյս. — Այս Գլուխը կը վերաբերի քարիւղի, մոմի, լամբարի, լուցիկի եւ այլն ծախքերուն, ինչպէս նաեւ լուսավառութեանց եւ թատերական ներկայացմանց:

15⁰. Գրադարան. — Գրադարանին համար գնուած են մանկավարժական, գիտական եւ ուրիշ գիրքեր ու հանդէսներ աշակերտաց ընթերցման համար:

16⁰. Թանգարան. — Այս Գլուխին կը վերաբերին բնապատմական եւ բնագիտական գործիքներու, հաւաքածոներու, իւզանկարներու, ձեռագիրներու եւ այլեւայլ հնութեանց գնման ծախքերը:

17⁰. Երաժշտական. — Այս Գլուխ կը պարունակէ գործիական երաժշտութեան վերաբերեալ գործիքներու եւ ուրիշ պետոյրներու գնման ծախքերը: Վերջին տարուան մէջ վարժարանական նուագախումբի մը կազմակերպութեան համար Եւրոպայէն բերել տրուած են պէտք եղած ամէն գործիքներ:

18⁰. Կազմասուն. — Ինչպէս յիշած ենք Արհեստանոց Գլուխին մէջ, 1885—86 տարեշրջանին նոր կազմակերպութիւն մը տրուած ըլլալով կազմարարութեան ճիւղին, Վահմ: Բարերարն յղած է ատոր վերաբերեալ գործիքները եւ անկէ յետոյ տարուէ տարի հայթայթուած են այդ գործատան պէտքերը:


19⁰. Արհեստանոց. — Այս Գլուխը կը պարունակէ կահագործութեան եւ կոպղարարութեան երկու արհեստագետաց թոշակները եւ շահաբաժինը, ի հարկին դուրսէն բերուած գործաւորաց վարձքերը եւ ձրիավարժ արհեստաւոր աշակերտաց տրուած շահաբաժինները, ինչպէս նաեւ այդ ճիւղին վերաբերեալ գործիքի, ատոպձի, երկաթի, գամի, ներկի, ածուխի եւ այլ ծախքերը:

20⁰. Կալուածք. — Կալուածական ծախքը կը բաղկանայ կալուածական Պետական սուրբերէն, Ազգերէնի ազարակին եւ քաղաքամիջի ու Կէզ գիւղի արտերուն սերմի, մշակութեան եւ Ազգերէնի ազարակին դատին համար տեղի ունեցած ծախքերէն:

21⁰. Արտակարգ. — Արտակարգ Գլուխին տակ արձանագրուած են ուսուցիչներէ ոմանց եւ ձրիավարժ աշակերտաց ճանապարհածախքերը, Սան Տեսուչներու՝ վարժարանի փոխադրութեան առթիւ ի Սերաստիա, ի Խարբերդ եւ այլուր երթեւեկութեան ծախքերը, ուսուցիչներէ ոմանց եղած դրամական պարգեւները եւ փոխադրութեան ու մարտային ծախքերը: Նոյնպէս այդ Գլուխին մէջ նշանակուած են վարժարանին քով կառուցուած յաւերածական շէնքերու շինութեանց ծախքերը:

ԺՊ.

ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ԿԱԼՈՒԱԾՆԵՐԸ



Վարժարանը ունի իրեն սեպհական անշարժ կալուածներ Կարնոյ եւ Կ. Պոլսոյ մէջ:

Այդ կալուածներն են.

- 1⁰. Կարնոյ քաղաքին մէջ 9 կտոր արտ:
- 2⁰. Կարնոյ Ազվերէն գիւղի մէջ ագարակ մը:
- 3⁰. Կարնոյ Ազվերէն գիւղի մէջ տուն մը պարտէզով եւ պաւստիոնով:
- 4⁰. Կարնոյ Կէզ գիւղի մէջ երկու արտ:
- 5⁰. Կ. Պոլիս Սիրքէճի Տէմիր-Գափու փողոցը խան մը:

Այս կալուածներուն առաջինը, Կարնոյ քաղաքին մէջ ինը կըտոր արտ, գնուած է ի կենդանութեան Հոգեւոյն Բարերարին (1883 Մարտ 16 եւ Յունիս 26) 87,138 դրուչի, իբրեւ վարժարանի շինութեան գեաին, սակայն ինչ ինչ պատճառներով, որոնք պարզուած են վերեւ Ընդհանուր Տեսութիւն Գլխին մէջ, անկարելի ըլլալով հոն կառուցանել վարժարանի շէնքը, իբր կալուած կը շահագործուին այդ արտերը տարեկան 1,500 դրուչի չափ վարձք առնուելով անոնցմէ:

Երկրորդը՝ Ազվերէնի ագարակը, որ կը բաղկանայ 60 կտոր արտէ, 7 կտոր մարգագետինէ եւ 1 տունէ, 2 յարդանոցէ, 1 աղբանոցէ եւ 1 գետինէ: Այդ ագարակին նախկին սեպհականատէրն էր Ազվերէն գիւղացի Լազ Յահեա օղլու Հաճի Մէհմէտ, որոյ սնանկութեան հետեւանօք, տեղական կառավարութեան միջոցաւ այդ ագարակը ի վաճառ հանուելով, 1883 Յունիս 20ին վարժարանը գնած է զայն փոխանցման եւ ուրիշ ծախքերով հանդերձ 111,683 ³/₄ դրուչի: Սակայն առաւօտիս պաշտօնական գործողութիւններն աւարտելէ յետոյ Հաճի Մէհմէտ ինչ ինչ առարկութիւններով չուզեր յանձնել ագարակը, որուն վրայ բողոք կը բարձուի կառաւարկութեան եւ երկար դատավարութենէ յետոյ վերադննիչ Ատեանին կողմէ արուած վճուին հետեւանօք 1884 Նոյեմ. 16ին վարժարանը կը տիրանայ այդ ագարակին եւ կը շահագործէ զայն մինչեւ 1892, միջին հաշուով տարեկան 150 լիրա հատոյթ ստանալով անկէ, սակայն 1892ի վերջերը յիշեալ հաճի Մէհմէտի ժառանգորդները բռնի ագարակ մտնելով կը գրաւեն մէջը պատրաստ գտնուած միջերը եւ ագարակը: Այս մասին Հոգաբարձութիւնը տեղական իշխանութեան գիւմելով վարժարանին իրաւունքը եւ եղած վնասուց հատուցումը կը պահանջէ, եւ միւս կողմէ Կ. Պոլսոյ Խնամակալութիւնը Պատրիարքական թագրերով այս ոսնձգութեան դէմ կը բողոքէ. ասոր վրայ խնդրոյն քննութիւնը կը յանձնուի Արդարութեան Գործոց Նախարարութեան Էնճիւմէնին, որ 1900 Նոյեմբեր 21ին կարծիք կուտայ սա հիման վրայ թէ, նկատելով որ Կայսերական Իրաւէ մը հրամայած է ժամանակին՝ այդ կալուածները պարտուց փոխարէն չվաճառել, հարկ է այդ կալուածոց արժէքը՝ եթէ սնանկութեան վնասուցին մէջ կը գտնուի, վարժարանին վճարուի, իսկ եթէ գրամ մնացած չէ, Պետական գանձէն առնուելով գրամը յանձնուի վարժարանին, քանի որ այդ անձինք պահանջ ունին Սոցարապետութեան Գոնէն: Այս որոշումը աննպաստ ըլլալով վարժարանին, Խնամակալութիւնը չընդունիր զայն, եւ իր արդարացի գիտողութիւնները կը ներկայացնէ Արդարութեան Գործոց Նախարարութեան. միւս կողմէ ստուգելով որ ակնարկուած Կայսերական Իրաւէն ոչ թէ Յահեա օղլու հաճի Մէհմէտի անուանն է, այլ Փիրիմ օղլու հաճի Հիւսէյինի, անոր սեպհական կէս տունը պարտուց փոխարէն չվաճառուելու համար՝ Պատրիարքական թագրերով մը գիւմում կ'ընէ Կայսերական Կառավարութեան եւ վարժարանին սեպհականութեան իրաւունքը կը պահանջէ: Այս խնդրոյն կարգադրութեան համար հարկ եղած գիւմումները ի գործ դրուած ըլլալով, տարակոյս չկայ որ վարժարանը ի մօտոյ տիրանայ գարձեալ այդ ագարակին եւ ստանայ անոր հատոյթներն:

Երրորդը՝ Ազվերէն գիւղի մէջ տուն մը պարտէզով ու պաւստիոնով որ գնուած է 1887 Մայիս 10ին 2,670 դրուչի Ազվերէնի ագարակին արտադրած հատոյթներով: Այս տունը նորոգուած եւ տարեկան 2 ոսկեոյ վարձու տրուած է:

վարժարան եւ երկար դատավարութենէ յետոյ վերադննիչ Ատեանին կողմէ արուած վճուին հետեւանօք 1884 Նոյեմ. 16ին վարժարանը կը տիրանայ այդ ագարակին եւ կը շահագործէ զայն մինչեւ 1892, միջին հաշուով տարեկան 150 լիրա հատոյթ ստանալով անկէ, սակայն 1892ի վերջերը յիշեալ հաճի Մէհմէտի ժառանգորդները բռնի ագարակ մտնելով կը գրաւեն մէջը պատրաստ գտնուած միջերը եւ ագարակը: Այս մասին Հոգաբարձութիւնը տեղական իշխանութեան գիւմելով վարժարանին իրաւունքը եւ եղած վնասուց հատուցումը կը պահանջէ, եւ միւս կողմէ Կ. Պոլսոյ Խնամակալութիւնը Պատրիարքական թագրերով այս ոսնձգութեան դէմ կը բողոքէ. ասոր վրայ խնդրոյն քննութիւնը կը յանձնուի Արդարութեան Գործոց Նախարարութեան Էնճիւմէնին, որ 1900 Նոյեմբեր 21ին կարծիք կուտայ սա հիման վրայ թէ, նկատելով որ Կայսերական Իրաւէ մը հրամայած է ժամանակին՝ այդ կալուածները պարտուց փոխարէն չվաճառել, հարկ է այդ կալուածոց արժէքը՝ եթէ սնանկութեան վնասուցին մէջ կը գտնուի, վարժարանին վճարուի, իսկ եթէ գրամ մնացած չէ, Պետական գանձէն առնուելով գրամը յանձնուի վարժարանին, քանի որ այդ անձինք պահանջ ունին Սոցարապետութեան Գոնէն: Այս որոշումը աննպաստ ըլլալով վարժարանին, Խնամակալութիւնը չընդունիր զայն, եւ իր արդարացի գիտողութիւնները կը ներկայացնէ Արդարութեան Գործոց Նախարարութեան. միւս կողմէ ստուգելով որ ակնարկուած Կայսերական Իրաւէն ոչ թէ Յահեա օղլու հաճի Մէհմէտի անուանն է, այլ Փիրիմ օղլու հաճի Հիւսէյինի, անոր սեպհական կէս տունը պարտուց փոխարէն չվաճառուելու համար՝ Պատրիարքական թագրերով մը գիւմում կ'ընէ Կայսերական Կառավարութեան եւ վարժարանին սեպհականութեան իրաւունքը կը պահանջէ: Այս խնդրոյն կարգադրութեան համար հարկ եղած գիւմումները ի գործ դրուած ըլլալով, տարակոյս չկայ որ վարժարանը ի մօտոյ տիրանայ գարձեալ այդ ագարակին եւ ստանայ անոր հատոյթներն:

Երրորդը՝ Ազվերէն գիւղի մէջ տուն մը պարտէզով ու պաւստիոնով որ գնուած է 1887 Մայիս 10ին 2,670 դրուչի Ազվերէնի ագարակին արտադրած հատոյթներով: Այս տունը նորոգուած եւ տարեկան 2 ոսկեոյ վարձու տրուած է:

Չորրորդ՝ Կէզ գիւղի մէջ երկու արտ, որ նոյնպէս Աղվերէնի ագարակին հասոյթներովը գնուած է 1887 թուականին 3,090 դրուչի: Այս արտերն վարուցանի համար երկու տարին մէկ անգամ վարձու կը արուին եւ 1¹/₂ Օսմ: ոսկի վարձք կը բերեն:

Հինգերորդ՝ Պոլիս Ալրէքսէի էմիրէր թաղ Տէմիր-Գափու փողոց թիւ 5 խանը:

Հոգեւոյ Բարերարը իր կտակով կամք յայտնած ըլլալով, որ իր կտակած գումարին կէսը յատկանայ յանուն վարժարանի կալուածներու գնման, Խնամակալութիւնը իր կազմութեան օրէն սկսեալ Կտակակատար Վսեմ Պ. Կարապետ Եղեանցի հետ խորհրդակցութեան առարկայ ըրած էր այդ խնդիրը: Գնելի կալուածը հարկ էր ուղղակի վարժարանի անուան փոխանցել եւ անոր անբռնաբարելի սեպհականութիւնը ընել, ուստի որոշուեցաւ գնել զուտ Ախլի կալուած մը եւ վազճ ընել վարժարանին անուան: Խնամակալութիւնը, յետ երկար հետազոտութեանց եւ մանրախոյզ քննութեան, յաջողեցաւ գտնել Ախլի կալուած մը, որ հաստատուն շինուածանիւթով, առեւարական կեդրոնի մը մէջ կառուցուած ըլլալով առաջնութիւն ունէր ներկայացուած կալուածոց մէջ եւ սպազայ կը խոստանար: Ուստի առ այս Վսեմ Կտակակատարաց հաւանութիւնը եւ կարծիքը ստանալով 1899 Յուլիս 21ին գնեց այդ խանը Չէրքէզ Իսմայիլ փաշա զատէ Վսեմ Իհսան պէյէ, վճարելով անոր խանին փոխարժէքը 19,000 լիրա Օսմ: զոր ըստ կարգադրութեան Վսեմ Կտակակատարաց ստացած էր ի ձեռն Վսեմ Պ. Կ. Եղեանցի, Պետական Պանրային մէջ գանուած վարժարանին անձեռնմխելի գումարէն:

Խանին ամբողջ տարածութիւնն է 2606 կանգուն 8 մաս, որուն 440 կանգունը միայն «Գուլէի զեմին» վազֆին կը վերաբերի, իսկ 2166 կանգուն 8 մաս զուտ Ախլի ըլլալով Շէրիի եւ Քաղաքապետութեան պաշտօնէից միջոցաւ անոնց անջատման գործողութիւնը կատարուելէ յետոյ՝ երկրին Շէրիի օրէնքով Ախլի մասը իճարէի վահիսէշու վազճի վերածուեցաւ յանուն Սանտարեան վարժարանի եւ դարձաւ վարժարանին մնայուն սեպհականութիւն: Իսկ մնացեալ 440 կանգուն «Գուլէի զեմին» մասն իսթիպտալի դրութեամբ միւլքի վերածուելով վարժարանին անուան վազֆ պիտի ըլլայ:


Այդ խանը, որ հիմայ «Սանտար խան» անունը կը կրէ, ունի 32 կալուածներ, որոնք կը բաղկանան մթերանոցներէ եւ սենեակներէ, որոնց ամենն ալ վարձուած են եւ հասոյթ կ'արտագրեն այժմ տարեկան 1444 լիրա Օսմանեան, որն որ յաւելնալու հակամէտ է:

Վարժարանին սեպհական վերոյիշեալ բոլոր կալուածոց կալուածադիրներն ազահով վիճակի մէջ ի պահ կը մնան թուագրեալ ու արձանագրեալ իրենց յատուկ թղթածրարով:



ԺԳ.

ՎԱՐԺԱՊԵՏՅՈՒՆԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ



Մկրտիչ Սանասարեանց, այն համարումը ունէր թէ Ազգային դատարանական բարձրացման համար անհրաժեշտ է ունենալ յատկապէս պատրաստուած ուսուցիչներ. ուստի իր կենդանութեան ատեն առ այս հարկ եղած հոգածութիւնը տանելէ յետոյ, յետ մահուան իր կտակով պատրաստել տուած է այս նպատակին յատուկ առանձին դրամագլխի մը, որ կը դոյանայ վարժարանին անձեռնմըխելի դրամագլխին հասութից 10 օոով: Այս դրամագլխը, որ տոկոսաբեր արժեթուղթերու վերածուած եւ ի պահ դրուած է Ռուսական Պետական դրամատունը, Վսեմ: Կտակակատարաց անխանջ ջանքերուն շնորհիւ արդիւնաւորուած ըլլալով, արդէն չորս սաներ՝ Պ. Պ. Ա. Վահանեան, Յ. Մելքոնեան, Գ. ձիյէրճեան, Ս. Աղապալեան կատարելագործած են իրենց մասնագիտութիւնն, առաջին երկուքը Տիֆլիսի եւ Բեթերսպուրկի Արհեստագիտական վարժարանաց մէջ, իսկ վերջին երկուքը Աւստրիոյ Ռայխընբերգ քաղաքի Արհեստագիտական բարձրագոյն վարժարանին մէջ բնագիտական բաժնի ընթացքն ու մեքենագիտութիւնն, եւ հիմայ չորսն ալ Կարին վերագարձած կը պաշտօնավարեն վարժարանին մէջ: Նոյնպէս երկու սաներ Պ. Պ. Լեւոն Փասպանեան եւ Հրաչեայ Լուսարոնեան, 1902—903 դպրոցական տարեգլխին պիտի յղուին ի Բարիզ Օթէօյլի Էքօլ Նօւմալը Գաղղիերէն լեզուի մէջ կատարելագործելու եւ ապա վարժարանին մէջ պաշտօնավարելու համար:

Ասոնցմէ զատ նպատտ ստացած է նաեւ Պ. Խաչատրեան, երբ կը գտնուէր յԵւրոպա բարձրագոյն ուսման համար:


Շնորհակալութեամբ կը յիշատակենք հոս նաեւ թէ Վսեմ: Գրիգոր խան Շամտանձեան տարեկան 20 ոսկի սահմանած է Հայ լեզուի մասնագէտ ուսուցիչ մը պատրաստել տալու եւ ապա Սանա-

տարեան վարժարանի մէջ ուսուցչութեան պաշտօն վարելու համար: Այս գումարը 1900—901 տարեշրջանէն սկսեալ հինգ տարի պիտի վճարուի:



ԺԵ.

ՆՈՒԻՐԱՏՈՒՆԵՐ ԵՒ ՆՈՒԷՐՆԵՐ



Շնորհակալութեամբ կը յիշատակուին քանաամեայ շրջանի մէջ վարժարանին եղած հետեւեալ նուիրատութիւններն եւս:

Պ. Առաքել Ծատուրեան նուիրած է 42,000 ռուպլի 1897ին: Ալիանս Փրանսէզի Կ. Պոլսոյ մասնաճիւղը, նուիրած է 60 կտոր փառակալճ գիրքեր եւ 50 կտոր գատաղիւրքեր:

Կարգ մը նուիրատուք, որոց անունները նշանակուած են ԺԳ. ցուցակի մէջ (Եր. 72) զանազան ձեռագիրներ նուիրած են վարժարանին:

Ասոնցմէ զատ Ամեն. Օրմանեան Սրբազան հին բուրխու մը, հին փակաս մը եւ Ասատածաշունչի քանի մը ձեռագիր թերթեր, բարեյիշատակ Յովհաննէս Այլաղովաքի՝ նկար մը, որ կը ներկայացնէ Արեւմտսֆր ծովու վրայ, բարեյիշատակ Յովսէփ Իզմիրեանց՝ երկհատուկեան՝ Թուրքերէն աշխարհացոյց քարտէսներ, Գերմանիոյ Ռայխընբերկ քաղաքի Բազմարուեստանոցի ուսուցիչներէն Պ. Հէստըլ եւ նոյն քաղաքի գրավաճառներէն Պ. Բաուլ Սոլլըրս՝ գիտական գիրքեր, նոյնպէս զանազան կողմերէ նուիրուած են վարժարանին ոսկի, արծաթ եւ պղինձ հին գրամներ, օրաթերթեր, հանդէսներ, գիրքեր եւ ուրիշ նիւթեղէններ, որոնց համար բարեգործ նուիրատուներուն սրտագին շնորհակալութիւն կը յայտնուի յանուն վարժարանին:



ՀԱՇՈՒԵՑՈՅՑԵՐ

Հաս կը գնենք:

1. Վարժարանին 1884—82է 1900—904 քանաամեայ հաս-
տութից ու ծախուց տախտակն:

2. Բաղդատական հաշուեցոյց վարժարանի ներքին հաստ-
ութից և Հիմնադիր Բարերարէ վճարեալ նպաստից:



